




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.- Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ Enjoy your life
- 16.- Վ. ԹԵՔՏԱՆ Մոխիրէ ծառ
- 25.- Լ. ԱՅԱՏԱ Մարդը՝ որ ինքն իր դէմ պատերազմեցաւ
(հայացուց՝ Ս. Կլարկոսեան)
- 40.- ԱԼՄԻՆ Սոնետ մարդում
- 40.- » Սոնետ յաղթանակի
- 41.- Յ. ՕՇԱԿԱՆ Սահակ Պարզեւեան
- 61.- Լ. ՄԿՐՏՁԵԱՆ Հոգեմտաւոր կեանքի ելեւելքները
Հարաւստիայում
- 69.- ԺԱՆ-ԺԱԳ ՊՐՈՇԻԷ Ես, Լուիզիանայի ժամն Քասթիլը
- 71.- Կ. ՇԱՀԻՆՅԱՆ Յ. ՊէրՊէրեանի «Ոսպնեակ»ը
- 77.- * * * Եսբողաւ Աէյֆերթ
- 78.- * * * Մշակութային լուրեր


Բազին



ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՅՒ

ԲԳ. ՅԱՐԻ, ԲԻԻ 11, ՆՈՅՈՒՆՅԱՐ 1984, ԳԵՐՈՒՐ

Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ



ENJOY YOUR LIFE

Իրիկուն է, արձակման ժամ՝ Մանկաթրնի մէջ: Այնպէս, փրփրուն եւ իրարու հանդուցում են թերակղզիին բանակով դժուար ուղղակայաց, հորիզոնական փողոցներն ու պողոտաները՝ ինքնաշարժի ու մարդու անսանձիկ հեղեղով: Երկինքներուն մինչեւ պարար ճանկոտող հասամարմին, հրակայան շենքերը կարծես դժուար սպասած են մինչեւ այս ժամը, օրուան ամբողջ երկայնքին իրենց ընդերքներուն մէջ խորացող ճնիներէն ձերբազատուելու եւ զանոնք այսպէս, յորձանք առ յորձանք, նետելու համար մայրթերուն վրայ: Եւ հիմա, արդէն օրերով արդելափակուած նախիրի մը պէս, որ զոմերուն դուռը կտորելով զուրս կը խուժէ, մարդանման արարածներու յորձանք մըն է կարծես, որ դուրս կու գայ գրասենեակ կոչուող արդիական այս զոմերուն զուաններէն: Մարդկային կերպարանք առած մեքենաներ են կարծես, որոնք կը հոսին, կը թաւալին ամէն սեղանաթեմք, փողոցներու եւ մայթերու երկայնքին, իրարու կը բռնեն՝ կոյր ու անիստ, անտարբեր: Զգիտցողը կը կարծէ, թէ հալածող կայ, խուճապ կայ, վառնդէ մը փախուտ կայ, մինչդեռ այս կոյր հեղեղը կ'անսպարէ սապուէլ հասնիլ ուրիշէն՝ առաջ: Եւ այնպէս՝ ինչպէս անձրեւներէն դոյրացած պղտոր հեղեղանները մայթերու կողերուն բացուած կոյուղիի թերանները կը թափին, հեղեղային այս ամբարը հիմա պիտի կուտակուի ստորերկրեայ այդ կուտակումներն ժանդատ, մզլուած, դարչատեսիլ նկուղներուն մէջ ու հրելով, հոժակելով ուրիշի խնուի կուտակումներ մը նողկանք պատճառող ընդերքներուն մէջ:

9934-850

Արձակուած ենք մեր գործէն՝ Կրէկը, Արմէնը ու ես, եւ յորձանքին հետ կը յառաջանանք Լեզուի գործըն պողոտային վրայէն, աւելի ճիշդ՝ կը քուլինք յորձանուտին հետ:

— Հէ՛յ, — կ'ըսէ Կրէկ՝ թեւէս քաշելով, — Յօ ուէյ քրէյն առնել հիմա՞, գէշ է այս ռաշ աուրին (խճողման ժամ), մտնել սա պառք: Տրիմք մը առնենք ռաշ աուրը փախցնենք:

Արմէնը քիչ մը կը դժկամակի, սակայն ի վերջոյ տեղի կու տայ մեր պնդումներուն եւ երեքով կը մանենք Կրէկին ցոյց տուած գինետունը:

Արմէնը Պէյրութէն է, վերջին քանի մը տարիներուն Նիւ Եորք հաստատուած, բայց մինչեւ այսօր, մինչեւ այս ժամը կարծէք Լիբանանէն մէկ մեթր իսկ չէ հեռացած: Հրապարակ մը որ տեսնէ՝ յանկարծ Պէյրութի Պուրէնը կը յիշէ կամ Պապ Իտրիսը, իսկ բլուրի մը դազաթին անտառակ մը՝ անպարման պիտի Պէյթ Մերին ըլլայ, Պրուժանան կամ Լիբանանի մէկ ծառախիտ անկիւնը: Եւ երբ այդ մասին դիտողութիւն մը ըլլայ իրեն. «Ի՞նչ ընեմ, աղբար, ո՞վ է յանցաւորը, ի՞մ Բառուս խանգարուած է, ուրիշ պատկեր չ'տուներ կոր...»: Կատակասէր, զուարճախօս եւ սրամիտ խօսակից է Արմէնը եւ իր միտքը շատ պերճախօս պատկերներով արտայայտելու գաղտնիքը ունի: Օրինակ, օր մը, երբ կը խօսէինք մեղի պէս իրենց երկրէն դուրս ինկած, Հարազատէ, բարեկամէ անջատուած նոր տեսակի գաղթականներու հոգեվիճակին մասին, պատահեցաւ, որ անցնինք ինքնաշարժներու մեռելանոցի մը առջեւէն, որուն ալտակց հաճի նարտ անունը կու տան. «Հա՛, — ըսաւ Արմէն, — կը տեսնե՞ս սա ինքնաշարժները, հեռուէն շնորհքով ինքնաշարժ կը կարծես, բայց երբ մօտենաս, կը տեսնես, որ մէջի բոլոր դործիքները, մօքրարները հանուած են, մնացած է կեղեւը, դուրսի թիթեղը միայն...: Ես ու դուն ալ՝ ճիշդ այս ինքնաշարժներուն պէս, ինչ կարեւոր գործիք որ կայ մեր մէջ՝ Հողի կ'ըսես, միտք կ'ըսես, ձգած ենք Պէյրութ, շարկած-բերած ենք մեր պատեանները, դուրսի թիթեղը միայն...»: Մակայն այսօր մոռթ, մշուշոտ է Արմէն, բացակայ կարծէք ինքն իրմէ: Բառ մը նոյնիսկ չէ արտասանած առտուան առաջին ժամերէն ի վեր, իսկ կէսօրուան դազարին, մնացած է գրասենեակ, պատառ մը իսկ բան չէ դրած բերանը: Գէշ լուրեր կան Պէյրութէն, դիտեմ, Պուրճ Համուան ալ ամբակոծուած է երէկ. Արմէնին ծնողքը, քոյրերը հոն են: Գիտեմ, բայց լուռ կը մնամ ես ալ, չեմ համարձակիր խօսիլ այդ մասին: Իրաւ ու խորունկ ցաւերը խօսք ու բառ չունին կարծէք, համբուրթիւն կու տան:

Ինք եկած էր Ամերիկա ուսումը ամբողջացնելու, բայց տարին չբոլորած՝ Լիբանանը յանկարծ ինկաւ մահուան ճիրաններուն մէջ: Արիւն, աւեր, կոտորած, այդ երբեմնի «գեղածիճաղ» հողաշերտին վրայ: Մարդ չգիտցաւ, թէ Արեւելքի առաջին դուռներուն հրաշքի մը պէս գետեղուած, Արեւմուտքի ամենանուրբ կենցաղը, Արեւմուտքի Փարիզը, Արեւմուտքի Ձուլիցիքիան, գրհարր մարմնաւորող Լիբանանի մէջ՝ արեւելեան ամենաբերտ մտկորութիւնը յանկարծ ինչպէս պայթեցաւ: Մէկ օրէն միւսը քանդուեցաւ Արմէնի հօր գործը, քանդելով նաև բնասելիքին բարօրութիւնը: Արմէն մտածեց անմիջապէս վերապաճնալ Հարազատներուն մօտ, սակայն անոնք Համաձայն չգտնուեցան:

«Տղաս, Խալիլաւ, — կ'ըսէր Հայրը նամակի մը մէջ, — գիտես ինչքան կը կարօտանանք քեզի, բայց կացութիւնը պիտայաք է այստեղ, պարտապանաբար ինչո՞ւ դաս, մեղի պէս դուն ալ բանտարկուիս առնել՝ վախի-դողի մէջ, բան մը չես կրնար ընել: Մայրդ, ես ու քոյրերդ, բոլորս փառք կու տանք,

որ գլուխդ սեյալէր հղած է զոնէ, հար մը գալիք, կեցիք այնտեղ, կարելի է մեզի ալ գուռ մը կը բացուի, կ'ազատինք այս դժոխքէն»:

Ճար մը զտանք Արմէնին. ընկերային ապահովութեան թիւ մը ձեռք բերինք, աշխատանքի իրաւունք ապահովելով իրեն եւ պրծաւ-զնաց:

Մեր միւս ընկերք՝ Կրէկ, հաստաք թէ ոչ, հայ տղայ մըն է: Մինչեւ վերջերս ամերիկացի մէր միւս պաշտօնեաներուն պէս կը վարուէինք իրեն հետ՝ բարեկամական հետաքրքրութիւն կեղծող քաղաքավարութեան ամենակերթ հասնաններուն մէջ. «Հայ, հաւաւ ար ետ... հաւաւ ար ետ տարիճկ... հաւաւ ուազ ետը ար իմիճեմ...»: Եւ միայն այդքան: Մինչեւ որ օր մը, երբ կէտորին Արմէնին հետ ճաշի կ'ելլէինք, այս Կրէկը ժօտեցաւ մեզի եւ՝ «Ես ալ հայ է, պապամ, — ըսաւ, — առաջ անուն Գրիգոր, կ'ուզեմ քալեմ մեզի հետ...»: Իմացանք այդ օր, որ ամերիկացի կործուած տղան, խարբերողի հօր, բայուցի մօր երբորդ գաւազն էր, ծնած նիւ ձըրդիի մէջ, քանուսթ տարի առաջ եւ մկրտուած հայաստանեայց եկեղեցւոյ աւանդական ծէսով ու ստացած իր մեծ հօր անունը: Աւագանի անունը պահած է մինչեւ վեց տարեկանը, մինչեւ զպրոց երթալը: Գլորոցին մէջ այդ «Գրիգորը» դժուարութիւններ տուած է իրեն, ընկերները ֆրայըր ըսած են, Քէյլըր ըսած են, զեւ ուրիշ ինչեր...: Եւ, մերջապէս, թիւրիմացութեանց, սնտաթո՛ւ դէպքերու կամ շարժմիա կատակներու առաջը անձեւու համար, ուսուցիչները մկրտած են զինք կարճ ու կարուկ, զիւրահունչ Կրէկ մերջական անունով: «Ուէլ, տիւ իզ իք...: Չես կրնար օգնել...: Բայց դուք կրնաք Գրիգոր կանչել իմ անուն...»: Այդ օրէն ի վեր մեզի հետ է միշտ, միլոց, առիթ կը ստեղծէ միտսին ըլլալու եւ մեզի հետ հայերէն խօսելու համար: «Հայերէնի նմանութիւն ունեցող նախամարդու նախաբարձք մը», ըստ մեր Արմէնին: Բայց ի՞նչ անտակ հայ, հայու որքան անողէտքը պիտի ըլլայ մարդ՝ տկանջները զոց պահելու համար մալած, կրճատուած բոլոր Կրէկներուն սա չքմեղանքին, թէ՛ «Առաջ ես զպրոց երթալ, ամերիկէն փառլիմ քոնալ ալ միմ, առաջ ես դպրոց երթալ խօսացի հայերէն շատ լաւ...: Վերջը կորու Գրիգոր անուն, կորու հայերէն...»:

Կրէկին հետ մտերմութիւն հաստատելէ հոք իմացանք, որ ան վերջին հինգ տարիներուն երկու անգամ ամուսնացած եւ տիւորս եղած է. առաջին կինը՝ ազանական ծագումով, իսկ երկրորդը՝ զուտ իրլանտական: Երբ տիւորնք ուրբք, տէքս օլք, այսինքն՝ պարզապէս չբալեց, ըսել կ'ուզէր Կրէկ: Հիմա կ'ապրի առանձին, Մանհաթընի մէջ, կիններու հետ քոյ ֆրէմտ-կըրլ ֆրէմտ խաղալով:

Մեր մտած գինետունը լեղուած էր, բոս երեւոյթին, մեզի նման խրճողման ժամը «փախցնողներու» հոծ ըստմութեամբ: Ամերիկեան թիփիկ պտտ մըն էր, նեղ, կիսամութ սրահով, բարձր, երկար սրտին ամբողջ երկայնքը ըստող սպասարկման սեղանով եւ, սեղանին անկիւնը, առատադին բարձրութեամբ յանախորդներուն դիմաց զետեղուած պատկերասփիւռով, որ Ելլզ-Կարլ անխուսափելի խաղը գոյց կու տար: Կին, աղջիկ ու տղամարդ, առանց տարիքի խտրութեան, խճողուած են սեղանին ամբողջ երկայնքին, գիմացնին մէկական դաւաթ ու կը խօսին, կը խնդան ընդհանրական ազմուկին մէջ: Գէլ-աղէկ յաջողած ենք տեղ մը հարել մեր երեքին համար եւ ապահոված դաւաթները: Եկած ենք այստեղ մէկ-երկու դաւաթ պարպելու եւ, մանաւանդ՝ ջիլ մը ժամանակ շահելու համար: Բայց եկուք տես որ մեր Արմէնը դաւաթներու արշաւի մը սկսած է ժամանակին զէմ, մրցումի ելած մէկու մը պէս եւ ըուս ու յամաք դաւաթ կը պարպէ: Կրէկը եւ ես պահ մը կը նստ...

յինք իրարու, չենք դիտեր ինչպէս Արմէնին վաղքը դանդաղեցնել, կարգի բերել: Այս ընթացքով, յայտնի է, զինք այստեղէն շալկած գուրս պիտի հանենք:

— Իզի, պոյ, իզի, — կը յաջողի վերջապէս միջամտել Կրէկ, մտերմական, շատ հոգածու շեշտով մը...: ձըսք քիչ մը իզի գնա՛...: Քիչ մըն ալ խօսանք...:

— Իզի՞, ի՞նչ իզի, — կը կատար յանկարծ Արմէն, — ծօ ես քեզի հետ ի՞նչ պիտի խօսիմ...: Քու ինչ հոգի է, — եւ ինծի դառնալով, — սըւտր նայէ տեղամ մը, իզի՞ է եղեր...: Հայերէննիս ալ պիտի մոռնանք այս նաւաբիին հետ...:

Աչք-յօնք կ'ընեմ Կրէկին՝ հասկցնելու համար, որ մեր մարդուն կտուրը տաքցած է, գլխուն տէրը չէ, չիլլենք այստեղ խնդիր ստեղծենք: Սակայն, ամերիկացի ըսածդ տաքը-պաղը ըմբռնելու նեղութիւն երբեք չի ստանձներ, ըսելիքը անպայման կ'ըսէ, այն ալ յետին ստորակէտով, նոյնիսկ եթէ իր դուրս տուած խօսքերով աշխարհը պիտի փլի: Եւ, ուրեմն, «նախամարդու նախարարաց» իր հայերէնով Կրէկը սկսաւ ըսել Արմէնին, որ ինք, այս ժամուն, կրնար դիւրաւ իր կըրը Փրէնտին մօտը ըլլալ, բայց հետեւինս է, որովհետեւ այ յայտ ետ, կ'ուզէ մանաւանդ հայերէն խօսիլ, հայերէն սորվիլ, չե՞նք տեսներ, թէ՛ որքան փրօկիլու ըրած է հայերէնի մէջ...:

Յետոյ յանկարծ, թէ՛ «Օհօ», ես գիտէ, այդ ժեզլինը քեզի հարս քայմ կու տայ շատ, ուրիշներու հետ կ'երթայ... Ի՞նչ է սքիֆ եղած ես իրեն... լաւ չէ միայն մէկ հատ կըրը Փրէնտ, պէտք է երկու-երեք հատ... իրենք թող արարի ըլլան...:

Հազիւ կը զուպեմ Արմէնին թեւը, քիչ կը մնայ, որ ձեռքին դաւաթը ուղիղ Կրէկի գլխուն փչրէ: Քանի մը խօսքով կը հանդարտեցնեմ զինք, յետոյ՝ միւսին դառնալով.

— Կրէկ, — կ'ըսեմ, — դուն կը սխալիս, ժեզլինի խնդիր չկայ... դուն թերթ չե՞ս կարդար, ռատիօ չե՞ս լսեր, չե՞ս դիտեր ինչեր կ'ըլլան Լիբանան... դուն չես կրնար հասկնալ, այնտեղ ծանօթ, ազգական, բարեկամ չունիս...:

— Օ՛, ես գիտէ, լաւ գիտէ, — բացազանչեց Կրէկ, խօսքս կտրելով, — շատ գէշ պոմպիլիզ կ'ըլլայ Լըպանոն, ես ամէն օր քիլիփիթըմ կը տեսնէ... ուլի, ինչո՞ւ կը կենան մեր հայեր այնտեղ, թող դան սմէնը, ես իմ սուն կու տայ... ամէն բան կու տայ: — Եւ կարնկից, խանդաղատանքով լեցուն շարժումով մը ձեռքը Արմէնին ուսին դնելով, — տորի, պոյ, — կ'ըսէ, — ես կը հասկնայ զու պաւ, ես շատ կը ցաւի Լըպանոն համար... ես ճըսք ըսէի դուն աղուոր տղայ, ամերիկացի այս աղջիկներ չես ճանչնար, ասոնց մէջ կայ շատ-շատ ոստանայ... նայէ այս տղայ ինչքան լաւ ըրաւ, գտաւ մէկ հատ հայ աղջիկ, ամուսնութիւն ըրաւ, ընտանիք ըրաւ, մօ մը փրապլըմ իրեն համար... գլուխը հանգիստ կը կենայ...:

Կրէկին ակնարկած ազդ տղան ես եմ՝ հայ աղջիկ դաս, ընտանիք կազմած, զուկի տէր եղած, տղայ ըսուածը ես եմ, այն պզտիկ տարբերութեամբ, որ հակառակ այդ բարեքներուն, գլուխս շատ հեռու է... Հանգիստ ըլլալէ:

Երբ դուրս ելանք, ամայութիւն էր արգէն: Հսկայական ասպի-րաքէօր մը կարծէք ծծած ու աւլած-տարած էր քիչ առաջուան հեղեղային ամբոխը, փողոցներուն մէջ ձգելով անկէ մնացած տականքը միայն: Մանր վիշտի մը նման քաղաքին վրայ ինկող մութին հետ, Մանհաթընը ինքզինք

յանձնած էր գինեժողնեբու, ծխամոլնեբու, գիշերային իր ախտաւոր տէրերուն :

Հակառակ անոր, որ սովորականէն շատ աւելի ուշ կը հասնէի տուն, զարմացայ, որ իրիկուան այս ժամուն, կինս, աղջիկս բացակայ էին : «Վերջին պահուն մոռցուած դնումի մը զացին անպայման», մտածեցի նախ եւ յաղաղեցայ ժամ մը օրօրել, զբաղցնել ուղեղս այս մասնումով, հակառակ այն իրողութեան, որ աղջիկս դոնէ դէր չէր ունենար երբեք զնում ըսուած գործին մէջ : Սակայն, յետոյ, կասկած կ'ըսէք, վախ կ'ըսէք, մուժ, պատակտոող ինչքան բան կայ՝ խուժեցին վրաս ուր որդերու պէս եւ սկսան սատանայական խաղեր սարքել զլիսուս մէջ... : Վերկած մը արդեօք... անելի՞ ծանր... սասիկանութեան դիմել, հիւանդանոց մը... իրար մի՛ անցնիր, քիչ ետք ո՛ւր որ է կու գան... ծօ ի՞նչ իրար մի անցնիր, բնական բան է, աղջիկդ, կինդ այս ուշ ժամերուն... այն ալ նիւ Երբքի պէս դժոխքի մը մէջ... ծօ ի՞նչ կեցիք ես, լուրջ քան մը կայ անպայման... մանաւանդ որ վերջերս քիչ մը շափը անցուցած էր աղջիկդ՝ «ես այլեւս դպրոց չեմ երթար», եւսյուն Փողո՞ց վազել, ո՛ւր երթալ... հապա եթէ հետաձայնեցին... Օ՛հ, հետաձայնը, այդ յիմար գործիքը կտարել, փշրել զայն, ճիշդ երբ իրեն պէտք ունիս, կը համբանայ, կը խոզանայ...» :

Հետաձայնը Հնչեց վերջապէս - գիշերուան ժամը տասնըմէկը կ'անցնէր : Քէթին էր, կինս՝ տունք փեկի՛ք, կ'ըսէր, այսինքն՝ իրար մի անցնիր, Թաղային սասիկանատունէն կը խօսէր, Յարդ փողոցի անկիւնը - «Հարցում մի՛ ընէր, չեմ կրնար պատասխանել, շուտ եկուր...» :

— Բայց Քէթի, — կ'ըսեմ, — Քէթի՛, Քէթի՛, — կը պոռամ : Գիծը պոցուած է արդէն :

Ըսեմ շուտով, որ այս անունը՝ Քէթի, Թոյ շփոթի չմասնէ ձեզ, կինս հայ է, սակորնեբուն մինչեւ ծուծը հարազատ հայ ծնողքէ սերած, ճիշդ մեր կրէկին տեսակէն, միայն թէ մինչեւ այսօր չեմ կրցած գիտնալ, թէ ինչպէ՞ս սկզբնական իր Գեղարփի անունը վերածուած է Քէթիի. ո՞ր օրէնքով, ի՞նչ կանոնի համաձայն Գեղարփի մը Քէթիի մէջ մուշուած է : Եւ տակաւին ինչո՞ւ, ինչպէ՞ս լեզուն յանկարծ անգլիերէնով կը սկսի դառնալ :

Ուրեմն՝ սասիկանատուն : Երկարական հոսանքի եմ բռնուած կարծէք, զիտուս մազերէն մինչեւ ոտքերուս ծայրամասերը կը զողողամ : Աղջիկս է ինկորոյ առարկան, տասնընորս տարիքը հազիւ թեւակոխած իմ... իմ աղջընակ՝ կու իրիկունը, որոշեալ ժամուն դպրոցէն տուն չէ եկած, երկար սպասումէ ետք, հետաձայն մը կնոջս, թէ «Սեղա... եան անունով ու ձեր հասցէով դպրոցական պայուսով մը կայ, անցորդ մը զայն գտած է փողոցի մը անկիւնը ու բերած—յանձնած սասիկանատուն. խնդրեմ, եկէք եւ տո՛ւք» : Գինս վազած է դպրոց, հանրային բոլոր խաղաղայրերը, գաղտնիկներեբուն իւրաքանչիւրին տունը եւ, վերջապէս, ճարահատ, դացած է սասիկանատուն : Ոստիկանի մը ընկերակցութեամբ՝ ինքնաշարժով դեզերած են Թաղամաս առ Թաղամաս, հաւանական բոլոր վայրերը, ուր պատանիներ հաւաքուած կ'ըլլան, սակայն չեն կրցած գտնել մեր Սեղան : Վերջին դատաստանի դուռնեբուն հասած՝ յայտնութեանկան վիճակներու մէջ եմ ես, մինչդեռ կինս, հիմա նստած է ոստիկանի մը դիմաց եւ ամենայն կանդարտութեամբ պատմութիւններ մտիկ կ'ընէ նման գէպքերու մասին :

«Լե՛ն օր տասնեակներով աղջիկներ ու տղաք ըան էուլ՝ կ'ընեն, տունէն կը փախչին : Ծատեր կը վերադառնան շուտով, ուրիշներ՝ հրեք : Ո՛մանց Հեաքը Հեաքս տեղեր կը գտնենք... հող մի՛ ընէք, լուր տուած ենք մեր բոլոր

կեդրոնները... Հիմա տուն դացէք, աշխատեցէք Էնալ ըլլալ, Բէյք ԻՔ Իզի, հէյ...»:

Վերադարձանք տուն առանց Սեդային: Իր սենեակը կը մտնեմ, դուրս կը խոյանամ, վանդակ ինկած դազանի մը պէս կը դառնամ ու կը դառնամ: Ո՛չ, կարելի չէ, ընկատներով ոտիկան պէտք է զիս այս տունը պահելու համար. պէտք է ինքզինքս դուրս նետեմ, փողոց, հաւանաբար այնտեղ յոյս մը կայ, բան մը կարենամ ընել, մինչդեռ կինս կ'ըսէ.

— Է՛յ, գլուխս դարձուցի՛ր երթալ-դալով, նստէ տեղ մը կամ դնա՛ պառկէ, առտու գործի պիտի երթաս...

— Մօ, Գէթի, — կ'ըսեմ, — Ի՞նչ պառկիլ, Ի՞նչ բան, աղջիկը չկայ Հիմա, այս պահուս, ով գիտէ խեղճը... այս Ի՞նչ անտարբերութիւն...

Բայց ինք ամենայն պաղարիւնութեամբ կը շարունակէ.

— Աղջկդ չկայ, Լէթս ֆէյս ԻՔ, ինչ որ պէտք էր, ինչ որ կրնայինք՝ բրինք, գացինք ոտիկան տեսանք. Ի՞նչ կը շահիս այսպէս ուրրի ըլլալով, բան մը կը փոխուի՞, արեւելքի մի ըլլար դարձեալ...

— Արեւելքի, արեւելքի՛: Նոյն այդ յիմար խօսքը, երանի՛ թէ զիչ մըն ալ դուն արեւելքի ըլլայիր, եթէ արդէն սկիզբէն խօսքս զիչ մը մտիկ ընէիր...

— Օ՛, ես մէյք մի սիֆ, ես մէյք մի սիֆ... Հին տետրակներ մի՛ բանար Հիմա, — պոռայ կինս եւ շտապով քաշուեցաւ սենեակ:

Հին տետրակները, այդ տետրակները ինչպէ՞ս չբանալ Հիմա:

Պէյրութն էմ ես ալ, ճիշդ Արմէնիս պէս: Արմէնիս պէս որ կ'ըսեմ, այն իմաստով, որ հակառակ այն իրողութեան, որ աւելի քան տասնը՛հինգ տարի է ի վեր այստեղ էմ եւ Արմէնին հետ բողոքաւոր տեղացի կրնամ համարուիլ, տակաւին մինչեւ այսօր «արեւելքի» կը շարունակեմ երեսիս: Նաեւ այն տարբերութեամբ, որ ինքզինքս յաճախ ուրիշ մոլորակէ մը, բոլորովին տարբեր մոլորակէ մը կը դգամ: Ինծի այնպէս կը թուի յաճախ, որ սխալմամբ այս աշխարհը եկած էմ եւ իմ ներքին գործիքներս, մօքոյս մնացած են այդ հեռաւոր, այդ անծանօթ մոլորակին վրայ: Թէ՛ ինչո՞ւ եկայ... Տակաւորիս ազոտտ խաղերէն մէկն ալ ատիկա: Չեմ ուզեր այդ մասին խօսիլ:

Սխալ ըսենք, թիւրիմացութիւն ըսենք ու անցնիք: Գասնըհինգ-քսանըվեց տարեկան ըլլալու էի, երբ այս երկիրը ոտք կոխեցի՝ առանձնութեան նմոյշ մը իրրեւ, «գրպանս՝ քանի մը ինծի անծանօթ «օգտակարներու» հասցէ: Անոնք երկար ատեն պտտեցան գրպանս, քանի մը հեռաձայնի խօսակցութիւն արժեցին, յետոյ՝ անպէտք, անօգուտ կորուցան, ցնդեցան: Յետոյ, այլեւ... Ի՞նչ կը կարծէք, որ պատահէր ձեզի, եթէ երբեք նետուած ըլլայիք... Մարա մոլորակը: Ըսեմ թէ ինչ: Նախ՝ կը տարտիք մտածելու, թէ տարորինակ, անարգկային արարածներ են այստեղի բնակիչները եւ կը սոսկաք, կը զարհուրէք, մինչեւ որ օր մը կը սկսիք դուք ձեզ յանցաւոր զգալ, դուք ձեզ մեղադրել, որ իրենց պէս չէք, իրենց նման ձեր գլխուն բուսած կոտորներ, ա՛: Թէններ չունիք: Եւ որ դուք էք անպէտքը, դուք էք տարորինակը: Այդպէս ալ եղաւ: Գոայ ինքզինքս ամբողջական ու վերջնական առանձնութեան մէջ: Ո՛չ այն առանձնութիւնը, որ մէկ-երկու դաւաթ գինիով կարելի է պարտկել, կամ, յոռեպոյն պարագային, ամբողջ մէջ ամբոյս ըլլալով, այլ այն միւսը, հրէշային, անպարտելի այն միւսը, որ կը բռնէ ձեզ, կը տեղաւորէ անդունդի մը եզրին, որպէսզի այլեւս ամբողջ ճիշդ չգլորի այդ խաւարին մէջ: Կ'ընէ այնպէս՝ որ միջոցէն ու ժամանակէն դուրս ինկած էս

կը կարծես, խորթացած է ջեղի բովան, խորթ ես նոյնիսկ ինքզինքիդ : Կ'ընէ այնպէս՝ որ սկսիս ինքզինքդ անձիդ մէջ փնտռել եւ որքան փնտռես, այնքան աւելի կը կորսնցնես զայն : Կ'առնէ միտքդ, կը նետէ բացարձակին ծայր ու սահման շունչեցող դատարկութեանց մէջ, եւ այլեւս զեմ ու զսպէ զայն : Բայց միտք ըսածդ ձի՛ է, որ սանձես, տեղ մը կապես, կեցնես : Մէկ ձի՛ տակաւին ոչինչ, հապա եթէ քոտառո՞ւն ձի, հարթ՛ւր ձի մէկ անգամէն վազել սկսին պղտիկ զանկիդ մէջ... :

Այդպէս էր, ըլլալ-չըլլալու սկզբնական, վերջնական թնձուկներու մէջ էի, լինելութեանս յետին մէկ պահը, մէկ երկվայրկեանը ինծի համար անլուծելի խնդիր դարձած էր, երբ դիմացս յայտնուեցաւ Գեղարփին : Անմեղ, պղտիկ, հրեշտակային ժպիտ մը ունէր եւ աչքեր... աչքեր՝ անձրեւէն ետք բացուած ծիրանի զօտի, պայծա՞ր, շողշողո՞ւն : Այդ ծիրանի զօտին երանգներուն խորերէն սապէս նայել մը ունէր՝ ուղիղ, շեշտակի, անձայն, անխօս խոտուածի մը պէս : Ձերմ, անկաշկանդ հրաւէր մը, ամբողջական նուիրում մը պոռացող այնպէս նայուածք մը ունէր, որ հողիիդ ամենամութ անկիւնները մինչեւ կը սուզուէր, խաւարները կը զրուէր, հողիիդ մէջ խնճոյք կը սարգէր :

Արդէն, մեր հանդիպման յաջորդ շաբաթը սկսած էր սենեակս զաւլ, մահիճն շտկել, տեղաւորել, դասաւորել, կարգուկանոնի մտցնել իմ թափթըփած վիճակս, ամէն անգամ կրկնելով. «Օ՛ր, այս ինչ վիճակ, այս ինչ անկանոնութիւն, այստեղ ինչպէ՞ս կ'ապրի մարդը : Օր մը, երբ այդպէս եկած էր՝ ճերմակներ հագած, այդ իր անմեղ ժպիտով, ըսի՛ .

— Գիտե՞ս, Գեղարփի, դուն հրեշտակ մըն ես, ճերմակ, մաքուր հրեշտակ մը... :

Երկար սուղուեցաւ աչքերուս խորը եւ ամենայն պարզութեամբ ըսաւ. — Օ՛ր, ո՛չ, կը սխալես : Մեր մէջ սխալ պէտք չէ մնայ, ես հրեշտակ չեմ, այնքան մաքուր չեմ, զեզմէ առաջ ուրիշ մարդիկ ճանչցած եմ, լաւ է դիտեալ սկիզբէն... պէտք է միշտ... :

Ձեզեցի շարունակէ խօսքը, չէի հանդուրժեք կարծէք, որ իր անձը վարկաբեկէ, նուստացնէ զիմացս, հակառակ անոր, որ այդ իր ճանչցած մարդիկը՝ քանակ կազմեցին, ազէտի պէս խուժեցին վրաս :

— Ոչինչ, ոչինչ, — ընդմիջեցի զինք շուտով, — դուն հրեշտակ ես, ինծի համար հրեշտակ ես : Ձեմ ուզեք լսել անցեալիդ մասին, այդ մարդիկը... այդ մարդիկը... մի՛ խօսիր երբեք, այդ մասին երբեք չխօսիս ինծի... :

Մտածումս, մտախախտութիւններս կարծէք կարդաց անմիջապէս եւ բողբոջի շէշտով մը .

— Դուն խեղճ ես, — ըսաւ, — ուրիշ մարդ չկայ... ոչ մէկ լուրջ բան անոնց հետ, ոչ մէկ կարեւորութիւն... կարեւորը դուն ես ինծի, հասկըջա՞ր, դուն ես ինծի մարդ... խոստացիր, խօսք տուր երբեք կասկած պիտի չունենաս, չմտածես այդ մասին :

— Ոչինչ, ոչինչ, — կրկնեցի դարձեալ, — դուն ինծի համար միշտ ալ հրեշտակ կը մնաս, դիտեալիդ որքա՞ն դժուարութիւններ ունէի, դիտեալիդ որքա՞ն դժուարութեան մէջ էի, ի՞նչ փրկութիւն բերիս ինծի... :

Ինք չէր դիտեր, չէր կրնար դիտեալ դժուարութիւն ըսածս ինչ էր, եւ թէ՛ ինչպէ՞ս, ի՞նչ բաներէ փրկեց զիս, ինչպէ՞ս յանկարծ օրերուս դոյնը, ընթացքը փոխեց, զիս վերստին կեանքի իրականութիւններուն կապից, բնական մարդոց պարզ, բնական բաներուն : Ինչպէ՞ս ըսէի իրեն, ինչպէ՞ս հասկընար, ի՞նք՝ որ կեանքն իսկ էր, զուարթ, խայտացող : Ինչպէ՞ս հասկընար,

թէ կեանքը ինծի համար աքսորի վերածող դժուարութիւնը ինչ էր: Ինչպէ՞ս ըսէի, որ կեանքէն եկած ցաւը նոյնիսկ ինծի պարզեւ էր, զիս այդ կասողած ձիերուն արշաւանքէն կը փրկէր: Ո՛չ, չէր գիտեր, այդ բաները չէր գիտեր եւ լաւ որ չէր գիտեր: Առաւ ձեռքերս ասիւրուն մէջ եւ իր այդ խորունկ, շեշտակի նայուածքը, ամբողջական նուիրում, գորով, գուրգուրանք ցուացնող նայուածքը ինծի յառելով՝ ըսաւ.

— Ո՛չ այլեւս դժուարութիւն, ու մար, Եւ մար դժուարութիւն, հասկըցա՛ր: Դուն ուրիշ մարդ ես, բոլորովին ուրիշ մարդ, դուն որքան մայր, որքան լաւ, դուն ալ չես գիտեր ինծի ինչ բերիք... ամբողջ իմ կեանք պահաս էր, հոգիս կապոյտ լեցուցիր: Ո՛չ, այլեւս ոչ դժուարութիւն, պիտի ուրախ ընեմ քեզ, պիտի տեսնես որքան ուրախ...

Երբեք չեմ գիտցած, թէ ուրախութիւն ըսուած թուշուր ինչ է, մարդ ինչպէ՞ս կրնայ բռնել զայն, եւ բռնելէ ետք՝ ինչպէ՞ս կրնայ պահել: Հաւանաբար մարդ ուրախ կ'ըլլայ, երբ միտք-մտածում չունի, մտքի ցաւ չունի: Յաւ որ ըլլայ՝ ուրախութիւնը ինչպէ՞ս կը ծնի: Բայց այս ազդիկը սորվեցուց ինծի, որ Մոկրատին, Եպիկտէրին, Տեքսորդին, Կոմպիլիտսին կամ անոնց նման հին թէ նոր վարպետներու իմաստութեան ու խորհուրդին կարիք չունի մարդ, դիտնալու համար, թէ որքան պարզ են կեանքի բաները, որքան հեշտ կրնան ըլլալ, դիւրամտաշէի: Մորվեցայ իրմէ, որ օր ու ժամ ու վայր-կեան, որ կեանք մը ամբողջ պզտիկ-պզտիկ հանոյքներով կը կահուարուին: Մորվեցայ իրմէ փոքր նկատուած բոլոր բաներէն հաճոյք աննելու իմաստութիւնը եւ այն մանաւանդ, որ անկողինը շատ կարեւոր դեր ունի, որ անկողին, մահճակալ, քուն ու հանգիստ գտնելու կամ ինծի պէս գիշերներուն վայրեր-երկայնքը չափելու համար շինուած առարկաներ չեն միայն...: Մորվեցայ, որ պզտիկ հաճոյք չէ կնոջ մը ուղարկութեան առարկան դառնալ, քու անձը ջեղի յարգի դարձնող, հպարտութիւնը շոյող այդ տեսակ մը ուղարկութիւնը, որ ունկնդիր է կարծէք էութեանը շուկներուն իսկ, որ կը հետեւի նուազագոյն շարժումիդ, նուազագոյն արարելիք եւ որ պատրաստ է նոյնիսկ յետին փափաքիդ քաղցրութեամբ մը զոհացում տալու:

Տիեզերքի բարեքներուն ամբողջութիւնը կարծէք նուէր ստացայ՝ երբ ամուսնացանք: Ինծի պահած աշխարհ մը բանը, այսպէս, յանկարծ, ամբողջացաւ, լիպցաւ, երբ Գեղարփին յօժարեցու կինս դառնալ: Ամուսնացանք եկեղեցիով եւ ամէն ինչով, ընտանիք եղանք: Այլեւս շարունակ միասին էինք, նոյն երգիքին տակ, առանց ժամի-ժամանակի կրճատումներուն, ամբողջովին անկաշկանդ կերպով իրարու հետ: Տարի մը չանցած՝ ընտանիքը բազմացաւ, քաղցր, քնքուշ, նոր տեսակի ուրախութիւն մը մեզի տրուեցաւ: Ունեցանք Սեղան: Եղաւ ատեն մը, որ ցերեկը, գիշերը, օրը, ժամը, վայր-կեանը՝ իմ այդ նախկին բռնակալներս, կարծէք մոռցան այլեւս իրենց դաժանութիւնը, ընտելացան, մտերմացան հետս, ժպիտ, ծիծուղ սկսան ցուցադրել: Անկատկած, ասոր կ'ըսէին երջանիկ ըլլալ:

Սակայն, ըսաւ երեւոյթին, երջանկութիւն ըսուածը դիւրին մարտուող սնունդներէն չէ: Բայց արդէն, սկիզբէն իսկ խրաչած եմ ուղիղ, ողորկ, առաքարակ գիծի վրայ զեռեղուած կտուրտմբի մը բնթացող այդ վիճակներէն եւ, մանաւանդ՝ այդ վիճակը հետապնդող, այդ վիճակին մէջ պերճացող մարդոց բանակէն: Ուրուած եմ նոյնիսկ այդ գոյականէն, երջանկութիւն կոչուած այդ բառէն. ինք ալ ինձմէ, վստահաբար: Ա՛յդ էր արդեօք պատճառը, որ օրերս սկսան դարձեալ տգեղնալ, դաժան, խոժոռ դոյն ու գիմազիծ առնել: Երբեք պիտի չկրնամ գիտնալ: Գիտեմ միայն, որ մեր

կենսաբնի կառուցարը ուղիղ գիծէն դուրս եկաւ՝ հազիւ քանի մը կայսրան անցած :

Նախ՝ անունի անպէտք, անիմաստ հարց մը փառեցաւ : Այսօրուան պէս կը յիշեմ, հաւաքոյթէ մը կը վերադառնայինք եւ հազիւ մեր տան սեմին ոտք դրինք, անգլերէն լեզուն խարազանի նման վրաս շաշեցնելով, կինս յանկարծ երկար ատեն զսպուած գայրոյթով մը պայթեցաւ :

— Լսէ՛, վերջին անգամ ըլլալով կ'ըսեմ քեզի, իմ անունը Գեղարքի չէ, Քէթի է, չհամարձակիս օտարներու դիմաց զիս այդ տխուր անունով կանչելու... Ես Քէթի եմ, հասկցա՞ր, — եւ գայրոյթը կծու, կճող, արհամարհոտ տեսակ մը արտայայտութեան փոխելով, — ասկաւին այդ չի բաւեր, անկիրթ ալ կ'ըլլաս, կը պարտադրես, որ մարդիկ հետը հայերէն խօսին, անգլերէն խօսողին հայերէն կը պատասխանես, ս'ը կը կարծես որ կ'ապրես, այստեղ Ամերիկա է, պարո՞ն...

Լաւ կը յիշեմ այդ իրիկունը, կնոջս դէմքը, դէմքին վախազուտ ալապերպուտը, կը յիշեմ, որ մէկ կողմ քաշուեցայ, առանց խօսք մը, նոյնիսկ վանկ մը դուրս տալու, եւ երբ այդպէս նստած էի օնկիւն մը, երկու ձեռքերս գլխուս յենարան ըրած, անսայ «Քէթին» ձօնեցաւ, փունկի եկաւ դեմացս, առաւ գլուխս արեւուն մէջ եւ փափկութեամբ, իրեն յատուկ քնքուքեամբ փայփայելով, շոյելով, այս անգամ հայերէնով ըսաւ :

— Օ՛, կը ցաւիմ, որքան կը ցաւիմ՝ միտքս քեզ վերադարձել չէր, հաճիս ներէ՛, կը ներե՛ս, — եւ երկարօրէն զիս զգուշիչ, փայփայելէ ետք աւելցոցցոց, — նայէ՛, ինչո՞ւ երբեք չես բարկանար, դուն ալ չես պոռար վըրասս, մենք էրիկ-կնիկ շեմք, երբեմն նըրվըս կ'ըլլանք... օգուտ կ'ըլլայ, լաւ կ'ըլլայ պոռանք, առանց կռիւ կնիկ-ամուսին կ'ըլլա՞ր...

Արեւօք ըսել կ'ուզէր, որ երկու մտերիմներու միջեւ վէճ, բարկութիւն, կռուտուտը աւելի՞ եւս անկեղծութեան, մտերմութեան նշան են, աւելի՞ եւս կը սերտացնեն յարաբերութիւնները : այդպէս զոնէ թարգմանեցի, մեկնաբանել ուզեցի ըսածները : Ասի զինք թուեցիս մէջ, սեղմեցի ուժգին, ուղղուեցանք անկողին եւ... դարձեալ երկարօրէն մտերմացանք այդ զիշեր :

Բայց այդ օրուան իր դէմքը՝ կատաղած, վայրագ վագրի նման ալապերպուտը զամուսեցաւ-մնաց յիշողութեանս սկաւառակին վրայ՝ վտանգ, ազնու ազադակող սպառնալիքի մը պէս : Ամուսինի իմ գերս կատարելապէս խաղացած ըլլալու համար, ես ալ երբեմն սկսայ պոռալ, բարկութիւն կեղծել, կարծելով, որ այս ձեւով մասնակցութիւն կը բերեմ կին-ամուսին կապերը առուել եւս սերտացնելու աշխատանքին... : Ասկայն նկատեցի, որ կինս յաճախ կարծէք կ'օտարանար, անգլերէնով կը սկսէր խօսիլ եւ այլեւս մտերմութեան մեր միակ կապը անկողինը կը մնար : Այսպէս, ամէն անգամ երբ յանկարծ կնոջս լեզուն կը սկսէր անգլերէնով դառնալ, գիտէի, որ հեռացած է, օտարացած է դարձեալ, այդ օր դժուարութիւններու պիտի բախիմ : Աւելի ուշ նկատեցի, որ դործս մէկ անձի հետ չէ, դիմացս երկու տարբեր անհատներ կան, կարծէք երկու անձատ գիմագիծ կը մնար թաքնուած կնոջս մէջ : Մէկը՝ Գեղարքիին, հրեշտակային ժպետով, հայու պայծառ միւտքը ճակտին, քաղցր, հլու, հոգածու, իսկ երկրորդը՝ ինձմէ առաջ ճանչցուած, ինձմէ առաջ իր ճանչցած այդ պղտոր մարդոց, այդ բանակ մը գուրի մարդոց : Կարծէք երկու անձատ գիմագիծ կը մնար թաքնուած կնոջս մէջ : Մէկը՝ Գեղարքիին, հրեշտակային ժպետով, հայու պայծառ միւտքը ճակտին, քաղցր, հլու, հոգածու, իսկ երկրորդը՝ ինձմէ առաջ ճանչցուած, ինձմէ առաջ իր ճանչցած այդ պղտոր մարդոց, այդ բանակ մը գուրի մարդոց : Կարծէք երկու անձատ գիմագիծ կը մնար թաքնուած կնոջս մէջ : Մէկը՝ Գեղարքիին, հրեշտակային ժպետով, հայու պայծառ միւտքը ճակտին, քաղցր, հլու, հոգածու, իսկ երկրորդը՝ ինձմէ առաջ ճանչցուած, ինձմէ առաջ իր ճանչցած այդ պղտոր մարդոց, այդ բանակ մը գուրի մարդոց :

պատահէր, որ նոյնիսկ մտերիմ պահերուն կարծենքու պէս կը խայթէին, կը կծէին ուղեղս, զիս կը նետէին կասկածներու մթին, թունաւոր անդունդի մը մէջ, եւ զէջը այն էր, որ իրենց դիմաց ես սկիզբէն իսկ պարտուած էի: Էր՞նչ ունիս դարձեալ, ի՞նչ եղաւ քեզի, — կ'ըսէր Գեղարփին այդ մութ պահերուն, — պէտք է խօսիս, պէտք է ըսես ամէն բան ինձի, լուս չէ միտքը զաղտնի պահել, խօսէ՛, ես քեզի կ'օգնեմ, զաղտնի միտքը սխալ տեղեր կը տանի, ըսէ՛, խօսէ՛, պոռա՛ դուն ալ իմ վրասն:

Ոտիլ՝ անշուշտ, անկասկած: Հոգեբուժներն ալ խօսեցնելով մարդոց միտքը չարչարող թնճուկները քակել կը փորձեն: Սակայն բաներ կան, որոնք շատ դժուար կ'ըսուին, խօսք ու բառ չունին: Յետոյ՝ ինչ օգուտ խօսելէ, երբ լսող չկայ, երբ խօսակիցը ալ ակնհայտ խուլացած է: Խնթերը միայն իրենք իրենց հետ կը խօսէին: Եւ ըսել, որ ժամանակ մը կար, ոչ շատ հետո ժամանակ մը, երբ կինս կրնար լուսթիւններո իսկ լսել, մտքիս յետին շրջաններուն իսկ ունկնդիր ըլլալ: Ոտիլ պէտք է, նոյնիսկ երբեմն պոռալ՝ աղէկ, բայց առաջին անգամ, երբ իրապէս բարկացայ, պոռալ սկսայ՝ «արեւելացի» պիտակը նետուեցաւ ճակտիս:

Մեր աշխիւր, Սեդան, հրեք տարեկան իսկ չկար տակաւին, երբ իրեկուն մը, ճաշի վրայ կինս յանկարծ ըսաւ. «Գիտե՞ս, գործ գտայ, Մրկուշարթի կը սկսիմ»: Եւ մտած իրեն կը նայիմ: Դէմքին կը կարդամ թշնամութիւն, ատելութիւն: Սարսուտի պատճառով այդ դիմակը հաղած է դարձեալ, իսկ լեզուն ալ անպէտքէն դարձուցած: Էր՞նչ գործ, Գեղարփի, աս ուրկէ՞ կ'ըսես, կը յարցիմ հազիւ մըմտալ: «Ձհանեցա՞ր, նեղուեցա՞ր, — կը կատարէ կինս, — ի՞նչ կը կարծես, ես սարո՞ւկ եմ, տունի ծառայ մը, կ'ուզեմ որ այսպէս... ես կը ձանձրանամ, այսպէս կը ցամքիմ...»:

Նախ փորձեցի համոզել՝ առարկելով, որ կարելի չէր Սեդան առանձին ձգել իր այս տարիքին, ակշախի սիրտը մօր մը տեղը չէր կրնար բռնել, եւ որ եթէ դրամի խնդիր է ու չահածս չի բաւեր՝ կրնամ յաւելեալ ժամեր աշխատել:

— Ո՛չ, — պատասխանեց չոր, անդրդուելի, — դրամի խնդիր չէ, դիտես որ ես դրամ չեմ սիրեր, քիչով կրնամ գոհանալ: Ձե՞ս հասկնար, զրանդի պէտք ունիմ, փոփոխութեան պէտք ունիմ...:

— Փոփոխութիւն, — կատրեցայ մէկէն, — դեռ ի՞նչ կը փնտռես: Աղջիկդ, ես, մեր ծանօթները, բարեկամները չե՞ն բաւեր քեզի... ո՞ւր է, կ'ըսէիր, որ ես էի քեզի պակասը, հողիդ, միտքդ, ամէն ինչդ լեցնող անձը: Ի՞նչ եղաւ քեզի, ըսէ՛, ի՞նչ եղաւ:

— Օ՛ր, կը տեսնեմ, որ կը վախնաս, — ըսաւ կինս սրդողած, — որքան կը ցաւիմ, որ վատհուսութիւն չունիս վրաս, ամօ՞թ քեզի, չես վատահիր վրաս, բայց դուն չե՞ս գիտեր, որ այս երկիրը եթէ չաշխատես՝ քրտիք չես ունենար, սիբիրիքի չես ունենար, ուրախ եղիր, գոհ եղիր, որ կ'աշխատիմ, Սեդային համար քայլերի դրամ մէկ կողմ պահ կը գնեմ գոնէ...:

— Ե՛ս եմ, — պոռացի, — ես եմ քեզի սիբիրիքի, ես եմ քրէտիթը, դուն ալ ատիկա մի մտնար: Մի մտնար, որ ամուսինդ եմ, կրնամ արդիւնել, կ'արդիւնեմ քեզի...:

— Օ՛ր, կ'արդիւնես, — ըսաւ ծաղրական, — արեւելքի ես, կ'արդիւնես, հապա՞...: Փորձէ՛ անգամ մը...: Կ'արդիւնէ՞ եղբր:

Երկուշարթի վաղ առաւօտուն արթնցաւ, արտօրանքով պատրաստուեցաւ, յետոյ՝ «Երբ մի կուտ լաք» ըսաւ ու դնաց: Արեւելքին արդիւնք չկրցաւ հանդիսանալ: Արեւելքիներուն մօնկուն իսկ չէր կրնար, ո՛ւր մնաց ես, ինձի

պէս մէկը, որ չէր դիտեր ինչ ընել, ինչ փորձել, որ Գեղարփին չկոբանցնէ։
 Ձեռ ուղեր պատմել, թէ այդ օրէն առդին ինչ պղտոր, ինչ ցաւնոզ վիճակներու մէջ գտնուեցայ յամախ, որքան ատեցի ինքզինքս, յանդիմանեցի Արեւելքի մէջ ծնած ըլլալուս համար, եւ թէ՛ ինչե՛ր յանձն առի, ինչե՛ր զիջեցայ, գոնէ մասամբ մը այդ յանցանքս, թերութիւնս մեղմացուցած, քաւած ըլլալու համար։ Նուազագոյնը, օրինակ, սկոյայ ռօզնիչ, աման լըւալ, տան զանազան գործերը տեսնել, եթէ ոչ տնային բոլոր գործերը։ Բայց ասոնք՝ ոչինչ, այդ ամէնը պիտի ընէի, նոյնիսկ եթէ... քամլաթքացի ըլլալի, չէ՞ որ կ'իմս գործէն «յոգնած», չա՛տ յոգնած կու գար...։ Հարցը այն էր, որ կարճ տանն մը ետք, մեր ախկնոջ արտատնային դրաղութները շատցան։ Եթէ յոգնած, բոլորովին սպառած ինքզինք չէր նետած բազկաթոռի մը վրայ եւ այս կամ այն գործով կամ փարքիներով ուշանալու չէր, պիտի անպայման շափիկիկէ երթար, դնու՛մ ընէր, մինչև իրիկուան շատ ուշ ժամերը։ Կարելի չէր, անպատշաճ էր ի վերջոյ ամէն օր նոյն հագուստով, նոյն կօշիկներով, նոյն արգուզարդով գրասենեակ երթալ...։ Եւ այլևս ինք մեր տան մէջ, այդպէս, կարծէք տեսակ մը այցելու դարձաւ, եւ ո՛չ միայն իրարու հետ գլուխ դիպի երկու մտերիմ խօսք փոխանակելու կարելիութիւն չժընաց, այլև, ինչ որ աւելի վատ էր, տղջիկս ինամքէ, ուշադրութենէ բոլորովին գուրկ մնաց, մնաց ինքն իր վիճակին լքուած։ Իրաւ է, ժօրը բացահայտութիւնը չզգացնելու համար եւ կը փորձէի ինչ որ կ'ընայի, սակայն լուտով կը զայրանայի, համբերութիւնս կը հասնէր՝ մանկական պզտիկ շարճճիութիւն մը իսկ ներելու համար։ Ի՞նչ կ'իմս, ճիշդ հակառակը, համբերութեան շտեմարան էր, համբերութեան մրցում կրնար չա՛հել։ Ջղայնացնող, յուսալքող համբերութիւն մը սակայն, որ անհողութեան, անտարբերութեան շատ կը նմանէր։ Նուազագոյն դիտողութիւնն իսկ չէր ելլեր բերնէն, եթէ նոյնիսկ աղջիկը աշխարհ իրար անցուցած ըլլար։ Ինք կը շոյէր, կը փայփայէր, կը սիրէր միայն, եւ իր սէրը ուրիշ բան չէր, եթէ ոչ երկու օրը անգամ մը նոր նուէր մը, խաղալիք մը բերել աղջկան։ Յամախ ալ, երբ պատժած կ'ըլլայի կամ կը սաստէի Սեդան, կ'իմս յանկարծ կը միջամտէր, կը կըլտաւորէր զիս պզտիկին դիմաց.

- Ձգէ՛, — կ'ըսէր — ի՛նչ կ'ուզես իրմէ, ձգէ պզտիկը ազատ
- Մի՛ ընէր այդպէս, — կը պոռայի այլևս, — այդպէս մի վարուիք, կը շփանայ, կը խաթարուի աղջիկը, յետոյ ու չ'ըլլայ։
- Բայց ինք՝ ձայնը շատ աւելի քարծրացնելով.
- Հանդի՛ստ ձգէ պզտիկը, ձգէ ազատ թող մեծնայ։

Այդպէս ալ եղաւ։
 Աղջիկը մեծցաւ քիվիի գործիքին դիմաց, պուպրիկներու, արջուկներու քաւած միջա բազմացող եւ յարափոփոխ խաղալիքներու ընկերակցութեամբ՝ անուանձ ու անկաշկանդ անօրէնութեան մը մէջ։ Եօթը-ութ տարեկան հողիկ կար, էրբ այլևս դիտողութիւն կամ ցուցմունք կարելի չէր ընել իրեն՝ առանց որ ինք փոխադարձէր կոստօրէն. «Կիվ մի է պրէք, օ ֆէ՛», ուաք տաւ նաւ ուտիք ափ մայ յայֆ», այսինքն՝ հանդի՛ստ ձգէ զիս, հասկցա՛ր, ի՛նչ կը խտանուիս կեանքիս։

Տասը տարեկանին արդէն պոյ ֆրէնս ունեցաւ. չէ՛կ աղայ մը, դպրոցական իր ընկերներէն, իրմէ քանի մը տարու մեծ։ Մեր աղջկան այս կանխահաս գարթնումը ո՛չ միայն չէր մտահոգի կ'իմս, այլևս կարծէք կ'ուրախացնէր, մինչ եւ ի գուր կը փորձէի ինքզինքս համոզել, կը ջանայի եղածը մանկական անմեղ քամայքի մը վերադրել։ Խոշորացոյցի պէտք չկար սակայն,

տեսնելու համար, որ ասիկա մեր զխոցած պատանեկան ընկեր-ընկեր խո-
ղանքէն չէր եւ շատ դժուար կը զսպէի զայրոյթս, երբ կը տեսնէի, որ լա-
կուաները այդ մանկական տնեղ, անարատ երազներով զոհացողները չէին,
ժանաւանդ տղան: Կը կատղէի, մինչդեռ կինս:

— Ի՞նչ իրար անցեր ես, ի՞նչ պատահեր է, ուրախ եղիր, որ աղջիկդ
պոյ փրկուտ մը ունի. ձգէ թող ուրախանան, կուտ քայմ ունենան:

— Բայց ա՛յս տարիքին, ֆէթի:

— Այդ տարիքին ով գիտէ դուն ինչե՛ր չես ըրած: Ես տասնընեղ
տարեկան հաղի կայի, երբ դիշերները կը փախչէի՝ հօրս ու մօրս ջանա-
լէն ետք: Գաղտնի բանալի չինած էի...

Այդպէս ուրեմն: Այդ տարիքին կինս ալ արդէն... Իսկ ե՞ս, իսկ ե՞ս:
Ձէ՞ր ծիծաղէր, չէ՞ր ծաղրէր զիս, եթէ ըսէի, որ այդ տարիքին, այդ տա-
րիքէն շատ առգին, տակաւին ես մշուշներու, երազներու խանձարուրին մէջ
էի...

Սեղան այդպէս անկաշկանդ, կուտ քայմ ունեցաւ. ինքզինք ամբող-
ջովին զուարճութեան եւ ծամանցի տուաւ: Պոյ փրկուտ, կըլլի փրկուտ, քիվի
եւ անոնց հետ այդ միւսը՝ կենդանական բնազդները արթնցնող այդ վայրե-
նի աղմուկը, որուն այստեղ երաժշտութիւն տնունը կու տան: Յաջորդող
տարիներուն, Սեղան արդէն դառ-դասադիրք անտեսելու սկսաւ եւ ո՛չ միայն
այդ, այլև դպրոցին հետ օտարացաւ, կարծէք թշնամութիւն զարգացուց:
Ի՞նչ՞ որ ամէնէն ուշիմ, ամէնէն յաջողակ աշակերտներու կարգին կը գա-
ւէր, նուազագոյն հոգն իսկ չէր ունենար, որ վերջամասցներու շարքին ան-
ցած էր: Արդէն, այս տարի, յանախակի գտնագատներ, դիտողութիւններ սկը-
սած էինք ստանալ տնօրէնութենէն եւ դպրոցէն բացակայած ըլլալու քունի
մը յիշեցումներ: Խրատեցի, յանդիմանեցի, չեղաւ ու չեղաւ: Այլեւս ճարա-
հատ, վերջապէս օր մը թելադրեցի, որ դպրոցին մէջ աշակերտական հար-
ցերու խորհրդատու ուսուցիչին հետ տեսակցի, անկէ խորհուրդ եւ ուղղու-
թիւն ստանայ: Վարանեցաւ, տատամսեցաւ նախ Սեղան, ըսաւ պէտք չունի
ուրիշներու խորհուրդին, բայց երբ սնդեցի, յայտնեց յանկարծ, թէ ար-
դէն դացած ու խօսած է խորհրդատուին հետը: Եթէ՞ խորհուրդ, ի՞նչ բան,
իրախտացի գինով, աղտոտ մարդ մըն է միայն, զիս դիմացը նստեցուց, ին-
ծի տեսակ մը նայիլ սկսաւ, պիտի ուտէր զիս կարծե՞ս...: Սկսաւ իր կեան-
քը պատմել. դժբախտ է եղեր, մինակ է եղեր, կինը ձգած-զացած է եղեր,
զեռ ինչ գիտնամ ուրիշ ի՞նչ...: Յետոյ մէկէն ձեռքս բռնեց, շոյն սկսաւ,
աչքերուս մէջ ապուշ-ապուշ նայելով...: Ապա՝ ձեռքը յանկարծ օրուսքիս
տարաւ, սկսաւ շփել, չրեցի զինք ու փախայ...»:

Յաջորդ առաւ, կանուխ, կատղած ու փրփրած, ամբողջ Իրլանտան,
Ամերիկան ալ հետը օղջ հանելու արամաղբութիւններով տնօրէնին դրասնե-
հակը վազեցի: Տնօրէնուհին դիմացս ելաւ, ջառասուցի մօտ կին մը, հաւա-
նարար իրլանտացի ինքն ալ: Թոյնս զլիսուն թափեցի: Խօսք ըսուածը եթէ
վատող, պայթուցիկ ըլլար, դպրոցն ալ, ինքն ալ գետնին հաւասար եղած
կ'ըլլային:

— Հանգարտեցէք, պարոն, հանդարտեցէք, ինչքեմ, — կը կրկնէր
կինը, — նստեցէք խօսինք, բացատրուինք: Այդպէս դէպքեր պատահած են,
կը պատահին կեանքի մեր այս պայմաններուն մէջ: Պէտք եղած միջոցները
ձեռք կ'առնենք, սակայն երբեմն աշակերտներն ալ թոխք կու տան իրենց
երեւակայութեան, կը հնարեն...: Այստեղ ընդունեցէք, որ ձեր աղջիկը շուտ
հասունցած է, արդէն իր այս տարիքին...

— Երևոյ հասունցած, — ընդմիջեցի զինք, — ո՞վ է պատասխանատուն, եթէ ոչ դուք, ձեր կրթական սխառմը: Սեռային հարցերու մասին դասեր կու տաք, իբրև թէ ծանօթութիւն խնդճ պզտիկներուն, կը պլտորէք, սկիզբէն կը խաթարէք իրենց մանուկի միտքը:

Մինչ անօրէնուէին կը խօսէր, իր ինչքով կարծելով, որ կը համոզէր, կը լուսարանէր զիս, ես իր բառերը չէի լսեր իսկ, միտքս յանկարծ քանի մը տարի ետեւ ցատկած էր: Աղջիկս եօթի կամ ութի մէջ էր, կրք իրիկուն մը ըսաւ. «Պայպ, պայպ, ես ինչպէ՞ս ծնած եմ, դուն եւ մաման զիս ուրկէ՞ աշխարհ բերած էք»: Եւստ անախորժ անակնկալ մըն էր հարցումը, չէի զիտցած կացութիւնէն ինչպէս պրծիլ: Սկսած էի պատմել, որ թռչունները, ճերմակ արագիւնները մամաններուն, պայպաներուն նուէր կը բերեն... Մակայն շմորած, մէջը մնացած էի՝ տեսնելով, որ մայր ու աղջիկ տեսակ մը քմծիծաղով մտիկ կ'ընեն զիս:

— Ո՛ւ, այդպէս չէ, — պնդած էր աղջիկս, կ'ուզեմ որ ըսես, ես զիտեմ արդէն...»

Կարծէք թէ այդ չէր բաւեր, տակաւին ետքն ալ, պզտիկն զիմաց տիկնոջս հետ վէճի բռնուած էինք:

— Ինչո՞ւ աղջկան չես պատասխաներ, ինչո՞ւ կը խաբես, սուս-սուս բաներով, աւելի լաւ չէ՞ ճիշդը ըսես, հիմակուքն զիտնայ ամէն բան, արթուն ըլլայ, չխաբուի, — պոռայած էր կինս երեսիս:

Ես չէի կրնար, ոչ մէկ լեզուով չէի կրնար այդ բաները աղջկանս ըսել: Չէի կրնար նոյնիսկ եթէ դադարէք պարզացնելու զիտնականի տիտղոս ունեանի: Բայց, վստահ եմ, որ կինս առիթ մը գտած եւ ինձէ՛ վաղտնի բացարձակ էր, յայտնած էր իրեն ամէն ինչ, յետին մտերամանութեամբ...

Տնօրէնութեան սենեակէն դուրս եկայ աւելի ջղախոցած: Կարծէք այդ կինը թութակներու ցեղին կը պատկանէր, զոց սորված դասի մը պէս բաներ կը պատմէր ինձի, բաներ՝ որոնք կապ չունէին իմ խնդիրիս հետ, ոչ ալ չնչին լուծում մը կրնային բերել իմ անմիջական մտահոգութիւններուս: Սկզբնայ մտածել, թէ արդեօք Սեղան իրաւունք չունէ՞ր այս դպրոցէն զղուելու, երբ միշտ կը կրկնէր, որ ինք դպրոց երթալ չի սիրեր, մամք են բոլոր սուսուցիչները եւ ինք անոնցմէ բան չունի սորվելէք:

Այս են այդ «հին» էջերը, շատ համառօտ լուրերով: Այն էջերը՝ որոնք կինս չէր ուղեր որ բանայի, որովհետեւ, հաւանաբար չէր ընդունէր, չէր ուղեր զիտնալ, որ ճիշդ անոնց պատճառով բոլորս ալ հասած էինք մեր այս սօրունայ այս մութ ժամերուն: Չէր կրնար զիտնալ, որ այդ էջերուն դարձած ամբողջ յանցանքը հիմա կը քաւէր մեր աղջիկը՝ Սեղան:

Այդ գիշեր մերկ, մօրէ մերկ լուսին մը, վշտոտ, ցաւատանջ դէմքով, դադարաւորի հետեւեցաւ բայլերուս, Առթորիս թաղամասի յայնչին-երկայնքին, փողոցէ փողոց, տանքէ տանիք սուստեւիով տաջեւէս ու ետեւէս: Միտսին հալածեցինք մարդկային ամէն շուք, ստանձայն, վաղեցինք հոն՝ ուր երկու մարդ կար, շնչահեղձ եղանք հիւանդատար կառքերու եւ, մա՛նաւանդ՝ ուստիկանական ինքնաշարժներու ճշոցներուն ուղղութեամբ: Սեղան գտնելու յոյսէն աւելի, տեսակ մը կոպիտ, անկապտելի անհանդարտութեամբ կարծէք կը հնազանդէին ուղերս՝ դատարկացած, ամայացած փողոցներուն մէջ: Յոսմենալովէս, նախընտրելի էր այսպէս անդեկ վազվզել, քան մեր տան չորս պատերուն մէջ մարաթոն քայլարշաւ ընել:

Փողոցի մը անկիւնէն յունակտն երաժշտութեան արձագանգներ Հասան ականջիս: Յունաստան է, Յունաստանի կղզիներէն մէկն է կարծէք Աթորիայի լայնատարած այս թաղամասը — Փիրէա, Մալոնիկ կամ շեռ դիտեր Յունաստանի ուրիշ որ գաւառները եկած-տեղաւորուած են այստեղ, իրենց յատուկ բարձրով, սովորոյթներով, զպրօցներով, եկեղեցիով: Գասապաբած, պատնիշած են կարծես ինքզինքնին այստեղ, ամերիկեան ամենակուլովիկանոսին յորձանքներուն դէմ: Հաղուազիւտ են այն խանութները, որոնց ցուցափեղկերուն վրայ յունարէնը ինքզինք պարտադրած շքեղայ:

Քայլերս կ'ուղղեմ երաժշտութեան կողմը: Գիշերային պատ մըն է: Երանի՜ թէ մտած շքեղայի: Մուխով, ծուխով թանձրացած կիսամութ ըմպելարանէն ներս մարդկային ուրուադիծեր կը շարժին մութին մէջ: Գատաղած, կրքոս բարձրախօս մը՝ թմբուկներով, պալաւֆիներով յունարէն երգ մը կը թնդացնէ: Հագիւ գաւաթ մը ապսպրած եմ, պարզապէս այստեղ մտած ըլլաւս արդարացնելու համար, ահաւասիկ, մազերը մինչեւ ուսերուն ինկած պղտոր, անձոտի մարդ մը կը տեղաւորուի կողքիս եւ հին ծանօթի մը պէս խօսք կ'ուղղէ ինծի: Կպչուն, ծեփեքուն շարժումներ ունի զգուելին, ահանջին ալ օդ: Անդին կը դառնամ, առդին կը դառնամ, քաղաքավար խուսափումներ կը փորձեմ, բայց օդուտ շունի: Աթոռ մը անդին կ'երթամ, ետեւէս կու դայ, կը փակի ինծի: Ուշ հասկցած եմ, թէ ինչացու է զարշէին եւ երբ կը տեսնեմ, որ ուրիշ ճար չկայ, այս գիշերուան ամբողջ կատաղութիւնս կարծէք բոունցքիս մէջ խտացուցած կը Հարուածեմ եւ աթոռով միտոնի գետին կը փռեմ զգուելին:

— Օ՛, հի հիք, հի հիք մի (օ, զարկա՛ւ ինծի, զարկա՛ւ ինծի), — սկսու մէկ ձայնի վրայ ճշալ, պոռալ, Հաւար փրցնել պառին մէջ, գըրխուտ ամբոյս մը Հաւաքելով: Այն ալ ի՛նչ մարդ, սրտխառնուք պատճառող մարդկային խլեակներ, որոնք սկսան կատգած շուներու պէս վրաս հաջել, սկսայ ցոյց տալ: Փախուտ չկար, հասկցայ՝ պիտի խածնէին, խոշտանդէին զիս այդ զազանները: Հերքելէսն ալ ըլլալի՜ չէի կրնար այդ վոհմակին գէժ կենալ. տարակոյս չկար, այս գիշեր մորթս այստեղ պիտի ձգէի՝ վտղուան լրագիրներուն սծիր-արկած զգայացունց լուրերուն նիւթ հայթայթելով:

Այդպէս ալ կ'ըլլար, այդ պառէն ողջ դուրս չէի դար, եթէ չմիջամտէր պառմէնը: Բարձրահասակ, հուժկու մարդ մը, լայնատարած, պատակաւոր դու պիտեբով, որ մինչ այդ կը կարծէի, թէ խմիչք բաժնող մեքենայ մըն է միայն, ոչինչ կը տեսնէ եւ ոչինչ կը լսէ: Ձգիտցայ յանկարծ ինչպէս ցցուեցաւ վոհմակին դիմաց, մէկդի շարտեց վրաս յարձակողներուն պարագլուխները, դամփուի մը պէս գոռալով:

— Այ տանք ուսմք փրապլուզ հիք, կէք լոսք օլ աք եու, ինլ տիս մէն ըլոն օր ալ պրէյֆ եուր մէք (խնդիր չեմ ուզեր այստեղ, կորսուեցէ՛ք ըստրդ, հանդիստ ձգեցէ՛ք այս մարդը, այլապէս կը շարդեմ ըստրի՛դ ալ դոււելը), յետոյ թեւերէս բռնելով, զիս կամացուկ մը դուրս առաջնորդեց, ընկերացաւ ինծի մինչեւ որոշ տեղ, վստահարար ազատութեանս համար: Յայտնեց, թէ ինք յոյն է, անունը Եորիի, Կիպրոսէն: Նիւ Եորք կ'ապրի տասր տարիէ ի վեր, բայց Հոս չի մնար, կը վերադառնայ անպայման: Ըսաւ, որ կը ճանչնայ զիս, դիտէ, որ հայ եմ. «Վաւտ փիփըլ արմիքիքնը. կրիթա-արմիքիքնը վէրի օլտ ֆրէմտս (լաւ մարդիկ են հայերը. հայերն ու յոյները շատ հին բարեկամներ են), յետոյ յանկարծ, թէ՛՜ ուսք տը հէլ եու էէյմ ին տիս պառ, էք տիս ֆաքըն աուր: Իք իգ Յաք է փիլէյս ֆոր եու, մայ ֆրէմտ, օլ ար պառ-բըրտս, տակս, փիլդ, կօ Յաւ, կօ (ո՛ր դժոխքը բերաւ քեզ այստեղ, այդ ալ

այս շրջալիք ժամուն, այս քու տեղը չէ բարեկամ, միժուկներ են, շուն են բռնորը այստեղ, հանիս մազէ, զեա՛ հիմա...):

Վազեցի դասը. անկիւնը դարձած պահուս, երբ ետ նայեցայ, տեսայ տակաւին հոն էր, պահակէ մը պէս:

Ձէի դիտեր ժամը քանին էր, սակայն մութը նօսրանալու վրայ էր: Վիժուկներու, շուներու, շնացողներու այս ժամերուն, արդեօք աղջիկն ո՛ր միժուկին, ո՛ր շան երախին մէջ էր: Արդեօք ինքն ալ Յորկի մը դոմա էր են պաշտպան կենալու համար:

Բռնորովին լուսացած էր արդէն:

Նստած էի տունը, անկիւն մը, ծեծ կերած շան պէս սմբած, կծկուած. տեսակ մը դող, տեսակ մը սարսուռ ակուններու սակ սեղմած, երբ լսեցի յանկարծ, որ մուտքի դուռը կը բացուէր: Աղջիկն էր, Սեդան, տեսիլքի մը պէս աչքերուս դիմաց... Ձիւրցայ տեղէն շարժիլ, լիւրցայ նոյնիսկ խօք մը, բռն մը արտասանել: Ինքն ալ արդէն հասիւ զիտ տեսած, գողի մը պէս վազից սննեակը, փակուեցաւ աշտեղ՝ դուռը ներսէն կղկղելով: Վազեցի մեր ննջասննեակը եւ տեսայ, որ կիսն խորունկ քունի մէջ էր դեռ: Մշտեցի զինք, ցնցեցի ճիւղի, ֆէթի, ֆէթի ել, ել, տես Սեդան, Սեդան եկաւ, Սեդան եկա՛ւ: պոռոցի, Կինս միւրջապէս աչքերը բացաւ. «Օ, նա, եկա՛ւ, եկա՛ւ» ըսաւ կէս-քուն կէս-արթուն, յետոյ մէկ կողմ դառնալով դարձեալ քուն մտաւ:

Որքա՛ն պիտի ուզէի կնոջս այդ հանդարտութենէն մասնիկ մը քոնէ ունենալ: Ինչի՛ ծառայած էին զիշերուան ամբողջ խուճապահար թափառումներս: Ո՛չ միայն աղջկանս նուազապէս օգնութիւն մը, օգուտ մը չէի կրցած տալ, այլեւ խեղճացուցած, խայտառակած էի ինքզինքս եւ, տակաւին, եթէ Յորկին ալ շրջալիք...: Արեւելքէն ժառանգուած ա՛րխան է արդեօք այս մէկն ալ:

ԺԻՐԱՅՐ ԱԹՔԱՐԵԱՆ

(Հատուած՝ Խամառու վիպակէն)

Վ. Թ Ե Ք Ե Ա Ն

Մ Ո Խ Ի Ր Է Ծ Ա Ռ

Գ. Մաս

Սահմանումներու մէջ գիշերուան պատուհանին ձողերը հեռաւոր ուրուականներ են Կ'ուպեմ ինքզինքս ազատել երեակայական բանտէ մը միեւնոյն պահուն աշխարհը — այդ հեռաւոր բանը — ջնջեմ յիշողութենէս Ամէն գիշեր չվերադառնամ ինքզինքիս այսքան առանձին եւ յուսահատ եւ ակամայ եւ անպօր ու գլխիկոր հանդուրժեմ որ բոլոր պատմութիւնները պատմուին չափազանց անբառ եւ կախմանկէտերով Այնպիսի առատութիւն բերաւ Եղեռնը իր թուամորթ մեղկ դիմագիծերով Տառապանքը փոթ փոթ ըրաւ դէմքը եւ պահանջեց ինձմէ իր ծնունդը իր մահը Իր մահը խառնեց մէջս որովհետեւ մոռցաւ քեզիկերու առջեւ իր մլախունը իր սարսափելի վէպերը հաւաքեց լեռներէն իջաւ եւ ինկաւ անապատները յանձնուեցաւ մահուան Հիմա իր կերպարանքը եկեր է քովս է անբռնելի եւ անհաջողիչ շխրտոցը որ մազերէն կ'արձակուի Քանի որ չեմ կրնար բռնել զինք երբեմն կը կանչեմ կը գրկեմ կորսուած տառապանքով խաթարուած մայր մը գրկելու պէս Երբեմն յիշողութեանս տարածքին վրայ կ'իջնէ իբրեւ լախտ եւ այնտեղ բնակելու իրաւունք չունի ինք գիտէ որ չունի որովհետեւ ես զինք չծնայ չաղարտեցի չփճացուցի զինք Ես չէի որ աւազներուն վրայ անեղավազ Եփրատը ունկնդրեցի Ես չէի որ արինաձայ սմբակներու պէս հետաթողուցի այլքերս Ահա ելեր է երկնացից ժայռերուն վրայ ինքզինք նետէ պիտի Այսպէս է ոչ մէկ բան կրնամ բացատրել առանց Եղեռնի ոչ մէկ բան ընդունելու ըղձանքը կայ երբ Եղեռնը կաղ եւ յամառօրէն թափառող թափառաշրջիկի ուրուական մը պիտի չանհետի բոլոր միջանցքներէս վատ եւ ամենակույ բոլոր դուռներուն առջեւ իր անուանատախտակը դրեր է

digitised by A.R.A.R.®

ժամանակն է որ վերադառնամ պատմութեան հերկերուն Անապահովութիւնը միակ ապահովութիւնս է եթէ ես ալ ձիրքը ունենայի ինքնածոր նախադասութիւններու եւ բառերու պորութեան ապախնած նետուէի յոյսին ալուցքը Օ հրաշալի թերութիւնը որ չի մեռցնիր այս խեղանդամ երազներէն մուրացիկներու ա՛ս կախեալ կերպարանքները Ընկեցիկ կապոցները կը դնէք աշխարհի չորս թեւերուն վրայ գիտէք որ մինչեւ առաւօտ բոլոր աւելցուցները պիտի տան ձեզի Թերեւս ներս ալ կանչեն խրախճանքի պէտք է պարասրահներուն ներքեւը պէտք է հասնիլ պէտք է երբեմն այս բռնաբարումը պէտք է ինքզինք մոռնալ տրուիլ պէտք է սերնդագործել աւելի անձոնի քիչ մը աւելի մարդակերպ քիչ մը աւելի անասնակերպ իր փաթոյթները պիտի տայ քեզի փորձէ որ ծնանիս ինչ ամուլ արզանդդ բռնեք կեցեր ես

Կը դիտես զիս յամառօրէն ինչպէս տրտմահար ցու որ սպանդանոցի բակին մէջէն չի հեռանար Սպանդանոցը մեքենայի սեւ ժապաւէնին պէս կ'ուրորուի մէկ կողմէն միւսը կը փաթթուի ինք իր վրայ Իմ կերպարանքս տեսնող չկայ Ենթադրելով որ սպաննեցի քեզ որոշեցի յայտնուիլ բայց լէշդ — մեռած մեծիայրերուս հոտը կու գայ Մեծիօրս արուեստական ոտքը որով քայել սորվեր էր քուն ոտքը ինչպէս էր Իսթանպուլի մէջ տեղ մը երբ փորձեր էր գիշերային քանիբերորդ հետապնդումին երրորդ յարկէն փայլիլ եւ յարակարծութիւնը հոս է բոլոր ոտքերով քայել գիտես այնքան անդամահեղձ ես եւ այնքան հպօր ուրուայնամուտ էութիւն ես թանձր դունչդ հասած անապատներէն մինչեւ բոլոր քաղաքները ուր քու յետամնաց սերմերդ կը ծայթքին

Գիտեմ որ դիակդ չեմ կրնար հեռացնել Դուն բազմաթիւ ես եւ միակ կազողութիւնդ այս է — կը յայտնուիս տեղի անտեղի — եւ բան մըն ալ չես զգար եւ այս է որ քեզ չի փճացներ դուն բութ ես ինչ եղածդ ինչ ըրածդ չես հասկնար չես սարսափիր այն իրավիճակէն որ քու միջոցովդ կը հասնի ինձի եւ եթէ աքցան սաղմնահաններով ուզեն հանել ինչ որ կազմատրեցի չի պիտի ելլէ դուրս չի պիտի գայ լոյս աշխարհի չի պիտի տեսնէ որովհետեւ պիտի բնակի մութին մէջ յաւիտեան լպրծուն հեղուկներու մէջ արհիւնովս պիտի սնանի կերածիս կէտով ինք պիտի աճի եւ այն հրէշ երեխան որուն կը սպասես պիտի պտրտի մարմնիս հետ դուրս չի պիտի գայ դուրս չի պիտի գայ մինչեւ որ մտնեմ գիտակցական փափկութեանս եւ աղաղակիս մէջ

Ընդամէնը հայելի մըն եմ
 քաղաքում հայելին զիս կրող պատկերներուն
 քաղաքներու պատերուն փակցուցեր եմ
 զիս կրող պատկերներուն անունները բաղաձայն
 բազմաձայնումը
 սսկորներուս խշրտուքը ծանրանալով

անլուծօրէն կը լծուի հողիս ամութեան
 Ամութիւնը տարածուեր էր լեզուիս եւ գանկիս մէջ
 ոսկորներուս վրայէն պէտք է անցնէի հասնելու
 սահմանաւոր վայրիս վայրերը անսահման
 Անդրադարձայ որ լեզուս հատուած էր
 ձեռքերս պորացած էին
 ոտքերուս մէջ մահուամբ աճող որդեր կային
 ողնայարս տեղ մը չունէր յենելու
 Տրտամաջ պատկերները ինձմէ դուրս հանեցի
 արփեհարքած շարականներէն դուրս ելայ անդարձ
 մայթերուն ինկած լուսատ հեւքի պէս
 ծիրանի փողին մէջէն դուրս քաշեցի
 Երկճճ
 ես լեցուն եմ հիմա
 եւ յախտենական
 ինչպէս ճիչը Կոմիտասի

Քու յիշած ձեւերովդ չէ որ գրեցի այբուբեննիս տառերը խրթին
 Գրեցի ինչպէս երեսացին ինձի
 Քառերու ասեղը մերկ մորթիս վրայ կարելի է ետք երկար
 կանգնեցայ ըսի՝ գեղեցկութիւնդ չեմ
 սիրուի՛ր՝ եմ ես
 Մութին մէջէն գտայ բոլոր կորսուած քառերդ ձայներս խեղդուած
 եւ ուրուայնամուտ պատմութիւնդ էի
 գմբէթ որ իր խոշորացիք այքը խրած էր խորութեան հողի
 Սիւն՝ ուր երեկոն հանեց պատմուճանքը իր
 երբ Լեւոնաշղթան թաթը գուգառաջ
 գուկը դրաւ գիշերուան ուսին
 Մենք լոյս աչքերով չտեսանք զիրար
 Երկար հեղձումէ մապապուրծ հիմա
 բոլոր ճիչերդ կարեցի վրաս
 վախիդ լաչակը ուսէս նետեցի
 աղօթքներուդ գլխանոցը մութ հանեցի գլխէս
 աղապատանքի մոմերդ քանդեցի
 եւ արեւափայլ մազերս ձգած ուսերուս կոնքիս
 սիւս կը մտնեմ այդ հրէ հրէ
 եղէգներուն մէջ
 Հայեցուցեր եմ մեր լծորդութեան անկամութիւնը
 Միանգամընդմիջտ հեռացիր ջղանցքէս որպէսզի երկնեմ դժուար կոշումդ
 Օ ոչ հրաշքը մէկ ակնթարթի ճարպիկութիւն չէ
 հրաշքը կը սկսի այն ակնթարթին երբ կը պարտադրես ինքզինքդ
 ճանչնալ դժկամութիւնդ

Ականջներդ պիտի ցաւին քայց յանցաւոր չեմ

Հասունցած կարծրացած մթապատ
 փշածաղիկին հիւթը դրի աչքերուս
 ինչի որ դպայ՝ Անապատին մէջ ինկաւ

Ըսի քոյոր խնամակալներուս որ արիւնս դիւրալոյծ չէ
 մարմնիս հոսքը պիտի կաթի լարծուն տարածոյթներուն
 ու մնայ անայլայլ անձոյլ
 Կը խօսիմ հապար չեզուներով
 ըլլորին վրայ Անապատին համը կը թափառի
 Այքերս բազմախորշ անցեալի ֆուֆորներով կը պսպղային
 Փշածաղիկին հիւթը դրի աչքերուս եւ սկսայ տեսնել
 Ակիւբը ցաւալի գործողութիւն էր
 բայց ապաքինումը այսպէս կը վարթնի
 Չուպեցի սպասել յիշողութեանս որ կու գար
 կարելոյս ու մոլեգին
 պատգամ մը արձակելով դեղնատուն թախիծ ցանելով չորս դին
 Կ'ուպէի բռնել մագաղաթները յուպահեղձ ու մերկ
 որոնք Երկրիս ոռած հողէն կաթի պէս դուրս կը հոսէին

Անապատը խելագար մայր՝ գրկեր էր քեզ
 Մինչդեռ իր բազուկներէն խլուեր էի հետու
 արիւնատուութեամբ կը տառապէի
 Աս ինչ վայր է
 ինչի որ հպիմ պատգամ մը կ'արձակէ
 Կ'ուպէր որ ինքզինքս թաղէի մահուան երգերուդ մէջ
 ամէն անգամ որ երգերդ մտիկ ըրի՝ նստաքաւ արիւնս
 Մի կախուիր քղանցքէս չեմ կրնար բուծել քեզ
 իջիր փոսին մէջ
 Քեզմէ ետք շարունակելը հրաշագործել է
 քեզմէ ետք հրաշագործելն է որ պիտի շարունակէ
 ժամանակի թունաւոր լուան ժայթքած է
 քարակտոր եռակտոր անբեկանելի

Պիտի ցաւին ականջներդ բայց խանցատր չեմ

Չայնէպ առաջ ճեղքուեցաւ սի'լոսս

Աստուծոյ պէս խօսեր եմ հետդ ամբողջ հոգիով եւ սրտով
 դեռ ինչո՞ւ
 կեանքիս խորհուրդը կը հարցնես

Երկիր
 ճշմարտութիւնդ աչքերես մեծ էր երբ ծնայ
 ճշմարտութեանդ հոգին գտայ եւ ոչ թէ մարմինը
 որոնեցի պայն

հասած արձագանգներու թրթռացումին մէջ
 նրբամու ձեւերու անտառներուն մէջ
 գոյեղագոյն կիրքերու խարխիւներուն մէջ
 Մինչ այդ Անապատին մէջ
 մշտադող անունդ կը շոյէր բեկումիս կնճիոները
 ոսկորներս մեծցան փշածաղիկներու նման
 գիտէիր որ ողնայարիդ մէջ կարօտիս ծուծը կ'ապրի
 թող խօսի լուսինդ երկիր
 հիմա որ արինըլուայ՝ հասեր եմ պողպատին
 ո՛ւր աքաղրեմ լալահառայ բառերը
 Դեռ չեմ գիտեր թէ ո՛ր ջրհեղեղը փարատեցաւ
 Իր նաւը ձգած լերանս վրայ
 ո՛ւր գնաց խռոված ջրհեղեղը
 Անտառներս քակուեցան մոխրացան
 ո՛ւր ցրուեցիր արմատներս
 Բարկացայ քեզի Աստուծոյ պէս ամբողջ հոգիով եւ սրտով
 դեռ ինչո՞ւ
 կեանքիս խորհուրդը կը հարգնես

Մեռելները կ'ապրին մեր շուրջը ծառացած ձեռքերով
 անոնք տխուր են մեզի համար
 անոնք մեռած կը մնան սխալ պատճառներուն համար
 անոնք կ'ուտեն մեր բառերը եւ կու գան զիջերելու
 մեր մարմիններուն մէջ

երկիրս ամէն բան կորսնցուց բացի յիշողութենէն

Մենք բոլորս հսկումի մէջ ենք
 Գիշերը լարած է իր երկրաքիչ կնճիթը
 Էսօր դուման է մեր լեռների վրայ
 այսօր փամփուշտ է Անապատին մէջ
 Հին թնդանօթները բացած են իրենց ենթալեզուն
 Ինչու են ստիպուեցայ դիմաւորել լեզուին ամէնէն տխեղծ եւ տափակ ձեւը
 ինչու ես պիտի դիտէի տարիներով բեմադրուող եղբրախաղը
 մոխրակիր դաշտերը եւ աստղերը կարմիր
 գիտակցելով որ ամբողջ աշխարհի մէջ այսքան կարմիր չեն աստղերը
 եւ հիմա՝ աղմուկը որ դարանակալ ձայներու ոստայնին մէջ կը թփրտայ
 եղկումեղկ լեզուներէն մեղմացած քաղցրագին բարեխառն
 Բացէք վարագոյրները որ տեսնէք այս թունաւոր աղմուկը
 կ'ուզէ որ զերեզմանատուներու կողքին ապրինք
 մեր գինեմու հայրերը միմիայն անոր մահուան մասին կը խօսին
 մեր ծոյլ հայրերը անոր լեզուն թանգարանի մը կը վերապահեն
 անվերջ խաչակնքումները փրկութիւն նկատելով
 Մինչ տեղի կ'ունենայ անոր կեանքի՝ ցնցումը
 փոյթ չէ թէ ուր պիտի հասցնէ մեզի Անապատին պօրութիւնը

Ո՛ր հեռաւոր միայնակ ձեռքերու բանակներն են
որոնք շինեցին ամուր գիծերու այս շղթան
ուր պիտի ալ խոնջ հանգչի Եղեռնը յարաքաւալ

Համր ու անձայն կու գան կու գան ծանրաքայլ
վառօղը՝ իրենց կուրպ բերաններէն հրթրուած ճիչ
երբ հոգին կը պարէ եւ մարմինը իր ներքին գալարումը կը կղպէ
եւ կը բացուին տեսիլները որոնք մեր մանկութիւնը չարչարեցին
իրար ետեւ շարուած օրերու վարհուրանքը եւ բառերը անդոհին
պատրանացնոր եւ ինքնահար
օտարոտի ներքնայարկերուն մէջ հեւընկալ ապաստանած

Համր ու անձայն եկան եկան նահատակի աչքերով
ուր կը շնչէին դարերու փոթորիկները
եկան ոստայնանկեալ մեր պատմութիւնը մատնելու կրակին
եւ արդարութիւնն էր
արնագոյն կուպերուն ինկած կայծակի շեղք
ուր թանձրացեալ կատաղութիւնը կը սկսի վառիլ
իրենց սրտի խունկին հետ որ դեռ սրտի չէր վերածուած
եւ մենք տեսանք ծուխը պալան պալան
խաւարի մէջ արձակուած հռնդիւնը
Մենք մեր պապերուն պէս դիակառքեր չտեսանք
դիակները մնացին ասպնջական մայթերուն
Վայրենի ցաւ մը իրենց այտամկաններուն
մէկը միւսին անցուցին ծածկագիրը եղելութեան
Նարեկները շարտելով՝ հողին տակը ծածուկ թուղթեր պահեցին

Նորընծայ Սարը շարժող ուխտաւորներ
անդուռ անցեալներէ ելած
ուրացուած իրենց իսկ տունէն
հում եւ արնաշաղախ խոովքներով
ամբաքապուկ արձակեցին սլաքները կայծակէ
Ոգեկան որջան ոլորտներէ ետք աղօտած քաղցրութիւններէն կրկեալ
կեանքի մուտքին իսկ ստեղծուած այս խաւարումին
իրենց արեան հետ յոյսը հոսեցուցին
Երանաբաղձ եւ լուանցոյց այդ դէմքերը
մոմիացած աչքերով այդ դէմքերը ինկած
իրենց արեան շապիկներուն վրայ ուր կը կպէր յուսափշուր սիրտը ցեղին
կը տեսնէին կը տեսնէին կը տեսնէին
աշնան օր մը յանկարծ ծաղկող ծիրանին

Հապիկները արեան սահմանացիր բեկրապատար
բարձի նման կակուղ եւ ճամբուն պէս կարծր

Պէտք չունիս բերելու ամոքում աշխարհի սարսափին
 երբ մեր սարսափը վերածուած է հեզնանքի
 տրտմութիւնը՝ վայրոյթի աղէտը՝ կշիռքի եւ ցաւը՝ ձայնի
 կամուրջներ չկան
 մի խուսափիր իրաւին եւ տխուրին հետ ապրելէ
 աշխարհի երեսին շարտէ իր քարոզած մարդկայնութեան շեղջակոյտերը
 երբ չի թողուր որ մեր պողպատէ ձեռքերը
 մեր մանուկ ուրախութիւնները շոյեն
 ծնրադրէ արեան երկրատարած շապիկներուն քով
 եւ սորվեցո՛ւր Աստուծոյ
 որ այսպէս է
 երբ Սէրը կեանքէն աւելի մեծ կ'ըլլայ

Ոտքի ելիր

մենք շիփշիտակ պիտի նայինք ողբերգութեան աչքին
 անահ ահաբեկման լոյսը հեղելով մեր հոգիին փակ դժոխքէն
 Արտաւազդի քով քանտարկուած ձիերը թառանջ կը քաշեն
 մեր յուսաբեկման աղջամուղջը փարատի պիտի
 կամարներէն եւ աստիճաններէն ոչինչ կը յայտնուի
 Դերդ է որ պիտի պաշտպանէ քեզ պաշտպանէ՛ դերդ

Զգացական ջրհեղեղներէ դուրս թեւարձակ
 Ներքայլումդ դէպի հոգիիդ հեղանուտը
 ուր թաղած էինք ամէն բան որ կատարեալ էր
 այսինքն սեւը ուրկէ կրակը անցած էր
 անձուկ վարհուրագին կայչուն
 Սփիւռք օրինառաջ եւ անիծապարտ
 Լոյսի նման ծննդապօր
 ստուերի պէս սերմնապահ
 Լոյսի նման միահեծան
 ստուերի պէս ինքնակոչ
 Ստուերի պէս բաժանելի
 լոյսի նման ինքնասլաց
 Լոյսի նման ընթեռնելի
 եւ ստուերի պէս անտիպ
 Լոյսի նման բազմատարած
 ստուերի պէս ինքնամփոփ
 Լոյսի նման հաւատացեալ
 ստուերի պէս դիւրախաբ
 Լոյսի նման ինքնուղի
 ստուերի պէս հնապանդ
 Լոյսի նման ինքնաբաւ
 ստուերի պէս մակաբոյծ
 Լոյսի նման բազմիմաստ

ստուերի պէս երկդիմի
 Լոյսի նման յաւերժական
 ստուերի պէս կարճատեւ
 Լոյսի նման ստուերահաճ
 Ստուերի պէս լուսաբաղձ

Մեր երակներուն մէջէն դեռ հողի որբա՛ն հոսանքներ պիտի անցնին
 որ հասնի Հողը

Շողաթոյր երկինքին տակ անշնչացած շապիկներ
 մեր հոգիին թանգարաններուն մէջ դնենք
 Դատարաններու մէջ մի շարուիք մտիկ ընելու բռնանուագները
 Դնենք անոնց սուրբ մատնահետքերը
 Իրենց տրուած դատավճիռներուն վրայ
 որպէսզի մորթերու եւ ոսկիներու քովնտի սակարանէն
 պահ մը դուրս գայ արգարութիւնը եւ շնչահեղձէ բուն ոճրարարները
 Մատնահետքեր՝ ուր սառած է արիւնը եւ զօրութիւնը կ'ապրի
 քսենք վանոնք մարդկայնութեան
 կորաքամակ կերպարին եւ փորուած հանուած այքերուն
 Պահպանել այդ սուրբ մատնահետքերը
 որոնք թիթեռնիկներ չբռնած՝ խրեցան Անապատին մէջ
 անոր մահաբեր ախորժին մէջ
 արշալոյսի միջանցքները փնտռելով
 որպէսզի արեւին խիղճը չխաւարի դարձեալ

Ազգի մը հացն է արդարութիւնը եւ ամբողջ ազգս անթի է
 Դեռ քանի՛ դիակ պիտի գլտորի ապագային մէջ
 Հօրազոյն սերմերն են որ անձնասպան կ'ըլլան
 Ճարճատիւն տարածութեան վրայ՝ անշարժ օրորոցներ
 չկառուցուած սեմեր չմրոտած կաթսաներ կապարակոծ բերթեր
 ծնողներու հառաչանքներ առանց ձայնատրի
 ցալը համր ու ներաբնակ ինչպէս կեանքը հողին
 ինչպէս վաակի վերադարձի յուսադիշրումը
 Մեր անցեալի եւ ներկայի աղաղակները
 հոգիիդ մէջ դիր եւ դուրս մի հաներ աղաղակները ձայնասակ չեն

Այնպէս ընենք որ մեր վաակները հաւատան մեզի
 էջ էջ քանանք Անապատի խորհրդատետրը
 եւ ցոյց տանք լոյսը անհերքելի անհատնելի
 որուն սրսփումէն իրենց սիրտը ճեղքուի՛լ գիտնայ
 Ծիրանին եմ ես
 այքերուդ գոյնը
 Ամրահատիկը նոտի

ափիդ ջրապինդ
 Մեքի սուրն եմ
 տանդ մուտքին կախուած
 Արծիւը կրկնատենդ
 կնքանիջ ճամբուդ
 Եւ ողկոյզն եմ սեւ
 բայց հրացուուն համը արեւի
 Արեան ջրապինն եմ
 Դեռ մուրապիս չհասած
 Վըրէս խորունկ ցուն եկաւ Շողեր ջան
 Եւ Տըլէ Եամա՞ն
 եւ երգն եմ Երկրին
 պահէ գորգորա՛ մինչեւ որ տանիս վիս հետդ Երկիր
 Եւ այս է այս է միակ գոյութիւնդ ամենակեցոյց
 հեղեալ հոգիիդ այսօր եւ վաղը
 առաւօտ լոյսի
 արդար արեգակ
 ամբողջ աշխարհին եւ Տանս վրայ իբրեւ լոյս ծագեա՛

ՎԵՎԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

(Գ. մաս եւ վերջ)

Լ Ո Ւ Է Յ Ա Յ Ա Տ Ա

Մ Ա Ր Դ Ը՝

ՈՐ ԻՆՔՆ ԻՐ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԵՅԱԻ

ԵՌԱՐԱՐ ԹԱՏԵՐԱԽԱՂ

Հայացուց՝ ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՏԵՐ-ՋՕՐ, ՎԱՃԱՌԱԿԱՆ ՍՈՒԼԷՅՄԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ

(Սուսկայման անբու կը մտնէ եւ կը տեսնէ իր ազգիկը՝ Փաթիմէն, տաշտ մը գրկած) :

ՍՈՒԼԷՅՄԱՆ — Ո՛ր է մայրդ :

ՓԱԹԻՄԷ — Հայուն քովն է, հայրիկ :

ՍՈՒԼԷՅՄԱՆ (հեզմեղով իր ազգիկը) — Հայուն քովն է... Հայուն քովն է...

ՓԱԹԻՄԷ — Երկրորդ փամփուշտը հանելու վրայ է :

ՍՈՒԼԷՅՄԱՆ — Իսկ դո՛ւն ինչ գործի վրայ ես :

ՓԱԹԻՄԷ — Եռացած ջուրը տանելու վրայ եմ, հայրիկ :

ՍՈՒԼԷՅՄԱՆ (ծաղրական շեշտով) — Որպէսզի մօրդ օգնես երկրորդ փամփուշտը հանելու գործողութեան մէջ :

ՓԱԹԻՄԷ — Հայրիկ, ինչո՞ւ այսպէս կը խօսիս :

ՍՈՒԼԷՅՄԱՆ — Եւ ինչպէ՞ս կ'ուզէիր, որ խօսէի :

ՓԱԹԻՄԷ — Հայրիկ, ինչո՞ւ այսքան բիրտ ես :

ՍՈՒԼԷՅՄԱՆ — Որովհետեւ մօրդ արարքներուն եւ վեհանձնութեան սիրոյն տունս պիտի քանդուի...

ՋԱՀՐԱ (անբու) — Փաթիմէ, անապարէ՛...

ՍՈՒԼԷՅՄԱՆ — Մահի ըրէ մօրդ վայելին...

ՓԱԹԻՄԷ — Դուն հարցերը պէտք եղածէն աւելի կը բարդացնես :

ՍՈՒԼԷՅՄԱՆ — Քո՛ւ ալ տունդ պիտի քանդուի...

ՓԱԹԻՄԷ — Թող քանդուի :

ՍՈՒԼԷՅՄԱՆ — Քանի մը օր՝ եւ Ա՛ճէտը մաստանին երեսիդ կը նետէ. է՛՛հ, անկէ ետք թող մայրդ մատը խածնէ :

ՅԱԹԻՄԷ.— Թող նետէ... Ի՞նչ արժէք ունի որ...
(Սուլէյման կը մօտեցայ ազնկամ եւ սպասակ մը կ'իջեցնէ):

ՅԱԹԻՄԷ.— Մայրի՛կ...
ՋԱՀՐԱ (ճերտէմ).— Աճապարէ, ո՛ւր մնացիր...

ՍՈՒԼԷՅՄԱՆ (կը յարձակի Ֆաթիմէի վրայ, կը բռնէ ականջէն եւ կը սպասու-
նայ).— Եթէ անգամ մըն ալ պատասխան տաս՝ դու՛ն էր պիտի կոտ-
րէ՛մ, կը Հասկնա՞ս...

(Ջահրա կը յայտնուի դրամ ճեղքէն, կը տեսնէ ամուսինը այդ կացու-
քեան մէջ եւ օգնութեամ կը փութայ, հորը ձեռքէն ազատելու համար աղ-
ջիկը):

ՋԱՀՐԱ.— Չո՛ւք՝ աղջիկը...: Աղջիկն, ջուրը Սիւլէյմանի հասցուր: (Ֆաթիմէ
կը մեկնի): Ինչո՞ւ զարկիր:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Որովհետեւ ծեծի արժանի էր: Նստէ՛ եւ հարցը քննենք հան-
դարտ ջիղերով:

ՋԱՀՐԱ.— Ի՞նչ բան կ'ուզես որ քննենք:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Չահրա, քանի՞ տարի կ'ընէ, որ մենք միասին ենք:

ՋԱՀՐԱ (զղային վիճակով).— Շա՛տ:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Հանդարտ, հանդարտ խօսէ...

ՋԱՀՐԱ.— Ուզածդ ի՞նչ է... ըսէ՛ եւ վերջացուր:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Պէտք է յանձնենք հայր:

ՋԱՀՐԱ.— Կէսօրուան աստղերը քեզի ակնի մօտ են...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Խե՛նթ, ձեռքովդ պիտի քանդես առնդ:

ՋԱՀՐԱ.— Սուլէյման, աչքիս լոյսը, այս խօսքերովդ դուն քեզ այսքան մի՛
յողնեցներ, դե՛ս՝ դորժիդ:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Բայց եւ Աճմէտին խոստացայ, որ պիտի յանձնեմ հայր:

ՋԱՀՐԱ.— Եւ ես ի՞նչ կապ ունիմ այդ խոստումին հետ:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Չահրա, դուն աստուածաձայն եւ ինքնիշխան կին մըն ես...
ամբողջ Տէր-Ջօրը կը վկայէ, թէ այդէս ես:

ՋԱՀՐԱ (ձանձառաբար արտայայտուող շեշտով).— Աստուածաձայնութիւնը ի՞նչ
կապ ունի մեր նիւթին հետ:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Այդ հայերը կեաւուրներ են... յեղափոխութեան միջոցով
փորձեցին մեր պետութիւնը քայքայել... բայց Օսմանեան պետութեա-
նը Աստուծոյ պետութիւնն է՝ իր իսկ հողին վրայ: Հետեւաբար, պէտք
է յանձնենք, առիկա՝ մէկ (Ջահրա ոչ մէկ արժէք կու տայ ամուսինին
խօսքերուն եւ կը սկսի քայլի դէպի բնիմ միւս կողմը. Սուլէյման կը
հետեւի Ջահրայի՝ գայն համագիլու վճարակամութեամբ): Երկրորդ՝
աղջկանդ ապագան եփբար դետը պիտի նետես, որովհետեւ, եթէ չա-
րունակենք ապաստան տալ այս հայերուն՝ Աճմէտը պիտի չամուսնա-
նայ Ֆաթիմէի հետ: Եւ առիկա մեղք է...

ՋԱՀՐԱ (հեզմամբով).— Եւ արդեօք ձե՞ռքը պէտք է համբուրենք, որպէսզի
մեր աղջկան հետ ամուսնանայ:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Եթէ այդպէս ընէ՝ մարդը իրաւունք ունի... որովհետեւ ե-
թէ չարունակենք հայր մեր քով պահել՝ իր ապագան ալ պիտի վը-
տանդուի...: Մի՛ մոռնար, որ մենք իր երկրորդ ծնողքն ենք:

ՋԱՀՐԱ.— Ինչո՞ւ պիտի վտանդուի...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Որովհետեւ իր մրցակից սպանները այս առիթը պիտի օգ-
տադործեն եւ պիտի ըսեն...

ՋԱՀՐԱ.— Կարա՞ղը կ'ուզեմ...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Կարա՞ղը... Պէտք է յանձնենք եւ մեր փեսային հանդէպ մեր պարտականութիւնը կատարենք. մնաց որ, մեր ճշմարիտ կրօնքը այդպէս կը հրահանգէ...

ՋԱՀՐԱ (զղային ոտքի ելլելով).— Եւ կրօնքը վկայութեան կը կանխես, դիտով, յիմար, խարդախ...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Չափը անցուցիր, շատ անցուցիր, պէտք է սահմանդ յարդես:

ՋԱՀՐԱ.— Անցուցի՞ր...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Այո, ե՛ս եմ հոս տղամարդը:

ՋԱՀՐԱ.— Բայց տղամարդը ա՛ն է, որ ճշմարտութիւնը կը խօսի:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ես ճշմարտութիւնը կը խօսիմ...

ՋԱՀՐԱ.— Լսէ՛, խօսքը իր կափարիչը պտաւ. եթէ այս նիւթը անպամ մըն ալ բանալ փորձես՝ մտիկ ընող ականջ պիտի չգտնես:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Անմիտ, հարցերը քեզ միևիկէ հո՞ս հասցուցին...

ՋԱՀՐԱ.— Նոյնի՞նկ աւելիին...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Լա՛ւ, կը տեսնես...

ՋԱՀՐԱ.— Սուլէյման, դուն ամուսինս ես եւ ես քու արդար պահանջներէդ ո՛չ մէկը կը մերժեմ... Բայց հայր յանձնելը արդար չէ, որովհետեւ պիտի սպաննեն զայն:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ուրեմն, հայր քեզի պիտի ձգեմ եւ անդարձ պիտի մեկնիմ:

(Ջղային շարժումներով դուրս կ'ելլէ, Զահրա կը վազէ ամուսնոյն ետեւէն, յետոյ՝ անձայն-անըշուկ կը վերադառնայ: Ներս կը մտնէ Յարիմէ):

ՖԱԹԻՄԷ.— Ի՞նչ ունէս, մայրիկ:

ՋԱՀՐԱ.— Ոչինչ, ոչինչ... Աւարտեցի՞ր վէրքը կապելու գործողութիւնը:

ՖԱԹԻՄԷ.— Այո, մայրիկ:

ՋԱՀՐԱ.— Փաթի՛մէ, աղջիկս, քովս եկուր, մտնեցիր...

ՖԱԹԻՄԷ.— Ի՞նչ կայ, մայրիկ:

ՋԱՀՐԱ.— Աղջիկս, այս հայուն եւ անոր քրոջ ապաստան տալու մեր արարքը մեզ պիտի առաջնորդէ ամուսնութեանդ ճարտողութեան... Այս մասին մտածա՞ծ ես...

ՖԱԹԻՄԷ.— Եւ դուն ի՞նչ կ'ուզես:

ՋԱՀՐԱ.— Ատուտա՞ծ իմ... կարծի՞քը կ'ուզեմ իմանալ եւ դուն հարցումիս հարցումով կը պատասխանես:

ՖԱԹԻՄԷ.— Իսկ ես քու կարծիքդ կ'ուզեմ գիտնալ:

ՋԱՀՐԱ.— Իմ կարծիքս այն է...

ՖԱԹԻՄԷ.— Այո... ես պիտի ընեմ այնպէս՝ ինչպէս դուն կ'ուզես:

ՋԱՀՐԱ.— Իմ համոզումովս՝ ապաստան տալը ճիշդ քայլ մըն է: Բայց կ'ուզեմ, որ դուն համոզումով կողքիս կանգնիս եւ ոչ թէ որովհետեւ ես այդպէս կ'ուզեմ:

ՖԱԹԻՄԷ.— Հայերը խեղճ մարդիկ են եւ մենք պէտք է պաշտպանենք զիրենք, այս է իմ համոզումս:

ՋԱՀՐԱ.— Ի՞նչ ալ ըլլան գոհողութիւնները...

ՖԱԹԻՄԷ.— Ի՞նչ ալ ըլլան գոհողութիւնները:

ՋԱՀՐԱ (աղջիկը համբարելի ետք).— Հոյակա՞պ ես, աղջի՛կս... (Սիւլա ցերս կը մտնէ): Եղբայրդ քրտնիլ սկսա՞ւ:

ՍԻԼՎԱ.— Այս, մօրաքոյր...

- ՁԱՀՐԱ.— Փա՛ռք Աստուծոյ, լաւ նշան է։
- ՍԻԼՎԱ.— Մօրաքոյր, հարցում մը ունիմ...։
- ՁԱՀՐԱ.— Հարցուք, աղջիկս։
- ՍԻԼՎԱ.— Ինչո՞ւ համար երբորդ փամփուշտը չհաննցիր հղբօրս մարմինէն։
- ՁԱՀՐԱ (ծպտնով) — Լաւ, աղջիկս, բացատրեմ...։
- ՍԻԼՎԱ.— Հրամէ...։
- ՁԱՀՐԱ.— Յահորին յոգնած մարմինը չի թոյլատրեր, որ չորս փամփուշտը մէկ անգամէն հաննիք. այդ իսկ պատճառով, երէկ գիշեր փամփուշտ մը հաննցի, այսօր՝ ուրիշ փամփուշտ մը, իսկ վերջին երկու փամփուշտները պիտի մնան իր մարմինին մէջ, որովհետեւ ոչ մէկ վտանգ կը ներկայացնեն։
- ՍԻԼՎԱ.— Այս բոլորը ուրկէ՞ որված ես, մայրիկ։
- ՁԱՀՐԱ.— Աղջիկս, քեզի չըսի՞, որ մենք պետեի ենք...։ Այս բոլորը զուտ ալ պէտք է գիտնաս եւ ես քեզի պիտի սորվեցնեմ...։
- ՍԻԼՎԱ (նարխոսիքամբ) — Իրա՞ւ...։
- ՁԱՀՐԱ.— Տա՛յ Աստուած...։ Հիմա, ներողամիտ եղի՛ր, աղջիկս, ես պիտի երթամ, որպէսզի քեզ մը հանգստանամ։
- ՍԻԼՎԱ.— Գնա՛, մայրիկ...։
- ՖԱԹԻՄԷ.— Եկուք, հոս նստինք (կը սկսի քալի տիւնին ուղղութեամբ)։
- ՍԻԼՎԱ.— Ժի՛շտ է, որ մեզ հալածող սպան... (կը տատանի)։
- ՖԱԹԻՄԷ.— Այո, նշանածս է։
- ՍԻԼՎԱ.— Հիմա, մեզի ապաստան տալէ ետք ձեր յարաբերութիւնը ինչպէ՞ս է։
- ՖԱԹԻՄԷ.— Ձինք տեսած չունիմ...։
- ՍԻԼՎԱ.— Անշուշտ, մեզի ապաստան տալը նեղացուց քեզ։
- ՖԱԹԻՄԷ.— Ոչ... բայց նեղուած եմ մեր բաժանումին համար։
- ՍԻԼՎԱ.— Բաժանումին պատճառը մենք էինք։
- ՖԱԹԻՄԷ.— Ո՛չ, Սիլվա... Եղբայրդ պաշտպանելը ինծի համար կարեւոր հարց է։
- ՍԻԼՎԱ.— Ծնորհակալ եմ...։
- ՖԱԹԻՄԷ.— Ես ալ մարդ եմ...։
- ՍԻԼՎԱ.— Տաթիւմէ, ինչպէ՞ս ծանօթացար իրին։
- ՖԱԹԻՄԷ.— Մօրաքոյրս տունը սենեակ մը վարձած էր։ Հոն ծանօթացայ, յետոյ հանդիպելու առիթ ունեցանք եւ զգացի, որ ան երազներուս այն քաջ ասպետն է, որ դիտ պիտի փախցնէ...։ Նախ խօսեցանք ալ՝ քերու լեզուով, յետոյ հասկցանք, որ դիտը կը սիրենք...։ Խոստովանեցանք մեր սէրը... եւ ձեռքս ինչպէս։
- ՍԻԼՎԱ.— Ո՞վ է այդ սպան...։
- ՖԱԹԻՄԷ.— Թուրք գիւղացիի մը զաւակը, որ իր քաջութեան համար սպայի աստեճան ստացած է։
- ՍԻԼՎԱ.— Հայրը գիւղացի՞ է...։
- ՖԱԹԻՄԷ.— Այո...։
- ՍԻԼՎԱ.— Մենք ալ գիւղացի ենք։
- ՖԱԹԻՄԷ.— Ի՞նչ բան կ'ուզես։
- ՍԻԼՎԱ.— Երբ մանկազն կը բռնենք՝ իրարու պէս կը բռնենք...։ Հայ ըլլանք թէ թուրք, արաբ ըլլանք թէ սերպ, եւ երբ կը հնձենք՝ դարձեալ իրարու պէս կը հնձենք, բայց երբ կը սպաննուինք, մեր աղքատ եղբայրներուն ձեռքով կը սպաննուինք... կը հասկնա՞ս, Տաթիւմէ...։

ՏԱՔԻՄԷ.— Հայե՞րն ալ Հարուստներ ունին...

ՄԻԼՎԱ.— Այո, Տաթևի մէջ. բայց անոնք փախան, երբոր զէպքերուն Հոտը աւին... Իրենց Հարստութիւններով Եւրոպա փախան... մինչդեռ, մընացողները մենք եղանք, մորթուողները մենք եղանք... մե՛նք՝ աղքատներ...

ՏԱՔԻՄԷ.— Փէլ մը ձեր գիւղին մասին խօսէ:

ՄԻԼՎԱ.— Ի՞նչ խօսիմ... ձեր գիւղը նման է միւս բոլոր գիւղերուն... աղքատներ եւ Հարուստներ, ցիւխ տուներ եւ անբաւարար ջուր, որ...

ՏԱՔԻՄԷ.— Միլվա, թուրքերը կ'ատե՞ս...

ՄԻԼՎԱ.— Այո՛:

ՏԱՔԻՄԷ.— Նոյնիսկ աղքատները...

ՄԻԼՎԱ.— Այո՛:

ՏԱՔԻՄԷ.— Բայց անոնք ալ ձեզի պէս են...

ՄԻԼՎԱ.— Կ'ըսես, թէ Ահմէտը գիւղացիի զուակ է... այսինքն՝ աղքատ է...: Բայց ինչպէ՞ս չատե՞մ զինք, երբ եղբորս գլուխը կը պահանջէ:

ՏԱՔԻՄԷ.— Բայց Ահմէտը գիտակից չէ:

ՄԻԼՎԱ.— Ե՛րբ պիտի գիտակցի... եղբայրս մորթելէ՞ ետք...: Թուրքերը կ'ատեն մեզ, որովհետեւ ջրիստոնեայ ենք...

ՏԱՔԻՄԷ.— Բայց Ահմէտը ինծի ըսաւ, որ Օսմանեան կայսրութեան օժանդակողները գերմանացիներն են, իսկ գերմանացիները ջրիստոնեայ են...: Ուրեմն, թուրքերը ինչո՞ւ գերմանացիներուն հետ կը զործակցին, այնքան ատեն որ, ինչպէ՞ս կ'ըսես, ատելութեան պատճառը կը բռնեն է...

ՄԻԼՎԱ (կը մտածէ... Գաղտնիքով ճշմանը կը մտածէ... յետոյ).— Չեմ գիտեր. սպասենք, Չահրա մօրաքոյրը Հարցնենք:

ՏԱՔԻՄԷ.— Հարցուցի եւ ինք ալ չգիտցաւ:

ՄԻԼՎԱ.— Չահրա մօրաքոյրը չգիտցաւ... անկարելի է...

ՏԱՔԻՄԷ.— Այո, չգիտցաւ:

ՄԻԼՎԱ.— Լսէ՛, մանկութենէս ի վեր ես այս խօսքերը կը լսեմ. «Թուրքերուն հետ մի՛ քալեր, անոնք արիւն կը ծծեն...: Իրենց կերակուրէն չուտես, մէջը թոյն կ'ըլլայ...: Թուրքը պոչ ունի եւ զայն Հազուստին տակ կը պահէ»...: Բայց որովհետեւ նոյն դիւղին մէջ միտան կը բնակէինք՝ թուրքերու հետ քալեցի, սակայն արիւնս չծծեցին... Իրենց կերակուրէն կերայ, բայց մէջը թոյն չզտայ: Եւ անգամ մը, երբ ինք տարեկան էի ու ինձմէ՛ մէկ տարեկան պզտիկ թուրք տղու մը հետ առանձին մնացի, զինք դեստին ձգեցի, յետոյ Հագուստը վեր առի՛ պոչը տեսնելու համար...

ՏԱՔԻՄԷ (շահագրգռութեամբ).— Բան մը գտա՞ր...

ՄԻԼՎԱ.— Ո՛չ, մեզի պէս են:

ՏԱՔԻՄԷ.— Ուրեմն ինչո՞ւ թուրքերը կ'ատէք:

ՄԻԼՎԱ.— Որովհետեւ մեզ կը մորթեն...

ՏԱՔԻՄԷ.— Գիւղացիները մէկը չեն մորթեր:

ՄԻԼՎԱ.— Ահմէտն ալ գիւղացի է, բայց...

ՏԱՔԻՄԷ.— Միլվա, գլուխս կը դառնայ, բան մը չեմ հասկնար եղածնե՛րէն...

ՄԻԼՎԱ.— Եո՛ւ ալ...

(Սուլէյման Անըս կը մտնէ):

ՍՈՒԼԷՑՄԱՆ.— Աղջիկ, մայրդ ո՛ւր է :
 ՖԱԹԻՄԷ.— Քիչ մը Հանգստանալու գնաց :
 ՍՈՒԼԷՑՄԱՆ.— Եթէ գուն շըլլայի՞ր եւ զինք ալ շտրէ՞ի՝ չէի վերադառնար :
 ՖԱԹԻՄԷ.— Իր՞է նեղուեցա՞ր եւ գացիր...
 ՍՈՒԼԷՑՄԱՆ.— Ատիկա քու գիտնալիքդ չէ. ներս մտի՞ր եւ կերակուրս պատ-
 րաստէ : (Ֆաթիմէ ներս կը մտնէ, Սիլվա կը փորձէ հետեւի Ֆաթի-
 մէի, բայց Սուլէյման գայն կը կեցնէ սեւեռաբիր հայեացքներով) :
 Ո՛ւր կ'երթաս...
 ՍԻԼՎԱ.— Ֆաթիմէին օգնելու :
 ՍՈՒԼԷՑՄԱՆ.— Մաշալլա՛, մաշալլա՛... քսանը չթեւակոխած գեղեցիկ հա-
 յուէի մը տուն ապրի եւ ես չնկատե՛մ... : Անունդ ի՞նչ է :
 ՍԻԼՎԱ.— Սիլվա, Հօրեղբայր :
 ՍՈՒԼԷՑՄԱՆ.— Մաշալլա՛... այս գեղեցիկ վարդը ասկէ առաջ ինչպէ՞ս ու-
 շադրութիւն չէ գրաւած... Հա՛, այն ատեն դուն հայկական հաղուստ
 հազած էիր, որուն ես զեռ վարժուած չէի... Սիլվա՛... ինչ ալ գե-
 ղեցիկ անուն է... : (Կը փորձէ ձեռքը երկարել աղջկան եւ ան խոյս
 կու տայ) : Որքա՞ն յիմար մէկը պիտի բլլամ, եթէ այս աղջիկը յանձ-
 նեմ... :

(Զահրա ներս կը մտնէ) :

ԶԱՀՐԱ.— Վերադարձա՞ր :
 ՍՈՒԼԷՑՄԱՆ.— Եւ մի՞թէ կրնամ բաժնուել քեզմէ...
 ԶԱՀՐԱ.— Միայն ա՛յդ կը փոփոխեմ :
 ՍՈՒԼԷՑՄԱՆ.— Բայց կ'ուզե՞մ քիչ մը հետը խօսիլ :
 ԶԱՀՐԱ.— Ոչ իսկ բառ մը :
 ՍՈՒԼԷՑՄԱՆ.— Ինչո՞ւ միշտ վատօրի պէս դիւրազրգիւ ես...
 ԶԱՀՐԱ.— Որովհետեւ Հետս պիտի խօսիս նիւթի մը մասին, որուն պատաս-
 խանը արդէն գիտես :
 ՍՈՒԼԷՑՄԱՆ.— Ո՛չ, Զահրա, կ'ուզեմ ուրիշ նիւթի մը մասին խօսիլ...
 ԶԱՀՐԱ.— Ի՞նչ նիւթի մասին :
 ՍՈՒԼԷՑՄԱՆ.— Հայերը երբեք պիտի չյանձնենք... Հողիս իրենց մատաղ...
 ԶԱՀՐԱ (ծպտելով)— Որոշումդ զիս չի հետաքրքրեր... կարծիքդ Հարցնող
 չեղաւ...
 ՍՈՒԼԷՑՄԱՆ.— Օ՛ք... :

(Լոյսերը կը մարիմ) :

ԵՐԿՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

ԹՐՔԱԿԱՆ ԳԻՐՂԸ

(Մուրատ ցարին կը մտնէ : Ներս կը մտնէ Նաման : Մուրատ անա-
կընկալի կը մտնուի) :

ՄՈՒՐԱՏ.— Նաման, տղաս...
 ՆԱՄԱՆ.— Իր միտով եւ ոսկորով (կ'աղբաբարբիս) :
 ՄՈՒՐԱՏ.— Փա՛ռք Աստուծոյ, ե՛րբ եկար :
 ՆԱՄԱՆ.— Երէկ, Հօրեղբայր :

ՄՈՒՐԱՏ — Նստէ՛, նստէ: (Կը մտնեցնէ այցելուս, կ'ուսարժանայ քանի մը քայլ, կը հանէ պղնձեայ քուս մը, գայթ կ'երկարէ Նորամտին, որ կը խմէ հրամցուած քուրը): Աճճէտը ինչպէ՞ս է, տղաս:

ՆԱԱՄԱՆ — Ձեռքերդ կը համբուրէ:

ՄՈՒՐԱՏ — Ինչո՞ւ չեկաւ:

ՆԱԱՄԱՆ — Գործ ունի, Հօրեղբայր, զործ...

ՄՈՒՐԱՏ — Գործ ըսիր, ինչո՞ւ գործը պատրուակ կը բռնէ:

ՆԱԱՄԱՆ — Պատրուակ կը բռնէ...

ՄՈՒՐԱՏ — Իր վերջին այցելութենէն ետք, դուն երեք անգամ եկար...

ՆԱԱՄԱՆ — Ես զինուոր եմ, մինչդեռ ինք սպայ է... յետոյ, այս անգամ ես տարբեր պատճառով եկայ:

ՄՈՒՐԱՏ — Ի՞նչ պատճառով...

ՆԱԱՄԱՆ — Ձինուորութենէն պանեցայ:

ՄՈՒՐԱՏ (խնդալով) — Գանեցա՞ր...

ՆԱԱՄԱՆ — Այո, արիւնի մէջ թաթխուած պատառ մը հաց է:

ՄՈՒՐԱՏ — Բայց դուն շեւ կ'ընար այդ մէկը ընել... որովհետեւ զինուորութիւնը ճակատագրի է:

ՆԱԱՄԱՆ — Ո՛չ, չէի պատկերացներ, որ զինուորութիւնը այսպէս է... Հակառակ տարր, օձիքս պիտի կարենամ ազատել...

ՄՈՒՐԱՏ — Լաւ, ի՞նչ է այն պատճառը, որ քեզ հոս զրկեց:

ՆԱԱՄԱՆ — Ձինուորի մը վրայ կրակեցի, եւ եթէ Աստուած չգթար ու աղ- դառ օգնութեան չհասնէր՝ մահնախ ցիցի մը վրայ պիտի ըլլար:

ՄՈՒՐԱՏ — Աստուած մի՛ արագէ...

ՆԱԱՄԱՆ — Հօրեղբայր, ես յստակ եզրակացութեան մը հասայ. Սուլթանին սրբազան պատերազմի հրաւերը անիմաստ հրաւեր մըն է...

ՄՈՒՐԱՏ — Ինչե՞ր կը ձարասես...

ՆԱԱՄԱՆ — Մենք կը սպաննենք հայ, պուլկար, սերպ եւ յայն զիւղացիները միայն... եւ ասիկա մեզ գործել կը նշանակէ...

ՄՈՒՐԱՏ — Բայց անոնք անհասարակ են:

ՆԱԱՄԱՆ — Մեզի պէս մարդիկ են:

ՄՈՒՐԱՏ — Այս խօսքիդ համար զլուխդ վրայ պիտի տաս, որովհետեւ միշտ չէ որ օձիքդ կրնաս ազատել:

ՆԱԱՄԱՆ — Հօրեղբայր... ես երեւան հանցի, որ մենք՝ պարզ զինուոր- ներս, այսինքն՝ արհեստաւորներու եւ հողամշակներու գաւակներս, միայն մենք մեր դէմ պատերազմ կը մղենք, իսկ երբ այլ ժողովուրդ- ներու արհեստաւոր եւ գիւղացի անպաշտաններուն գաւակները կը սպան- նենք, զանոնք կը սպաննենք, որովհետեւ աղաներուն, պեկներուն եւ էֆէնտիներուն հաշիւները այսպէս կը պահանջեն, ա՛յն աղաներուն եւ էֆէնտիներուն, որոնք Կոստանդնուպոլիս նստած, մեր՝ աղքատներուն եւ խեղճներուն հողիներուն հետ կը խաղան...

ՄՈՒՐԱՏ — Կարելւորը ա՛յն է, որ պէտք է դուն քեզի ուշադրութիւն ընես:

ՆԱԱՄԱՆ — Երբ վերադառնամ, սկզբունքով խոհանոցին մէջ պիտի աշխա- տիմ կամ ինծի վարչական գործ մը պիտի տան... տղադ ինծի այս խոստումը տուաւ:

ՄՈՒՐԱՏ — Ի՞նչ ջուրի վրայ է...

ՆԱԱՄԱՆ — Լա՛ւ... շարունակ վեր կը նայի...

ՄՈՒՐԱՏ — Վե՛ր կը նայի... տղա՞ս (խնդալով):

ՆԱԱՄԱՆ — Այո, կը կարծէ... Թէ անոնց կարգին պիտի բարձրանայ...

ՄՈՒՐԱՏ.— Ձեռք քաշենք այս նիւթէն... Հարսնցուն ինչպէ՞ս մէկն է:
 ՆԱՍՄԱՆ.— Գեղեցկուհի մը...
 ՄՈՒՐԱՏ.— Ձինք անսա՞ծ ես:
 ՆԱՍՄԱՆ.— Ո՛ր: Բայց այն ծերունին, որուն տունը կը բնակիմ, ինծի ըսաւ,
 Բէ՛ Տէր—Ձօրի ամէնէն գեղեցիկ աղջիկներէն մէկն է եւ ամէնէն վե-
 Հանձնը:
 ՄՈՒՐԱՏ.— Փա՛ւք Աստուծոյ, որ սասնկ աղջկայ մը հետ պիտի ամուս-
 նանայ:
 ՆԱՍՄԱՆ (Քսակ վը հանելով).— Ա՛ն, հօրեղբայր...
 ՄՈՒՐԱՏ.— Օրհնեա՛լ է Աստուած, այս դրամը ճիշդ ժամանակին եկաւ...

(Խալի մերս կը մտնէ):

ՌԱԻԼ.— Ողջո՛ր ձեզ: (Կը կրկնեն ռզոյցը): Մուրատ, օրերդ ինչպէ՞ս են:
 ՆԱՍՄԱՆ.— Ինչ է, հատը քու տարիքդ ունեցող մէ՞կն է, որ հետը անուշով
 կը խօսիս:
 ՌԱԻԼ.— Դուն ի՞նչ կապ ունիս հարցին հետ, քեզի ի՞նչ:
 ՆԱՍՄԱՆ.— Ամէ՛ն ինչ, ան հօրս տեղն է:
 ՄՈՒՐԱՏ.— Ձգէ դինք... ի՛ի... ի՞նչ կ'ուզես:
 ՌԱԻԼ.— Հա՛տ, պատասխանդ կ'ուզեմ:
 ՄՈՒՐԱՏ.— Քայլի, լաւ մտիկ ըրէ, այնքան տեն, որ մասնավարները կը
 շարունակեմ վճարել, ինձմէ բան մը չէք կրնար առնել:
 ՌԱԻԼ.— Օսման տղան այս անգամ ամբողջ գումարը կը պահանջէ, պարտքը
 մէկ անգամէն պէտք է փակես:
 ՄՈՒՐԱՏ.— Ասիկա դիմացինը անկարելիութեան մատնել է:
 ՌԱԻԼ.— Ասոր իրաւունք կ'ըսեն:
 ՆԱՍՄԱՆ.— Ի՞նչ է հարցը:
 ՄՈՒՐԱՏ.— Օսման ազան, Նասմա՛ն:
 ՆԱՍՄԱՆ.— Ի՞նչ կ'ուզէ:
 ՄՈՒՐԱՏ.— Արտս առնել կ'ուզէ. հայերուն ընդարձակ հողերը կարծես չէին
 բաւեր... մարդիկը դեռ չեն կշտացած...
 ՌԱԻԼ.— Մի՛ ծածծմեր, ըսէ, որ ազահութիւնը մարդոց հոգիները դը-
 նած է... (Խօսքը Նասմանին ուղղելով): Լսէ՛, մարդ, Օսման ազան
 իր արտին փոխարէն ուրիշ արտ մը պիտի տայ...
 ՄՈՒՐԱՏ.— Անջրդի հողերէն, այնպէս չէ՞...
 ՌԱԻԼ.— Եւ ձեռք պիտի քաշէ Մուրատին փոխ տուած իր գումարէն:
 ՆԱՍՄԱՆ.— Բայց ան արտը չ'ուզեր ծախել:
 ՌԱԻԼ.— Մտիկ ըրէ. հազար անգամ կ'ընէ եւ ես հա՛տ Մուրատին կը բա-
 ցատրեմ, որ ազային իրմէ անեկիք արտը անոր համար կարելոր է,
 որովհետեւ անոր մէջէն ջրանցք մը պիտի բանայ եւ զայն պիտի կապէ
 այն անջրդի հողերուն, որոնք Նախապէս հայերուն կը պատկանէին:
 ՆԱՍՄԱՆ.— Իսկ ինչպէ՞ս պիտի ջրէ իր նոր արտը...
 ՌԱԻԼ.— Ազային հետ կրնայ համաձայնիլ... (կակագնելով)... ըլլը՛ այսին-
 քըն... հարցը...
 ՄՈՒՐԱՏ.— Քայլի, ես կ'ստեմ նիւթի մը շուրջ անվերջ դարձողները, իսկ
 դուն ինձմէ լաւ կը ճանչնաս ազան:
 ՌԱԻԼ.— Կ'երզնու՛մ, որ պիտի համաձայնիք:

ՄՈՒՐԱՏ — Ինքզինքս ինչո՞ւ իր գուժէն կախեալ պիտի դարձնեմ: Եւ արկես, եթէ միւս աղաներն ու պեկերը նման ծրագրերի մը գործադրութիւնը արտօնեն իրեն:

ՆԱԱՄԱՆ — Ի՞նչ ըսել կ'ուզես, հօրեղբայր:

ՄՈՒՐԱՏ — Տղաս, ըսել կ'ուզեմ, որ առուին ջուրը հիմա ջրարբի արտերուն արդէն չի բաւեր. է՛հ, միւս աղաներն ու պեկերը ինչպէ՞ս պիտի թոյլատրեն իրեն առուին ջուրը իւրացնելու ծրագրի մը՝ ոռոգելու համար այդքա՞ն ընդարձակ հողեր:

ԽԱԼԻԼ — Հաժ, քեզի զաղտնիք մը պիտի ըսեմ, բայց կը խնդրեմ, որ ուրիշ մէկուն չըսես:

ՄՈՒՐԱՏ — Ընէ՛... .

ԽԱԼԻԼ — Օսման աղան Ռաշատ էֆէնտին գործընկեր պիտի դարձնէ. դուն գիտես, թէ Ռաշատ էֆէնտին ինչ դերը ունի Կոստանդնուպոլսոյ մէջ, եւ չըջանին մէջ ո՛չ մէկ աղա պիտի համարձակի իր դուխը բարձրացնել կամ բաւ մը արտասանել:

ՄՈՒՐԱՏ — Հաղարեորդ անգամ ըլլալով կը կրկնեմ, որ Ռաշատ էֆէնտին վախճալով եթէ նոյնիսկ բոլոր աղաներն ու պեկերը համաձայն գտնուին... կը կարծե՞ս, որ առուին ջուրը բոլորին պիտի բաւէ:

ԽԱԼԻԼ — Իսկ ես ալ հազար անգամ կը կրկնեմ, որ համաձայնութեան մը պիտի հասնիք:

ՄՈՒՐԱՏ — Ինչո՞ւ գերեզմաններուն մէջ պառկիմ, անհաճոյ երազներ տեսնելո՞ւ համար:

ԽԱԼԻԼ — Հաժ, ըրածդ հարցերը բարդացնել է:

ՆԱԱՄԱՆ — Իրաւունք ունի:

ԽԱԼԻԼ — Ազան լաւ կը ճանչնայ զինք... .

ՄՈՒՐԱՏ — Այսի՞նքն... .

ԽԱԼԻԼ — Հակառակ կամքիդ պիտի բռնազրուէ արտը... ուրեմն, ինչո՞ւ չօգտուիս իր առաջարկէն:

ՄՈՒՐԱՏ — Եւ ո՞վ պիտի պարտադրէ... .

ԽԱԼԻԼ — Դրամը, զոր իրեն պարտական ես:

ՄՈՒՐԱՏ — Իր ճշգրտ մասնավճարները օրը օրին հասցուցած եմ, իսկ իւրաքանչիւր մուրհակի հետ նաեւ տոկոսը կը վճարեմ:

ԽԱԼԻԼ — Է՛հ... կը նախազգուշացնեմ քեզ, հետեւանքին պատասխանատուն դուն ես:

ՄՈՒՐԱՏ — Կը սպառնա՞ս... .

ԽԱԼԻԼ — Ո՛չ... երբեք... ես միայն իր բանքերն եմ... իսկ բանքերին պարտականութիւնը իրեն վստահուած խօսքը փոխանցելն է... Կ'ուզեմ աւելցնել, թէ աղան արտը ձեռքէդ պիտի առնէ... ուղե՞ս թէ չուզես, որովհետեւ յախազանցուած յամառութիւնդ այս մեծ ծրագրերն իրականացումը չի կրնար կեցնել:

ՄՈՒՐԱՏ (պահ մը կը լռէ, ապա կը քֆնէ) — Ատուած անիծէ ձեզ, թէ՛ զինք, թէ՛ քեզ... Ատուած չկշտացնէ ձեզ... .

ՆԱԱՄԱՆ — Ի՞նչ կ'ընես, եթէ աղան արտը բռնազրուէ:

ՄՈՒՐԱՏ — Ո՛չ մէկ բանէ մի վախեար, աղա՛ս. միայն դիակիս վրայէն անցնելէ ետք արտը կրնայ առնել... Պէտք է գիտնաս, որ Ապու Աւմէտը տղամարդ է, սովորական մարդ մը չէ... .

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆ ՍՈՒԼԵՑՄԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ

(կը տեսնենք Սուլէյմանը եւ Զահրան: Ֆաթիմէ Անրա կը մտնէ):

ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Ֆաթիմէ, ո՞վ է:

ՖԱՔԻՄԷ.— Հիքմէթը, քեզ տեսնել կ'ուզէ:

(Սուլէյման դէպի դուռ կ'ուղղուի):

ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Հիքմէթ, ներս հրամէ... (Հիքմէթ ներս կը մտնէ):

ՀԻՔՄԷթ.— Ողջոյն ձեզ... (բայտը կը պատասխանեն):

ԶԱՀՐԱ.— Բարեւ, բարեւ... նստէ, տղա...:

ՀԻՔՄԷթ.— Շնորհակալ եմ, ճորագորջը...:

ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Ֆաթիմէ, Հիքմէթին բան ժը հրամայուր:

ՖԱՔԻՄԷ.— Սիրով, հայրիկ:

ԶԱՀՐԱ.— Ե՛ր ըլլաջ:

ՀԻՔՄԷթ.— Ահմէտը դիւ զրկեց եւ ստիպուած եմ աճապարանքով խօսիլ, որդէսդէ ֆաթիմէին վերադարձէն առաջ...:

ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Ի՞նչ է հարցը:

ՀԻՔՄԷթ.— Ան... մատանին ձեզի կը վերադարձնէ...: (Թաշկիմակի մէջ փաթարուած մատանին հանելով): Դուք անշուշտ դիտէք, թէ մատանին ինչպէս կարելի է իր մատը եւ անցընել...:

(Ֆաթիմէ ներս կը մտնէ քանի պատիճը ձեռքին, առանց մերկաներում ուշադրութիւնը գրաւելու):

ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Կէ՛նք է, ի՞նչ է...:

ԶԱՀՐԱ (մատանին ամենայն հպարտութեամբ առնելէ ետք) — Եւ մատանին եւ մատը անցընելու միջոցը հայերը յանձնելն է, ախպէս չէ՞:

ՀԻՔՄԷթ.— Այո, ճորագորջը...:

ԶԱՀՐԱ.— Ըսէ իրեն, որ էթէ քեզ Զահրային կոտորող ազգականական կապը չըլլար... ան դիտէր, թէ քեզ ինչպէ՛ս պէտք է հեռացնէր իր տունէն, դոր պաշարած է հայերուն եկած օրէն...:

ՖԱՔԻՄԷ (քանի պատիճը գետին նետելէ եւ մատանին մտնէն համելէ ետք) — Է՛մ մտիկ ըրէ, Հիքմէթ: Ըսէ իրեն, որ մատանին երկրորդ անգամ մատը պիտի չանցնի... ա՛ն... ահա՛ իր մատանին...:

ՍՈՒԼԵՑՄԱՆ (քաղաւիպ) — Ֆաթիմէ, դուն աղջիկ ես եւ ախպէս խօսելու իրաւունք չունիս...:

ՖԱՔԻՄԷ.— Ո՛չ, հայրիկ, խնդրը արժանապատուութեան հարց է եւ չեմ ուզեր, որ դուք միջամուխ ըլլաք:

ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Ես հայրդ եմ...:

ՖԱՔԻՄԷ.— Ձեմ ուզեր, որ երջանիկ ապագաս կերտուի փոխան մարդու ժը արեան, որ...:

ԶԱՀՐԱ.— Ֆաթիմէին բռածը հասկցա՞ր, Հիքմէթ... ա՛յս է պատասխանը...:

ՀԻՔՄԷթ.— Այո... հասկցաջ... մնաք բարով...:

ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Սպասէ...:

ՀԻՔՄԷթ.— Ի՞նչ կ'ուզես:

ՍՈՒԼԵՅՄԱՆ (խօսքը Ֆաթիմէին ուղղելով) — Դուք շատ զգածուած ես եւ չես գիտեր, թէ ինչ կ'ընես...

ՖԱՏԻՄԷ — Ասիկա վերջնական պատասխանս է: Գնա՛, Հիբէթ, եւ ըսէ իրեն...: (Հիբէթը կը մեկնի եւ Ֆաթիմէ տան ներսի կողմը կ'անցնի):

ՍՈՒԼԵՅՄԱՆ (խօսքը կնկան ուղղելով) — Կրնա՛իլ հետը այսպէս չլաւարիլ...

ՋԱՀՐԱ — Ուրեմն ինչպէ՞ս վարուէիք: Ան մատանին կը զրկէ եւ մենք լըռեա՞նք, ձե՞ռքը համբուրենք, որպէսզի Ֆաթիմէն իրեն կին ընդունի... Ի՞նչ ընէինք...: Յետոյ, Ֆաթիմէն ի՞նքն է, որ իր ապագային հետ աչքպէս վարուեցաւ եւ... կը կարծեմ, որ իր վարմունքը ներքէն էր:

ՍՈՒԼԵՅՄԱՆ — Թեթեւամտին մէկն է, իր քիթէն անդին նայած չունի եւ ապագային անկասկած պիտի գըջայ...: Ամէն պարագայի, երբ հարցերը խաղաղին, կացութիւնը պիտի փորձեմ սրբազրել...

ՋԱՀՐԱ — Աղջկան հարցերուն միջամուխ մի ըլլար:

ՍՈՒԼԵՅՄԱՆ — Իմ աղջիկն է...

ՋԱՀՐԱ — Աղջկադ մէջ դուն միայն ջու շահերդ կը տեսնես...

ՍՈՒԼԵՅՄԱՆ — Հերթ է ձայնդ բարձրացնես...

(Սիլվա ներս կը մտնէ ընթրիքի սիւտեղը բռնած եւ առաջը կ'առնէ վիճարարութեան, որ կրնար ծագիլ երկու ամուսիններուն միջեւ: Ձանրա ջը- ղային վիճակով իր սենեակը կը փաշտի):

ՄԻԼՎԱ — Ֆաթիմէն նեղուած է եւ ընթրիքը ես պատրաստեցի:

ՍՈՒԼԵՅՄԱՆ — Հոս գիր եւ դուռը գոցէ:

ՄԻԼՎԱ — «Դո՞ւրը դոցէ՞ք ըսիր...»

ՍՈՒԼԵՅՄԱՆ — Այո, կ'ուզեմ հետդ խօսիլ... առանձին:

ՄԻԼՎԱ — Ըսէ, հօրեղբայր, առանց դուռը դոցելու:

(Սուլեյման կը զգայնանայ եւ դուռը ինք կը գոցէ):

ՍՈՒԼԵՅՄԱՆ — Մտիկ ըրէ... դուն մեծ աղջիկ ես եւ պէտք է հասկնաս զիս...

ՄԻԼՎԱ — Ի՞նչ պիտի հասկնամ, հօրեղբայր...

ՍՈՒԼԵՅՄԱՆ — Հօրեղբայր մի՛ ըսեր... լաւ մտիկ ըրէ...: Առաջին վայրկեանէն, որ քեզ տեսայ, գեղեցկութեամբդ հմայեցիր զիս եւ կ'ուզեմ, որ դուն իմ... (Սիլվա կը փորձէ փախչիլ կղպուած դրան ուղղութեամբ, բայց Սուլեյման կը կեցնէ զինք): Մի վախճար, քեզի վնաս պիտի չհասցնեմ... ձեզ, որ խօսքս աւարտեմ: Կ'ուզեմ...

ՄԻԼՎԱ — Հօրեղբայր, դուն տարբերու եւ հասկցող մարդ ես: Մինչդէռ ես կորսուած աղջնակ մըն եմ, որուն կը սպանայ իր ողբերգութիւնը:

ՍՈՒԼԵՅՄԱՆ — Ողբերգութիւնդ Յակոբն է... պիտի առողջանայ...

ՄԻԼՎԱ — Ո՛ր... իմ ողբերգութիւնս ծնողքիս, ընտանիքիս եւ ազգականներու ողբերգութիւնն է... ողբերգութիւնը բոլոր անոնց, որոնք իրենց հայրենիքէն վտարուեցան... եւ Յակոբը մէկն է անոնցմէ: Փոքր եղբայրս, մայրս եւ հօրեղբորս աղջիկը ես կորսնցուցի այն քարայրին մէջ, ուր անմեղ հայեր բանտարկեցին եւ մուսգին կրակ վառեցին: Յետոյ՝ անոնք բոլորն ալ շնչահեղձ եղան:

ՍՈՒԼԵՅՄԱՆ — Խնդրեմ, պու՛թս մի չարժիր... արամարանութեամբ կը խօսեմ հետդ... կ'առաջարկեմ, որ հետս ամուսնանաս...: Խօսքերուս իմաստը հասկցա՞ր, քեզի համար մեծ պատիւ է, որ դուն...



Մեկվա — Անշուշտ, ես կը մերժեմ այդ առաջարկը, բայց կը դարձանամ պարզապէս անոր համար, որովհետեւ ան, որ Զահրա ժորաքրոջ պէս կին մը ունի, ուրիշ կնոջ մը ամուսնանալու առաջարկ ներկայացնելու չէ...

ՍՈՒԼԷՅՄԱՆ — Լաւ մտիկ ըրէ, հետզ քանակցութեան շեմ նստած, ես կը պարտադրեմ քեզի...: Երկու օրուան պայժմանաժամ կու տամ քեզի, եւ եթէ համաձայն չգտնուին՝ Յակոբը թուրքերուն պիտի յանձնեմ: Հասկցա՞ր...: Կը պահանջեմ, որ հետս հալալ կամ հարամ ամուսնութիւն կնքես. այլապէս, եղբայրդ իր կեանքը վրայ պիտի տայ: Մէկը միւսին փոխարէն, հասկցա՞ր...: (Փայլեքը կ'ուղղէ դրամ ուղղութեամբ, կը բանայ դուռը եւ բանիւր մը յիշելով): Ասիկա ազդարարութիւն չկարծես, այդպէս պիտի ընեմ, իսկ եթէ Ֆաթիմէին կամ Զահրային առջեւ քերտէղ բառ մը փախցնես՝ իմ մէկ ազդանշանիս վրայ թուրք զինուորները ներս պիտի մտնեն եւ...

ԶՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՏԷՐ-ԶՕՐԻ ԹՐՔԱԿԱՆ ԶՕՐԱՆՈՅԸ

(Կը տեսնենք Ահմէտը՝ իր մահիճիմ վրայ երկարած, սիկարէթը շըրթմերում: Աշրափ ներս կը մտնէ երկու զինուորներու ընկերակցութեամբ եւ զինուորական բարեւոյ կ'ողջուցէ իր սպան):

- ԱՀՄԷՏ* — Ի՞նչ կ'ուզես:
- ԱՇՐԱՓ* — Դուք զիս ուզած էք, տէր իմ:
- ԱՀՄԷՏ* — Բան մը չեմ ուզեր... դնա՛:
- ԱՇՐԱՓ* (զարմացած) — Բան մը չէք... ուու...
- ԱՀՄԷՏ* — Կարեւոր հարցի մը համար քեզի պէտք ունէի, բայց միտքս փոխեցի:

(Աշրափ նախ զինուորական բարեւ մը կու տայ, յետոյ կը մեկնի, բայց սենեակին դրամ չհասած՝ Ահմէտ կը կեցնէ զինք):

- ԱՀՄԷՏ* — Բայց դուք ո՞ւր կ'երթաք:
- ԱՇՐԱՓ* — Սուլէյմանեկ, պահակութեան, վախճալով որ տոյզ վտանգաւոր հայր փախուստ կու տայ:
- ԱՀՄԷՏ* — Հա, եղբաւ, յիշեցի թէ քեզմէ ինչ պիտի ուզէի...
- ԱՇՐԱՓ* — Ի՞նչ կը պահանջէք, տէր իմ:
- ԱՀՄԷՏ* — Զինուոր Հիքմէթը ինծի զրկէ:
- ԱՇՐԱՓ* — Հրամանքդ, տէր իմ:
- ԱՀՄԷՏ* — Անտիպապէս...

(Հիքմէթ ներս կը մտնէ):

- ՀԻՔՄԷՏ* — Այո, տէր իմ:
- ԱՀՄԷՏ* — Եկա՞ր... Հոս եկուր:
- ԱՇՐԱՓ* — Սպան քեզ կ'ուզէ...
- ՀԻՔՄԷՏ* — Վայրկեան մը, տէր իմ: (Յան ձայնով եւ խօսքը Աշրափիմ ուղղելով): Ինչո՞ւ ուշացար:

ԱՇՐԱՑ.— Անակնկալ բաներ պատահեցան եւ մեր տէրը ինձմէ պահանջեց, որ իրեն հանդիպեմ...

ՀիֆՄէթ.— Լաւ, աճապարէ, վաճառականին տան առջեւ տղաքը հիմա քեզի — կը սպասեն. անոնց պահակութիւնը արդէն վերջացաւ եւ ես վստահ եմ, որ հիմա հասցէիդ արդէն անէնքներ ու հայրոյանքներ կը տեսնես...

ԱՇՐԱՑ.— Լաւ... (կը մեկնի):

ՀիֆՄէթ.— Ի՞նչ կ'ուզէք, տէր իմ:

ԱՀՄէՏ.— Հիֆմէթ, հոս եկուր:

ՀիֆՄէթ.— Ի՞նչ ըսիք, տէր իմ:

ԱՀՄէՏ.— Դուն իմ բարեկամս ես եւ ես կ'ուզեմ օգտուել թէ՛ տարիքէդ եւ թէ՛ անձնական փորձառութենէդ...

ՀիֆՄէթ.— Ձեր հրամանին տակն եմ, տէր իմ:

ԱՀՄէՏ.— Անկեղծօրէն՝ ես շատ յոգնած եմ:

ՀիֆՄէթ.— Գիտեմ, տէր իմ:

ԱՀՄէՏ.— Գիտե՞ս, ինչպէ՞ս...

ՀիֆՄէթ.— Ձեր մտատանջութենէն զիտեմ, ձեր աչքերէն զիտեմ, ձեր շարժումներէն զիտեմ...: Յետոյ՝ ես ձեզի փոխանցեցի Պաթիմէին պատասխանը...

ԱՀՄէՏ.— Ճիշդ է...: Ի՞նչ կը մտածես Պաթիմէին նկատմամբ ունեցած կեցուածքի եւ ի՞նչ հակադրութեան մասին...

ՀիֆՄէթ.— Մէկ առ մէկ, տէր իմ: Այս բոլոր հարցերը պիտի շնորհէին, եթէ Կոստանդնուպոլսէն շահանէր այն հեռագիրը, որուն մասին միայն ակնարկութիւն մը ըրիք ինձի: Բայց իմ դիմացս հեռագիրը չկարգադրեց եւ ես, անկապած, սխալ գնահատում մը պիտի ընեմ այնքան ատեն, որ ծանօթ չեմ բովանդակութեան: Յետոյ՝ ես կ'ուզեմ զիտեմ ուրիշ բան մը. Կոստանդնուպոլսը, իր լայնքով եւ երկայնքով, ինչո՞ւ այսքան չափազանցուած է փախտահանով մը, ինչ ալ ըլլայ անոր դործած ոճիւրը:

ԱՀՄէՏ.— Միայն բանակին ընդհանուր հրամանատարութիւնը չէ, որ չափազանցուած է, նաեւ՝ օսմանեան խորհրդարանը...

ՀիֆՄէթ (մեծ հետաքրքրութեամբ).— Ինչե՞ր կ'ըսէք, տէր իմ:

ԱՀՄէՏ.— Այս, նաեւ՝ օսմանեան խորհրդարանը... որովհետեւ այս հայուն սպաննած սպաներէն մէկը խորհրդարանի նախագահին ազգականն է...: Երբ հարցը նոր սկսած էր, ես մեր հրամանատարութեան ղրկեցի հեռագիր մը, ուր յայտնեցի, թէ զինու զօրութեամբ տունը չխուզարկեցինք, որովհետեւ կը զգուշանանք սպասամբութիւններէ, որոնք կրնան պայթիլ ցեղախմբային դիւրազանութիւններէ...

ՀիֆՄէթ.— Բարդութիւնները Հոս պէտք է վերջ գտնէին...

ԱՀՄէՏ.— Ընդհակառակն, բարդութիւնները ճիշդ Հոս սկսան:

ՀիֆՄէթ.— Չհասկցայ...

ԱՀՄէՏ (հեզմամբով).— Մեր պատուախնդիր սպաներէն մէկը, որ զիս շո՞տ կը սիրէ, ուզեց ծառայութիւն մը ընել ինձի եւ Կոստանդնուպոլսի ղրկեց իր մէկ հաւատարիմը, որ խորհրդարանին յայտնեց, թէ հայը սպաստանած է ինձի հետ կապ ունեցող անձի մը բնակարանը, իսկ ես այդ պատճառով է, որ կը խուսափեմ այն քայլերէն, որոնց դործադրումը իմ պարտականութիւններու ծիրին մէջ կ'ընայ:

ՀիֆՄէթ.— Լաւ, յետոյ՝ ինչ եղաւ:

- ԱՀՄԷՏ — Ստացայ Հեռագիր մը, որ ահազանդի ուժգնութեամբ կը հրահանդէր ինձի՝ կոխել տունը եւ հայր ձերբակալել նոյնիսկ բռնի ուժով:
- ՀԻՔՄԷԹ — Բայց իրականութիւնը այն է, որ մենք իսկապէս չենք կրնար տունը կոխել եւ հայր ձերբակալել զէնքի ուժով, որովհետեւ ցեղախըմբային զիրարզաձուլութիւնները արդէլք կը հանդիսանան:
- ԱՀՄԷՏ — Ատիկա ճիշդ է ինձի եւ քեզի համար, բայց... մարդիկը հոն ինչպէ՞ս պիտի համոզուին...
- ՀԻՔՄԷԹ — Ուրեմն, կարծի՞քս կ'ուզես...
- ԱՀՄԷՏ — Այո, Հիքմէթ:
- ՀԻՔՄԷԹ — Զէնքի ուժով տունը կոխենք:
- ԱՀՄԷՏ — Իսկ մեր նախատեսած ցեղախմբային ազատամբռութիւնները...
- ՀԻՔՄԷԹ — Գամիւլիկն ոչնական ուժեր կը պահանջենք:
- ԱՀՄԷՏ — Այդպէսով Ֆաթիմէն ալ պիտի կորսնցնեմ...
- ՀԻՔՄԷԹ — Երկու պարագային ալ Ֆաթիմէն պիտի կորսնցնես:
- ԱՀՄԷՏ — Ինչպէ՞ս...
- ՀԻՔՄԷԹ — Այո, էթէ զինու զօրութեամբ տունը կոխելու հրահանգները չգործադրես՝ աստիճանդ պիտի կորսնցնես, եւ աստիճանիդ հետ՝ նաեւ Ֆաթիմէն, որովհետեւ աստիճանիդ սիրոյն հայրը համաձայն դռնըւնցաւ Ֆաթիմէն քեզի կնութեան տալու առաջարկիդ:
- ԱՀՄԷՏ (ձարսուելով) — Եթէ տունը կոխեմ եւ հրահանգները գործադրեմ՝ Ֆաթիմէն պիտի կորսնցնեմ... Այս ի՞նչ ճակատագիր է, Աստուած իմ...
- ՀԻՔՄԷԹ — Ճակատագիրդ է, սիրելիս... Հետեւարար, կ'առաջարկեմ, որ անակնկալ խուզարկութիւնը զիշերով ընենք, առնուապէս աստիճանիդ սիրոյն...
- ԱՀՄԷՏ — Ո՛չ, ո՛չ, ուրիշ խաղ մը պիտի խաղամ:
- ՀԻՔՄԷԹ — Ի՞նչ խաղ:
- ԱՀՄԷՏ — Այնքան ատեն, որ նպատակը հայր ձերբակալելն է, ինչո՞ւ չխաղամ վաճառական Սուլէյմանի խաղը:
- ՀԻՔՄԷԹ — Ասկէ առաջ փորձեցիր եւ արդիւնքի մը չհասար:
- ԱՀՄԷՏ — Ծիւղդ ձեռով չփորձեցիր:
- ՀԻՔՄԷԹ — Ժամանակը բաւարար չէ, տէր իմ:
- ԱՀՄԷՏ — Ո՛չ, ո՛չ... Հիքմէթ (զինուարականի երաւայական շնչուով):
- ՀԻՔՄԷԹ — Այո, տէր իմ:
- ԱՀՄԷՏ — Կեցուցէ՛ք Սուլէյմանին հետ մեր գործարանութիւնը եւ տունը լաւ մը պաշարեցէք...
- ՀԻՔՄԷԹ — Հրամանդ, տէր իմ:

(Լալսերը կը մարին):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՏԵՐ-ԶՕՐԻ ԶՕՐԱՆՈՅԸ

(Կը տեսնենք Ասմէտը՝ գեղե մաքրելու գործով զբաղած վիճակի մէջ: Զինուարաններէն մեկը ներս կը մտնէ):

ԶԻՆՈՒՈՐԸ — Վաճառական Սուլէյմանը կ'ուզէ ձեզ տեսնել:

ԱՀՄԷՏ — Ներս առ:

ՍՈՒԼԷՅՄԱՆ (Յերս մտնելով)։— Ողջոյն ձեզ...

ԱՀՄԷՏ (լուրջ շեշտով)։— Բարեւ, հրամէ:

ՍՈՒԼԷՅՄԱՆ։— Հարցերը ինչո՞ւ այսպիսի ընթացք ստացան, Ահմէտ... դուն
օտարական մը չես, Զահրայի՞ն բնաւորութիւնը շատ լաւ գիտես ու
նաեւ գիտես, որ առաջին վայրկեանէն ետ իրեն դէմ կեցայ... Ինչո՞ւ
համար մեր գործառնութիւնը կեցուցիր:

ԱՀՄԷՏ։— Ազգականութեան նիւթը անջատէ խնդրէն, կարծեմ վերջ
զտեկու վրայ է...

ՍՈՒԼԷՅՄԱՆ։— Աստուած մի՛ արասցէ...

ԱՀՄԷՏ։— Քեզմէ պարէն գնելը կեցուցի՞նք, որովհետեւ տանը մէջ կը հիւ-
րասիրես փախստական վտանգաւոր հայ մը, զոր ո՛ր միտին հոստանդ-
նուզօրիսը կը պահանջէ մեզմէ, այլեւ... այլեւ... նոյնի՞նքն խորհր-
դարանք:

ՍՈՒԼԷՅՄԱՆ (ապշած)։— Խորհրդարանը...

ԱՀՄԷՏ։— Այո՛... խորհրդարանը. առ եւ կարդա՛ (Սուլէյմանի կ'ընկալէ
թուղթ մը, գոր ան կը կարդայ):

ՍՈՒԼԷՅՄԱՆ։— Բայց ինչո՞ւ խորհրդարանը...

ԱՀՄԷՏ։— Որովհետեւ այս սերտագործը, որ դուն պաշտպանութեանդ տակ
առած ես, խորհրդարանի նախագահին ազգականներէն մէկը սպան-
նեց... Կը հասկնա՞ս ասոր իմաստը...

ՍՈՒԼԷՅՄԱՆ։— Մէ՛ծ խնդիր է...

ԱՀՄԷՏ։— Այդ իսկ պատճառով եւ ինչպէս հետազոտին մէջ կարգացիր...
մենք պէտք է տունը կոխենք, ինչ ալ ըլլան մեր այս քայլին հետեւանք-
ները: Առ ի յարգանք քեզի՛ նախընտրեցի կեցնել մեր գործառնութիւ-
նը, որովհետեւ հոս դաս եւ... այս պահանջը ներկայացնեմ քեզի:

ՍՈՒԼԷՅՄԱՆ։— Ներկայացուր, տղա՛ս:

ԱՀՄԷՏ։— Առանց ազմուկի հայը մեզի պէտք է յանձնես:

ՍՈՒԼԷՅՄԱՆ։— Ասիկա արդար պահանջ է... բայց... ինչպէ՞ս...

ԱՀՄԷՏ։— Տան մէջ գտնուողը դուն ետ եւ ինչպէ՞սը դուն գիտես:

ՍՈՒԼԷՅՄԱՆ։— Զահրան եւ Ֆաթիմէն տունը ձգած չունին:

ԱՀՄԷՏ։— Ասիկա քու գործդ է, իմ գործս չէ... Այլապէս, պիտի ստիպ-
ւիմ միջամտելու...

ՍՈՒԼԷՅՄԱՆ։— Ո՛ր, ո՛ր... որքա՞ն ժամանակ ունիմ:

ԱՀՄԷՏ։— Եարաթ մը. կրնա՞մ քեզի վստահիլ:

ՍՈՒԼԷՅՄԱՆ։— Անկասկած:

ԱՀՄԷՏ։— Անկէ ետք զարձեալ կը սկսինք քեզի հետ գործակցիլ:

(Լսյաւերը կը մարի):

ԼՈՒԷՅ ԱՅՍՍԱ

(Շար. 3)

ՍՈՆԵՏ ՄԱՐԴՈՒՆ

Դու գիշերները ակնով կծկումս,
Վախով կս օրդ սկսում արդէն,
Դու, որ կռուել կս այս կեանք-մահու
Հագարակեզու բոցերում վարդէ՛:

Քո կերտած դարի լաւիճ ու վատին
Հարցականով կս մտնեմում յանախ,
Արդեօք գալո՛ւ է մէկը, որ չամի
Կամ չկրկնի սխալներդ ծանր:

Անկի՛գը, անվերջ այս երթը վկա՛յ,
Դու մտնում կս ն'ԱՆ, որ կը գայ,
Կը խօսի «ամել» քո իջի մասին...

Ու կս ալիւս ոչինչ չեմ ասում,
Իսկ եթէ նրա հասցէն կս ուզում՝
Քո փռչեկայած հայելին կ'ասի՛...

ՍՈՆԵՏ ՅԱՂԹԱՆԱԿԻ

Այսօր արեւը երգեհներ վառել,
Դառել է կեանքի կարօտը երէ,
Այսօր քո դիմաց երկրպագ իջել
Քրտնոտ մակատա դարձրել եմ վերե՛ւ:

Վազը կ'ունենամ մի հսկայ երկունք,
Որ կը առգի հողդ մայրաւան,
Ու ցայգայոյսին կը տեսնէ՛ք եւ դո՛ւք
Նրկնի կապոյտից դօղանցող Պաւգա՛մ:

Եւ ազանիներ կը ճախրեն օդում,
Եւ ոչինչ-ոչինչ չի լինի մթում,
Լակ բոյր կը լինի՛ հողի ու լոյսի՛.

Կ'իրականանայ մի մտքուած երագ,
Արդարութիւնը չի բուայ անհաս,
Այս տա՛ք շողի տակ՝ ո՛չ ոք չի մրսի:

ԱԼՄԻՆ

Քեհրան

Ե. Օ Շ Ա Կ Ա Ն

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

Ինչպէս ՎՄնացորդացի, նաև Վստեակ Պարզելեան զէպին մէջ Օշական կերպոված է ոյն եղանակը, որ ընդգրկուած ներթերէն մէկը կը պնդէ մէկ շուշում, առանց հանգրուանի, նոր սողի: Սոյն վէպին առաջին գլուխներու պարագային նման բաժինները հարկադրաբար սրբեցան յաջորդական թիւերով, իսկ հետագայ հատուածը, որ կը դրուողով զլիւստը հերոսին հոգեվարքը, կու տանք ամբողջութեամբ, Օշական առեալ մեծութիւն մասին լրիւ գաղափար մը տալու համար ընթերցողին:

Տարնապը — իրաւը — սկսեր էր սուտի պէս, սա հանդարտութեան հաստատումէն իսկ առաջ ու դասեր, ակնթարթի մէջ, իր իմաստին դերագոյն ծանրութիւնը: Նոյն շնչահեղձութիւնը, անշուշտ, բայց բուրբոյն ուրիշ վերահաստեմեամբ մը: Ոչ ցաւ: Ոչ դողդողալը հագին աքցանին տակ: Այլ ուղղակի խածոտում մը, շիչ առաջուան կատուի զգայութիւններում ամբողջական ծաւայումը, իր մարմինին բոլոր մասերուն վրայ հաւասարապէս: Կային ու չկային այդ մասերը նոյն հարագատութեամբ: Յետոյ ահաւոր վախը սուղումիմ: Մէկէն փանացեր էր փախչիլ մահիճէն: Թերեւս այս շարժումն էր պատճառը, որպէսզի հեղինակուէին Պարզելեանի հոգեվարքին աճէնէն սարսուղին յուզումները: Ինչ որ այս տազնապը դամած էր զինքը շրջապատողներուն ուղեղին, անջինջ ու բացարձակ, ասիկա սա վիճակներուն թաւայումը տեսնող, դասաւորող ու դայն շուրջիններուն հաղորդող իմացական պայծառութիւնն է: Ա՛մէն բան կը տեսնէր այդ հրաշալի ուղեղը, իրեն մտաուցուած այնքան տարօրինակ, տարազէպ կերպարանքներուն տակ իսկ, պահելով դատումը անխորիստ ու ամբողջ: Էջքի այս շարժումը պատճառ անշուշտ, զգացական կեդրոններու խախտումին, որ պիտի տեսէր ամբողջ տրամաշի ընթացքին: Երբ իր ահարեկ կանչէն Սոնան վազի էր ներս, Սահակ Պարզելեան տեսաւ այդ աղջիկը, որ կը քալէր զլուխը գետնին ու ոտքերը առաստաղին: — Պատկերը, վճռական յստակութեամբ, գերագոյն շրջումիմ: — Տարագ մը իրեն այնքան ընտանի, զոր դործածներ էր տիրական վայելութեամբ, անձերու, շարժումներու, շրջաններու գնահատումին մէջ հիմն ի վեր կործանելով անտաղանդ թշուառութիւններ, ինչպէս տաղանդաւոր ունեցմներ...: Շարժական դրայութիւններու սա խանգարումը, խաթարումը անձի աւելի կ'ըլլար անժուժելի, ահադեցիկ, երբ զգայարանական միւս կեդրոնները կը մնային հաւատարիմ իրենց պաշտօններուն, իբր թէ ոչինչ ըլլար պատահած: Անիկա հասկցաւ բաց պատուհանէն լուս

ձայնը եղբուհիներն թեւէն, լման ցերեկուան մէջ իր ներքը մթերուած յայգերուն կշիռովը: Անոր աչքերը կը պահէին իրենց կարելի ուժը, զինքը տեսնելու համար, մահիճովը, առաստաղ բարձրացած, շրջաւան: Այս տեղափոխումը այնքան ուղիղ, ամբողջ պատկեր մըն էր, որ այդպէս առկախ մարմինին վար հոսումը արգիլելու համար, մինչև զիտակցութեան վերջնական նուաղումը, վերմակին եղբերը մահիճին տակը ամրացնել հրամայեց, ու այդքանով ալ անբաւական՝ նստեցուց զինքը շրջապատողները մահիճին եզրերուն: Աւելին: Իր սրունքները անցընել տուաւ մահճակալին ոտքի կողմէն, բացուած քներուն: Կը խօսէր, շատ կամայ, բայց շատ խոր, իր հրամաններուն մէջ զգալով ու զգալի ընկնով վերջնական բաներ: Մինչև Արտակին ժամանումը անոր ձեռքերը զրկեց վաթթուած եղան Մոնային: Զմերժեց Արտակին Գոհարեանին ալ ձեռքը, որ կը ծանրանար իր սառած, քրտնազոզ զխոն, վարերէն, զորովագին, վախկոտ, խորպէս մարդկային, ա՛յնքան՝ որ տարիներէ ի վեր այս կնոջ հանդէպ իր զգուանքը թուցաւ կարծես: Անոնք նայեցան իրարու թերեւս իրենց տոնջին իրաւ, սիրազեղ նայուածքը: Յետոյ՝ ամէն ինչ պայծառացաւ իր շուրջը, անդորրապին, մշուշաւորումէն տակաւին գերծ յտակուսութեամբ մը — նոր, քաղցր աշխարհի մը նախաստուերին մէջ, ուր մեզ լացնող արտմութիւնները ըլլային հալած, շոգիացած հեքիաթին արքայութիւնը: Անիկա շորցուցած էր իր պատանութեան այդ դրախտը, անհուն իր մեղքերուն աղեղովը: Բայց զտաւ, որ զեռ գրադէտը չէր դադրած իր մէջ, քանի որ իր ուղեղը նոյն կորովով, յատկութեամբ կը տեսնէր ո՛չ միայն արտաքին աշխարհը, այլևս այն, մտածման միզամածները, որոնք ընդհանուր կազմաւորմանը մէջ անոր ուղեղին, կը փրթէին իրենց խորունկներէն, կը վառէին առնոր մտածման վառարաններուն — որքան շատ էր անոնց թիւը — վերայ ու կ'ըլլային իրականութիւն: Այս կարգի խելամտում մըն էր անընդամայն դատումը, զոր բանաձեւեց գրակալ, վերջին քառորդին քաղցրագին, նուաղումներով հետզհետէ ծաւալող այն վիճակը, զիրքերու մէջ, խաղաղ շիջումը կանխող հեշտութիւններուն, վիպասաններու գրիչին տակ, միամիտ՝ հաւատալու չափ այդ յիմարներուն յերբիբանքին: Յիմարներ, վճռեց ու հանեց բերնէն բառը, որ անիմաստ բացազանչութիւն մըն էր մահիճը շրջապատողներուն, բայց անոր միտքին մէջ արի ու արու մտածում: Մահը սիրտաբառութիւն մը չէ, որպէսզի ըլլար վերլուծելի: Մահը չի փորձարկուիր: Աւ շատ ցանցառ է թիւը մահէն դարձողներուն, որոնք անոր մէջ մըտնելու իրենց տպաւորութիւնները պատմած ըլլան դրողի ջիղերով: Արտակին ժամանումին հետ, անոր քրտինքը լման պատմուճան մըն էր, ազամանդակուտ, պատկերեց անիկա այս բառը նորէն ու արտասանեց: Զգիտցաւ, թէ ինչ էր ակնարկուածը: Թեթեւութիւն ու զիրութիւն, այդ աղամանդով լուսցումին իբրև հետեւանք: Կըրնանք շատ բաներ ըսել, երբ կեանքը այդպէս պուտ-պուտ պարպելու տան, այդ անդարման ապտումին տակ, անդարձ կորուստին իրաւ մարմինն ալ կ'ապրինք, մեր սիրելիներուն ու երբեմն, հոս դիտաւծին նման, մեր հաշուոյն: Տարտղնումի, բաժան-բաժան ծփանքի պատկերներ, մեր մէջն ու դուրսը, երբ առարկաները, զէմքերը, մութը, ըրային զանգակը, պատին նկարները կը քակուին իրենց զե-

ծերուն շէնքէն, իրենց զիրենց կրկնելով, տանապատկելով, կը քալեն, կը հեռանան, կը վերադառնան, անհուն սպասման կարճ անպարանջին անձուկը բարդելով մեր արդէն յոգնած, ճաթելու չափ պրկուած ուղեղին: Ու այս փոքր հէնքերը, շարժումի բեկորները իրենց իրենց կ'ըլլային իմաստ, ճարտարապետութիւն նոյնիսկ: Անիկա տեսաւ ու լսեց կէտցին վազքն ու չոր դիժը անոր ձայնին, ճիշդ այն թարմութեամբ, իրաւութեամբ, որով իր ուղեղին մէջ դաստառակուած էր պատկերը, տանամեայ սղու կակուղ, տարօրէն ընկալուող միտքին խորը անջինջ քանդակ, դրացի պտուաւի մը բակը, հոր զործելու տնակն աշխատանքին առջեւ, քիզ մը մնացած կտաւը աւարտուելու հոգին մէջ, մէկէն գլուխը հակած Ֆելիստիկի բժիշկին ու ա'լ շարժեցած: Վերջին քիզը կտաւի'ն: Երիտասարդութեան փորձեր էր անկէ վիպակ մը ձեւել ու վրիպած: Ո'վ կը հիւսէր թիւը Պարզեւեանի կեանքին կտաւին, քանի որ յստակ էին անոր զգայութիւնները այդ աշխատանքէն: Յետոյ դադար: Լոյսը կը լիանար, կը պայծառանար: Առարկաները կը հաւաքէին իրենց շուքերը, կտորները, բոլորն ալ բարձրօրէն հետու, օտար, մա'նուանդ անտարբեր: Կա'ն պահեր, որոնց ընթացքին առարկաներու հոգիները ըլլան տեսանելի: Սահակ Պարզեւեան կը նայէր լոյսին, հետզհետէ ուժաթափ իր աչքերը փակելու սարսափին մէջ, լամբին հեղուկնալը, խժորնալը որոշուէն դատուելով, սա երեւոյթները բացատրելու անկարող, բայց հզօր տառապանքին մէջ այդ բոլոր խանդարումները կտպելու մեծ քայտայտումին, ի'նք՝ որ իր երիտասարդութեան օրերուն իր ժողովուրդին հոգեկան ու բարոյական քայտայտումն էր նուաճել փորձեր, իր լուսադռն վիպակներով: Պլավտոսին յատումներ էին անոր վրայ, ուրիշներու ալ աչքերը, վերէն շարժող լոյսերը ջըլջիկ մը մատնուած, բայց պահելով իրենց մարդկային խորքն ու խորհուրդը, — բռնուած ու աննշահար, դրեթէ սուգի մէջ կայանաւոր նայուածքը Տիկին Գոհարեանին, որ մահուան ու կեանքին համար մէկ ու նոյն գահոյք մը եղաւ, սա քանի տարի է ու չէր կրնար վստահիլ մահուամբ գնելի խաղաղութեան մը, ի'նք՝ որ իր սիրտին խաղաղութիւնը գնել էր կարծեր մեռցնելով իր մէջը այնքան խորունկ նստած կեանքին խորհրդանշանը, ամէն բան զոհելով սա մարդուն թիւերուն մէջ գտնելու յոյսով հանգիստը, որ յատ է սա մեր աշխարհին, անհրաժեշտ կրկնապատկեր...: Սահակ Պարզեւեան չկարդաց այդ տազնապը այդ կնոջ նայուածքին մէջ, մնալով ենթակայ իր քնազդներուն վատութեան ու փնտռեց աչքերը անոր աղջկան: Սրտադրաւ, սիրազեղ, մարմնական զգայութիւններով յորդ, բարասուն էին այդ աչքերը, յստակ, յստակ մահաւանդ, որոնք կ'ըսէին ո'չ միայն նոր սորվուած — ահաւոր անապատը անգամ մըն ալ դարձաւ անոր ուղեղին կամարին, տակնուվրայ շրջելով ո'չ միայն անցեալը, այլեւ՝ սա հոգեվարքին սննեակը — բաներ, այլեւ՝ ուրիշ, շատ ուրիշ, իրաւ ալ բաներ, երկու հոգիէ միայն հասկնալի, ինչպէս կը կարծենք յաճախ տխուր պատրանքով: Պէտք կա'յ հոգեվարքներուն, խորունկ նուազումներուն յատուկ սա զգայութեանութիւնները, զեղծումները ընդլայնել, անոնց ցանցին մէջէն հասնելու համար մեր ապրումներուն համազումար դիրտին: Սահակ Պարզեւեան անհնարին բեկուտով մը զգաց աստիճանը իր ձեռքով իր վրայ զործադրած զրկան-

քին (չէր այցուած տղուն ուրուականէն, որ մինչև վերջնական խաւարումը պիտի չերեւար անոր բազմեանց տեսիլքներուն բեմին), սա աղջկան նայուածքին մէջ կարգալով իր կեանքին ամէնքն մեծ խորհուրդը, — չի գրուիր բառը, ինչպէս ինք վարանեցաւ ընել: Դարձուց նայուածքին սլաքը ու սա իսկ զատնութիւն էր անոր: . . . Ու անուշութիւններ, իր մարմինին ով դիտէ ո՛ր խորչերուն մէջ արգելափակ քանի՛-քանի՛ տարիներէ սազին: Ասոնք ալ զդայութիւններ էին, անոր միտքուն վրայ արձանագրուած, այնքան խարանդմանքու կողքին, զրկուածներու, անօթիներու (սեռէն) իր նուիրանքներուն փոխարէն, երբ կը փակէր շրթները երախտաւորեալին ու կ'անցնէր իր թշուառութեան, անօթութեան թխարանին: Պատկերներ, ժամանակէն ու աղտէն աղատ պայծառութեամբ, բայց համ ու զդայութիւն դարձեալ, թելադրելով, զարմանալի իրականութեամբ մը, հակառակ իրենց թաւալումին, բարսխումին արագութեան, անոր մէջ ընդմիջտ կորոտուած վիճակներու յարութիւններ, ո՛չ միայն իբր տեսարան, այլև՝ բարիքով, փաստով իրենց իմաստին, անոր մանկութեան ու պատանութեան ոսկի օրերուն կտաւէն, զերծ՝ զէջ, ճենճերուն, աղտահար գարշանքէն, որուն մէջ մշուշուած քաւեր էր անոր հոգին, ուելի քան քառօրդ դար: Անշուշտ: Հոգեվարք մը համադրում մըն է: Ջայն քակել՝ պիտի նշանակէր վերստին զբել Սահակ Պարզեկեանին վէպը, շրջում: Անիկա հարցուց սակայն, — ո՞վ էր մաքրեր այդ ապականութեան, դարչանքին ծովը, Սահակ Պարզեկեան աւնունին տակ, փռուած աշխարհի երեսին, սանկ երեսուն մը տարի, ուր ածեմին ու շաժեմին թուքն ու քարերը պակաս չեղան: Հիմա՛. . . Իտաղադութիւն խաղաղութեանց (վախցաւ սակայն, թէ կ'աճապարէր զուցէ. . . հոգին յանձնելը շունեցած պարտք մը վճարել չէր նշանակեր անշուշտ): «Արդարներուն արդա՛րը» միայն պիտի վարձատրուէր սա քաղցր քառորդին պարզելովը, ինչպէս վճուեր էր խանի մէջ անսուղ իր աչքերը փակող պանդուխտ մը, Պոլիս, փողոտամանքու օրերուն, դանակէն փախցուցած կիսակտուր իր դուխը շարժելու անկարողութեան կրի իր համեալին վրայ վերջնական կերպով հանգչեցուցած: Մորթուած պատանիին երկու ձեռքերը կուրծքին վրայ խաչածեւ տեղաւորող ծերունին բանաձեւեր էր վսեմ պատգամը: Ու Սահակ Պարզեկեան բախտաւորուեցաւ իր վերջին քառորդին սահմաններուն այդ զգայութիւններովը: «Արդարներուն արդարը» չէր ինքը ու դիտէր աստիկա: Բայց հոգին յանձնելու հանդէսը մարդկայինով արժեւորելը աստուածայինին հասնիլ չի նշանակեր: Արագ, փայլակնային հեղումով, բայց մանրամասնութեանց անթերի ամրութեամբ, ամբողջութեամբ, իմաստով, սա պատկերները եղան զողտը, յուղիչ ալ բեկորներ, մեծագին ու տարօրէն մօտ, ընտանի, իրենցմէ բաժնուելու կակիճին մէջ վարչամակուած: Դժուար է հետեւիլ ամբողջ այդ հիւսիսային, բանաստեղծ մը պիտի ըսէր վերջալոյսին: Անոնցմէ մէկուն մէջ անիկա պայսեցին էր, տարագ, խորհրդանիշ ու յուսութեք, որուն վրայ իր քնարական զեղումները տարիներով ձաղրեր էին մարդիկ, անկարող ու աժան ոռմանթիղմ մը վատելով սա մարդուն անհուն հայրենաբաղձութիւնը, նախապաշարուած անշուշտ անհայրենիք փարիս մտաւորականի անոր պարսաւէն: Որ քաղցուած բառ է նոյն ատեն, մանաւանդ այդ քաղաքէն դուրս, տարագիր ո՛չ թէ մեռ-

նորին, այլ՝ ապրողին ալ համար: Մեր ոռմանթիքներուն փրփուրն ու բոցը, թափին ու հեշտանքը, փարզն ու պլպուլը, կաղոյնն ու բոսորը, գեփիւտն ու կոյսը, շողն ու մրմունջը մինակ փափուկ բառեր չեն, այնքան տնխնայ յիշումով մը պոռնկացած, այլ՝ թերեւս ա՛յն աննուանելի հողեփիճակը, որ համադրութիւն մըն է զանի մը աշխարհներու, ժողովուրդներու, Մայրագոյն Արեւելքէն ու հեռու Հիւսիսէն հոն դիմող հոգեղէնիսն ու մարմնեղէնիս՝ այդ կախարհական զուրային մէջ ստացած նոր մէկ կերպարանքը, զրութիւնը (հիւլէներուն): Սահակ Պարզեւեան խորհուրդին այդ գրախաֆն վտարած հրեշտակ, անհնարին զաղցրութեամբ թերեւս վերլուծէր պիտի անոր խոր հրապոյրը, մարտութիւնը, եթէ երբէք ատկա ըլլար արտօնուած իրեն, այնքան այդ բառերուն ետին մեր գրողներուն թելադրել ուզածը յատուկ էր իրեն, սա սաղնապին մէջ: Գրագէտ, երկիրքի սեմին իսկ: Անշուշտ: Եղած էր արդէն ուրիշ բան սա մարդը (եթէ նկատի չառնէք իր հիմնական գոյր ախորժակները սեռէն ու փորէն), երբ իր ապրումներուն դիրտն իսկ կը ջանար արժեքրել, այդ դերասանութիւնն ալ ըրածին խորունկ շնականութեամբ մը զատելով: Անիկա չէր կրնար ըլլալ սուսին այդ ճարտարապետը, ինչն պահուն մանաւանդ, ուր մեր մարմինը, անոր ուժերը կը հերքեն ամէն ինստակարութիւն, զատիսն դռնալու համար ու կը զբանեն իրենց ամէնէն յոճախուած օրէնքներուն շեշտը: Այս զնով էր, որ անոր մտքին ներկայացան իր դիրքերը, գրածները, մանաւանդ ծրագրուածները, թուղթերուն ընտանի կեանքէն վեր խտութեամբ մը: Նիթական տառապանք մըն էր իրեն հաստատել այն սահաւոր խորութիւնը, գեղեցկութիւնը, լիութիւնը, որ կը թրթռային այդ յղացներուն մէջն ու շուրջը: Ի՞նչ աճապարանք եղած էր իր աշխատանքը, անխմատ փառասիրութեանց հպատակ, երբ այդ գիրքերուն էնթաշխարհը նուանելու համար իրեն պահանջուած կորովը, զոհողութիւնը ինքն էր, որ ծաղրէր էր, թափփփուրներով, հոսկէ ու հոսկէ հաւաքումներով լուկնելով արուեստագէտի իր խղճմտանքը ու գոհացնելով լրագրողները, կուսակցականները, կիները, ոճին փայլով դիմաւորելով խորքին նոյնքան սահաւոր անբաւարարութիւնը: Գիրքերու ճամբա՛յ, որ իրաւ ու արտում, սնուչ ու լեղի, մայլ ու կրակ եւ ա՛յնքան, ո՛րքան ճամբաները փառքին ու արգանդին, արեւնին ու ոսկիին, կիրքին ու երկինքին, ու երբեմն ալ կարգ մը խենթերու, լուսնոտներու, աճապարաներու ու հիւանդներու մօտ՝ զերազանց բուրբն: Սահակ Պարզեւեան թուղթի ասպետ մը չեղաւ անշուշտ: Բայց հաւատաց գիրքերու օ՛ջ թէ փառքին, գոնէ ճամբուն: Անիկա իր բոլոր գարշութիւնները կը կարծէր, կը հաւատար մաքրել թուղթին ծովուն մէջ, Իրն էր մխիթարանք ամէնէն սխրագին զանի մը հողեփիճակներ զանդուածներուն վայելումին տրամադրած ըլլաու, երբ իր վիպակները կը կարողացուէին շողիքու հիացումով, իր գարունքին, զոտնէն վեր ու երեսունէն վար իր զգայնութեան բուրբ շողովը օժուած իր էջերուն ստեղծած խանդավառութիւնը լաբնօրէն բաւ համարելով իր օրերուն ստեղծ, անխմատ, մանաւանդ անփառունակ կորանքը գնելու զանի մը պատիկ: Անիկա թերեւս ծանրագոյն դժբախտութիւն մըն էր, զանի որ չէր ուշացած կործանել այդ պատրանքն ալ, առաջին երիտասարդութենէն անմիջապէս

եսը (դուք գիտէք, թէ անոր մտնը կանխող քանի մը տարիներու արտայայտութիւնները հերքումն իսկ չէին այդ դարունքին) : Մահուան այիքին վրայ ան իր մարմնոյն խեղճ խլեակին բացեր է առաջատար անդարձ մեկնումին : Ու այդ սրտառուչ բովանդակները անոր պիտի մատուցէր սեւ հացն ալ իր դաւանանութեան, իր իսկ վրայ իր գործադրած դրկանքին, — իր դերը չաւարտած, ինքզինքը լիովին չիրագործած գրագէտին անդարձան բեկումը, խորունկ ու անհուն իր ծարաւը, կարօտը բոլոր այն ձեւերէն, յոյզերէն, դեղեցկութեանց թրթիռէն, որոնք դպիր էին իր գրալարանքներուն, դրդուիչ անոր ջիղերուն այլապէս բազմազարդ ցանցը, ի զուր դարձած գուռը անոր միտքին արգանդին, ուր պարտաւոր են իրենց հողին յորինել արւեստի գործերը, ենթարկուիլ անմահ արարչութեան : Գիրքերու ճամբայ : Մահուան ջուրերուն վրայ Մահակ Գարգեւեան ինքզինք զգաց իրր գերագոյն խտութիւնը իր ժողովուրդին, անոր զերմարդը, շափով մը դիմաւորելու համար վրիպած գրագէտի իր բեկումը : Թուզթի ասպետները երբ կ'ենթարկէր իր ծաղրին, արհամարհանքին, անիկա օրհնեցութիւնը կ'ընէր կեանքին, այսինքն՝ արձակ, պարարտ, ամուր, երկաթ միսերուն, սեւ, խոր, տաք այլերուն, լայն, լեցուն, արիւնտ ախորժակներուն, որոնք վարթում մարմին, անխոնջ իմացական թուիչք եւ վայելքի ծանր, լիակատար հանդէսը կը համարէին ու կը թելարդէին իրեն իր ճամբան : Այդ ամէնը, հզօր պաշտամունքի մը նման տարիներով գինքը մտադրաւած, հիմա, իր ակերակոյտէն ամբարձիկ, ճաճանչալիք իրողութիւններ էին՝ իրենց իմաստը վերջնական կերպով մը ազատագրած կարելի հերքումներէ, մանրամասնութեանց ցաւէն, ոսկի սիւներու նման իրենք զիրենք վառման հանած անոր միգամածային հոգեդաշտի հորիզոններուն, տեղ-տեղ կամար, տեղ-տեղ կատայ, բայց անպայման իրաւ հանդէսը իր ժողովուրդին շնորհներուն : Ու անիկա, գրեթէ առաջին անգամ, ինքզինքը զգաց, առանց ատոր համար ամչնալու, զԱՄԿԻՂ այդ ժողովուրդին, զոր արհամարհած էր միայն, անոր երեսին դիպելով գրուողները իր անխելք կիրքերուն», յարաշահօրէն ընդարձակելով անոր քանի մը մարդկային թերազումները, դրութեան վերածելով պատահակի նրաւորումները, պոռալով ու պոռալով անոր ապիմաստութեան ա՛լ աժանցած տեսքանր (իրն է բաւր) : Նո՞ր կը ճանչնար ան այդ անորակելի զանգուածը, ի՞նք՝ որ իր երիտասարդութեան ու չափահասութեան ամէնէն խոր մէկ քանի ապրումները առեր էր իր դժոխքին — իր կեանքը — սեմին, դմալումէն խենթեցած՝ պատկերին դիմաց իրենք զիրենք կրակին վրայ արձակող երիտասարդներուն, բոլորն ալ դիրքի, դիրքի, սուտի անմասն, բայց հզօրապէս զգացմանը մէջ իրենց հայրենիքին ազատագրութեան իրենց արիւնը շտակարկող : Եւ տակաւին ուրիշ ինչե՛ր, ինչե՛ր : Գուցէն դուրս, օտարութեան մէջ, ինչո՞ւ անիկա դատեր էր իր ժողովուրդը, — զանդուած՝ գոհակ, ահաւոր ախորժակներով սպառազէն պագերկաններու, չարլիներու, տէր-պապաններու, դրամի դեղնախտին մէջ յօրացած պերճադիճեմբու, շահու բաւիղներուն ընդերկրեայ ճարտարապետութեան հոյակապ խլուրդներուն, ապարարոյ, ապիմաստ, ապոզի, ապազգային, ապարան ջոյ՛՛ր, ինչպէս ուրուագծուած էր թերեւս իր մէջ արեւմրտահայ, աւելի ճիշդ՝ պոլսահայ քաղքենին, եւ զոր չէր վարանած

խորանարդուած սաստկութեամբ մը կենդանազրել իր վարած թերթերուն ու հանդէսներուն, ժահրոտ իր յարձակումներուն ընթացքին, օգտագործելով քանի մը սականքներու անասութիւնը, դարձին վրայ խննթեցող, իր գիրքերը, իր հեղինակած թատերախաղերուն ներկայացման տոմսերը մերժելու, օրրապղծութիւնը վերածելով արժէքին — կը հասկնաք անշուշտ՝ իմացականին — հանդէպ հսկայ, զանադազրին, սահմանիցուցիչ խաչակրութեան: Մեծահարուստ, աշո՛ր՝ Բայց նոյն համեմատութեամբ ալ նոյնպէս պանդուխտներ, տըրտուած դեղիցկութիւններ աւանակութեան մէջ, ինչպէս զրբը էր հեշտազին, նախատինքն իսկ քնարերգական ընելու իր տաղանդը աւելորդ կերպով անուրդի հանելով: Իր խառնուածքին առ տիրակամ փաստերը չյաճեցան սակայն, իր մահուան մուտքին: Անոր այնպէս կու գար, որ գերագոյն շունչ մը, կրակով մկրտութիւն մը աւլած էր այդ զանդուածին անզգամութիւնները, զայն վերածելու համար մարդերով կարելի ամէնէն սխաղին վկայութեան, անհունապէս քողցը, իրու, երբ, միշտ առաստաղին սմբարձիկ իր մահիճէն առկախ, սա տարօրինակ հրաշքին ալ օգնութեամբը թերեւ, կը հետեւէր այդ ժողովուրդին ճակատազրին, զայն յօրինող իրարմէ հզօր, պակուցիչ, անըմբռնելի գրուագներուն, անոր պատմութեան դաշտին վրայ իբրեւ զէպօ օր մը կարդացուած ու հիմա իրենց ամբողջ խորհուրդը արտածորող, ամէն ինչ ոտ ինկած էր դրադէտի իր Գիւղերուն, թուղթերէն, բայց մանաւանդ մարդոց կենդանի կտաններէն, անձնապէս իր զգացածները, ապրածները վերակազմող, տառք ալ մօտիկ, երբ կիլիկիոյ իր պատուիրակութեան օրերուն եղբր էր արեան ու կրակի մեծատարած հանդէսներուն, իր ընթերցումները տարօրէն կեանքի փոխակերպող, — այդ գրուագներուն ամէն մէկին մէջ այդ մարդոց պատմութեան մէկ տարր, զանոնք դժեմնող աղէտներուն դիմաց անոնց երեւան բերած ոգեկան անընկճելի արութիւնները, հրայրքները, գորս ահա կը հասկնար իրենց անայլալիլի ցեղեցկութեան գերազոյն փաստովը: Իր պապերը, ըլլալէ առաջ Գոլիսին ու արտասահմանի պերճ շահաստաններուն թանձր ազրուկները, սա մարդերն էին, անտարակոյտ, շէնի ու ապատի ասպետներ, որոնց կրխած տեղը վարդը կը բուսնէր ու այդին օճ կը դառնար: Ան, իր բուր լիութեանը մէջ, կը զգար քաղցրութիւնը, արտուս ու սրտառուշ, արցունքն իսկ վայելքի վերածող, որ իր ժողովուրդին եռզնէն օճն է, մեզմ ու փաղաղիչ նոյն տառն: Մահուան իր մահիճէն անոր արուեստաւ հաղորդուիլ սա սրբազան ալ խորհուրդին, ի՞նք՝ որ կը հպարտանար, իր ընկերները ըմբրանելու համար, ուրանալու արմէնիզմը, իբր գրական սնտիք ծաղրանկարելէ ետքը: Անիկա չէր ուզեր բանալ աչքերը, աւրել վախճալով սքանչելի սա զգայութեանց — մտածումները, տեսիլները իբր այդ կը մտաուցուէին իրեն ու ինք չէր զարմանար սա փոխանակումէն — պարը, ծածանուտ թափօրը, դի՛ւր, հեշտազին նոյնիսկ: Գաղցրութիւնը իր ժողովուրդին, ամէն բանի ու ամէն կերպարանքի տակ... Ի՞նչ անբաւ, անիմանալի զեղծ մըն է ափ մը խմորը, որ մեր գանկի տաշտին մէջ կը մնայ ծուարած: Ո՞վ պիտի յաւակնէր, հեռուէ հեռու իսկ թափանցումը փորձել այն անհուն իրողութիւններուն, որոնք մեր լման, հոգին յօրինած ու մեզ տարած մեր սահմաններէն շատ անդին, բայց անպամ մըն ալ շար-

թրննայու ճակատագրուած : Հոգեմարք մը երբեմն կը դպի այդ տե-
 սիներու ողկոյզներուն ու կը տեսնե՞նք... : Մահակ Պարզեւեանին
 համար սա հակադրութիւնները, շրջումները, սլացքները տեղի կ'ու-
 նենային երազային արագութեամբ, այնքան՝ որ անոր դէմքը կը
 թուէր արեւոյտի, վէտիւտի : Հոն, ինչպէս կախարդական վարա-
 դոյրի մը վրայ, անոպառ քրտինքին կայլակներէն ծիածանուած, այդ
 զգայութիւնները, այդ պատկերները, այդ մտածման փշրանքները
 կու գային, կը դողային, կ'ըլլային ու կը լուծուէին : Մարդիկ, իր
 շուրջը, հագիւ նշմարեցին սակայն ցաւազին ոտտայնը սա միգամա-
 փային ճարտարադետումին, որ իրքեւ սրտի զարկ, կը լայննար ու
 կ'ամփոփուէր, փոխնիփոխ : Կծկում ու թուլացում : Մարդիկ իր շուր-
 ջը չիմացան, որ առանց հակազդելու արածուած ըլլալու, անիկա
 ապրեցաւ իր պայծրը, այնքան իրաւ ու ամբողջ, որ ըլլաթափ, ջր-
 զող իր մկաններուն զոդեր ուրուացան : Անշուշտ դառնութիւն էր,
 որ ծիւղն հաստ ու հաստատ իրականութեան փոխարէն իրեն մա-
 տուցուածը զողվագփուն մարմարն ըլլար պատկերներուն : Ու աղ-
 բեցաւ անիկա հագարները, բիւրբը իր սարիքէն աղոց — ինքզինքը
 դիտէր պարման — մահերուն, ամէնն ալ հնձուած իրենց դարուն-
 քին, դանակի տակ ու կրակի վրայ, դո՛ւ՝ անպատմելի սպանդին, որ
 անոր գանկին պատկերը սահման ունեցող անհուն իրականութիւն էր,
 զգայութիւններու ամբողջ դժոխքովը, իր դէմքին խաղաղութեամբ
 վրայ ճմուռ-ճմուռ ինքզինքը լաստակերտող : Մինակ երազը չէ, որ
 մահուան կը բաղդատուի : Մահակ Պարզեւեան : Որ յաւակներ էր
 աշխարհին հաղորդած ըլլալ սա հոգեմարքերուն անպատմելին, իր
 միպակներուն մէջ ու տառապեր իր անբաւականութենէն, սակե-ան-
 կէ մուրացուած գովեստները դատելով իրենց ճիշդ լափին մէջ ու
 փնտռելով օրը, շրջանը, առանց ընդհատի, իր ներշնչումին անձնա-
 տուր, նուաճելու համար արնաշաղախ այդ քերթուածները մատա-
 ղատի խողխողածներուն ու միշտ մանրելով զգլխիչ, խննթեցող
 այդ տեսիլքը, կտոր-կտոր, շահագործելու համար անոնց արիւնին
 համար ու... միշտ ալ վրիպելով : Իր հոգեմարքին, այդ արամները
 զտան սակայն իրենց խտութիւնը : Ամէն մէկը անոնցմէ կը բարախէր
 ո՛չ միայն աչքերուն առջեւ, այլեւ՝ հոգիին ներքեւ, ասոր անհուն
 երեսներուն, տառապանք իսկ ըլլալու տնկորոզ, քանի որ ցաւի ըզ-
 գայութիւնները կը պատրէին իր մէջ : Անոնք քաղցրութիւն, մշու-
 շում, զիւթանք ու նուազում էին, պատկերի մը (ժամու մը խորա-
 նէն) մէջ, իրեն մը խորէն փրթող կոկոններու հեշտանքովը, առանց
 մարմինի, հոգի միայն, բայց իրազործող ալ բաժակներու լիակա-
 տար իմաստը : Մահակ Պարզեւեան գրեթէ մոռցած էր տազնապը,
 այնքան անոր գանկին տակ տեսիլքները իրարու կը յարմարէին, ի-
 բարմէ սրտատուչ ու քաղցր : Մէկէն ձեռք մը այդ գանկին վերցուց
 սա պատանքներուն վրաքը : Տեղը բացողն էր ինչ որ կազմեր էր
 անոր մտքին ամէնէն սրտայոյզ տարփանքը (— համապատկերը,
 վէպ, պատմում, թատերական կառոյց, համադրական վերլուծում,
 նոյնիսկ գիւցազներգութիւն, դէթ իբրեւ գրական փառասիրութիւն
 իր սաղանդը փորձի էին ենթարկած տարիներ ու տարիներ —) բայց
 այս անպաժ թուրթի վրայ ըլլալու փոխարէն, կենդանի, յարգարուն
 խորանին վրայ իր մարմինին, որ թեւ էր ու ընկալութիւն : Տեղը ե-

կողմ իր ժողովուրդն էր, անոր վերջին կէս դարը, Պարզեւեանին կեանքին հասակովը, այնքան խորունկ, մարդկեղէն բղձաւորութեանց հանդէս մը իրրեւ, որ իր տարրերը կ'առնէր այդ ժողովուրդին բոլոր խաւերէն, կ'ըլլար խորհուրդ ու սխրանք, կը ստեղծէր նորոգ մեր դիտակցութիւնը, մեր ճակատագրին տրամը մեզի կ'ընէր միանգամընդմիջտ հասկնալի ու իենթեկնող վճիռին ընդդէմ մեր անկարող իրերատեսչութիւնը, յիմարութիւնը, մարդու պէս մեռնելու իսկ անընդունակ մեր ստորնութիւնը, երբ մեր կուսակցութիւններուն արնախաղերուն մէջ ջրանայինք ոսկեղօծել: Սահակ Պարզեւեան, ճշտապէս անարդար պարտասող, հողեվարբին մէջ ինքզինքը կը զգար լայն, խաղաղ, արդար դիւցազներգակ մը, իր մտքի էջերանին ներկայացող պատկերները արժեւորելու իրենց ընդհանուր իմաստին մէջ: Ան մասնաւոր սարձանքով մը դատեց այն դասակարգերը, որոնց մեղքերն ու կիրքերը տարիներով պոսացեր էր փողի ու քմբուկի ծայրնով: Հիմա, անոնք ալ մասնիկներն էին իր ժողովուրդին, անոր անպատմելի պատմութեան վրայ լայն նետող: Իր ժողովուրդը այնքան իրաւ, զազգր, ցաւին համար ընկալուչ, բարիքին կտուէն շոյլ ու անշահահանդիւր, ատեղծող ու արուեստի հզօր շնորհներով օժտուած, զոր օտարները չհասկնան ու իր ցաւակներն ալ չիթերին չգրին...: Հողեվարբի մը անհուն են պարտեանկները: Անոնք մէկիկ-մէկիկ անանելը թերեւս վերստին դրել պիտի նշանակէր ասնթէական կատակերգութիւն մը: Մինչև րուպէն, ուր ցաւին նիզակը պիտի մխրձուէր անոր արաի տունին, Սահակ Պարզեւեան այցուեցաւ բազմազան պատկերներէ, անշուշտ այն ալ խուլ աշխարհէն վերքերուած, ուր կը դուրսին պահեստի մեր ուղեղը ապաւորող, մեր հողին տրորող ամէն զօրաւոր գրայտութիւններն ու ըղձանքները, սպասելով իրենց հերթին, տեսարանը կրկին գրաւելու: Երբեմն պարագանքը կը նպաստեն անոնց, այդ վերադարձը ընելու: Ետտ ասելի անգամներ, այդ փլատեղերը հող կ'իջնեն, թերեւս հոն պարտեանկելու իրենք գիրենք: Այս օրէնքով էր, որ անիկա եղաւ երջանիկ, ամբողջ, լավող գրագէտը, որ երազ մըն էր անոր ուղեղին ներքը եւ փախած ու անընտել թրուշունի մը նման չմտակցաւ անոր ուժերուն ցանցին: Անիկա ցաւէն քանի մը րուպէ առաջ եղաւ գրագէտը, ինքզինքը իրազօրծած ու այս պատմանքին ալ մոխիրը ստիպուեցաւ ապրելու, քանի որ դիտակցութեան վերականգնմամբ ցրուեց մշուշը, զայն ընելով սզահար մայրը, որ իրեն հետ դատապարտուած էր հող տունելու սպաննունը այդ գեղեցկութիւնները, վաւերական իր գաւակները...: Ան եղաւ, յետոյ, սիրողը (չբանածեւեց սիրահարը), որ վրան հակած աղջկան մը դէմքին մէջ կը հայրանար, այս գրացումին բոլոր երանգներուն ալ հաղորդ ջրիբոսով, անդարձ բաժանման մը ցաւին մէջ առաջին անգամ հաստատելով գերը սա մանկամարդ պատկերին, այնքան մտէն շողապատուած իր գրայտութիւններուն...: Եղաւ Իլւանը, որուն բաժակը դիտէր լեցուած ու րուպէէ րուպէ պատրաստ շրջուելու: Այս բուրբը, առանձին-առանձին, դրեթէ իրարու մէջէն սակայն, տալով ազաւորութիւնը արտաքին իրականութիւններու: Եւստոյ նորէն մը շուշ, նորէն հետու հորիզոններ, կայաններ ու տարածութիւններ, արեւներու կոնակին իր մարմինը, որ կը ծփար ու կը վառէր: Ու ինչպէս քառսէ մը, վերջին բխումը անոր դիտակցութեան, որ տարտ-

պոնք մըն էր, սա աղջկան շրթները հոս, ուրիշներու ձգելու: Որքան պիտի ուզէր, որ տրուէին անոնք իր բերնին, մէկ ու անջակտելի, իրու ու անբացատրելի, ինչպէս գիտեն երբեմն այդ բանն ըլլալ մարդոց շրթները: Յետոյ, իրեն թուեցաւ, որ իր փափաքը աւելի էր, որքան կ'արտօնեն մեր ջիղերը մեզի: Մարմինին ըջիջներուն մէջ հեքիաթ մը չէ միգամածային ապրումներուն վարկածը: Մահակ Պարզեւեան կործանող տիեզերք մըն էր, այդպէս էր տարածած անիկա ուրիշներուն մահը ու կը գործածէր պատկերը իրեն համար ալ: Ուզեց արգելք ըլլալ բժիշկին, հիւանդապահուհի աղջկան կատարուելիք հեռուստոյն: Արտեմիս Գուհարեան պաղատագին խնդրեց զիջում մը, ձայնով մը, որ նոր էր Պարզեւեանին: ...Յաւէն անմիջապէս առաջ, անոր գիտակցութիւնը -- հոգեբանութեան մէջ ընթացիկ առումով -- սղոցում մըն է զգայական գիճակէ մը, տեսակ մը ազնիւ ու բեկ խղճահարութիւն: Այդ կիներ, բլլալէ ետք անոր անկարամ (որ հոմանիշ էր անոր բերնին մէջ միակտարին) դարձանքը, տարիներ ու տարիներ, կը դառնար ակնթարթային արագութեամբ իր իրական իմաստին, անհուն պաշտամունքին: Պարզեւեանին համար դուրս էր կասկածէ, թէ աշխարհէն իր առածը ամէնէն իրաւ ու խոր ոչ թէ վայելքը, այլ շարժութիւնը, մարդկութիւնը նորէն կու գային այդ անկարամ գարշամբէն: Ինչդիւրք իր պաշտամունքին համար կործանած այդ կնոջ մէջ վսեմ իր սա արիութիւնը, իր ժօտը կենալու, պատրաստ ինչդիւրք դնելու հոգեառի դանակին՝ եթէ երբեք ուզէին ատիկա իրմէ Պարզեւեանին սիրոյն: Արագ, Մահակ Պարզեւեան չափեց իր յօրինած գծովքը այդ կնոջ գլխուն: ...Երազեբու, կսկիծներու, թեթեւ անուշութիւններու ու ծանր կորանքներու հրթիռ մըն էր անիկա իր մահիճին վրայ, ինչպէս եռոտանիէ մը վըրայ, ու միշտ զամուսն, միշտ առկախ ատաստաղէն: Գրեթէ խաղաղ, չըսելու համար՝ երջանիկ, ա՛յնքան՝ որ վարանեցաւ հաւատալ: Այս հոգեմիճակին մէջ էր ան, երբ բացուեցաւ վերջին վարագոյրը: Յաւէն էր ատիկա, սուտ, սրբապիղծ, անարգ ու խենթեցնող: Այս որակականները հաշտ՝ անոր մտքին, զգայարաններուն, կեանքին կերպասին: Սիրտէն ջիւլ մը վեր, ձախ թեւին ճամբաններուն: Գրեթէ կ'ուր հանգոյց մը, որ կը տարածուէր, փորձեց պատկերել՝ կը ճառագայթէր, թիւսգի նուագարան մը ինչպէս, անկախ ու անողոք, յետոյ կը հաւաքէր իր լարերը, կէտ մը, կաթիլ մը, կրակի կտոր մը կ'ըլլար, միսերուն խորը, շիկացած կրկաթ մը: Երեն այնպէս կու դար, որ ճենճերը այդ ապրումին՝ առանձին զգայութիւն մը իրբեւ, ցաւին ճամբովը կը ընկեր անոր բոլոր զգայարանները, աստիճով ու չկշտանալով: Ի՛նչ բան անոր մօտ գրական չէր եղած, որպէսզի չըլլար ատիկա սա տլլապէս իրաւ բանն ալ, յիսունէն ջիւլ մը վեր, ա՛ն՝ գոր բժշկական գիրքերը անկոր փեքթարիւ կ'անուանեն եւ որուն վրայ այնքան անգամներ լռեր էր զարմանքով, կասկածով, գախով, բայց չէր հաւատացած: Սրտի ցաւին ճակատագրին է ատիկա, թերեւս գեղեցիկ ալ պատրանք մը, քանի որ սպաննելու իր համբաւը երբեմն գերազանց է իրմէն: Բոլոր իր սկզբները խուլ արձագանգով մը անցը տունն այդ կրակէ ալիքին: Բոլոր իր դնդերները բաժին առին անկէ: Բոպէ մը բզկտում մըն էր անիկա՝ Եկաւ սակայն թուլացումը: Չառին անշուշտ սուրը անոր սիրտէն: Բայց

ատոր սրութիւնը, խորութիւնը, հաւանաբար դայն ճարտարագետող, ահօսաւորող կեդրոնին քանդումովը (դիւսապտոյար գտած էր իր օսասկութիւնը, յեղաշրջելով հիմնովին անոր զգայարանական դրութիւնը), իջան իրենց խոնարհազոյն աստիճաններուն, շփոթուելու չափ դադարի մը հետ: Հօկայ այդ մարդուն ներք կատարուածը: Անկեա չափեց իր ալ մարմինին նուաստացումը, նուաղման, սպառման, անցումի բոլոր ստեղծերէն ճարտած տրտում, գէջ, անհերքելի մկաշութիւններով, մեղքնայով գինը այդ անկումներուն, հիմա՛ որ կեանքը հազիւ-հազ մաս մը մոխիր կը նշանակէր իր ուղեղին վորայ նստած, դի՛րար՝ իր բոլոր վայելքներուն: Սահակ Պարզեւեան սպարաբոյ անասունն էր, գիտէ՞ք առիկա: Մահուան մուտքին սա կարգէ փչրանքներ (մասման՝ ինչպէս զգայման) իրենց նրբենի շրջարջը կը հաւաքէին անոր խոպանացած անցեալէն, զոյնը տանելով անոր գաղտ անճաւարութեան, մեր ամէնուն համար հզօր օրէնք, երբ այխարհէն խնամքով կը վարագործենք այդ գաղտուկ մարդը մեր մէջ: Անոր աւերող կը տառապէր անշուշտ, սա բուպէին, բացի դիսապտոյսին տաղնապէն, նաեւ տառապանքովը սիրտն աւելցածին: Խաղաղ, անէպցումի թեթեւ քաղցրութեամբ քանի մը վայելեաններ: Սահակ Պարզեւեան կրցաւ տեսնել զինքը շրջապատողները: Անոր դարձաւ, առաջին անգամ բոլորով ամբողջական՝ իր էութեան խորհրդանիշ իրականութիւնը, իր նոզկեղմ միջուկը, որ իր բլիջները կը հաւաքէր, անոր կեանքին բոլոր ջուրերէն, փլագմաներէն, հետու մանկութեան ու սակի պատանութեան ու անասելի տրտմութեամբ երիտասարդութեան ու հասունութեան տարրերը բուպէաբար համարեւում: Մէկէն անոր դէմքին գարշազին կծկում: Եւրջին վախցան, որ ցարը կը վերադառնար: Անոնք ուրկէ՞ իմանային, որ այդ բուպէին անոր հոգեկան միջուկը եղած էր մարմին, կերպարանքին տակ տրգրուկի մը, որ վայելքին աղբին ու ծօրուտքին մէջ բոյժի դրուած, տեսն չէր գտած արեւին ելլելու: Ու կը սողար, սա բուպէին, պիղծ որդր, ջուրերն ի վար ու վեր իր քրտինքին, կպլուն ու զարհուրելի: Մահահայտին ամուր հիւստեան մտաները չըրին սակայն վանելու շարժումը, վասնզի, հակառակ ցաւին թուլացման, զարապին մէջ հոսելուց զգայութիւնը աւելի կը թուէր ամբացած: Իր սոկորները, գաղտ, զգաց, որ կը դիմանային տակաւ աւելի քիչ, իր միտքուն: Եւտոյ՝ ուրիշ ալ վախեր, անոր մտքին մէջ, անկոյ, բուսած ուրիշ յուշեր, նիւթական գաւերու նման: Տգրուկ մը: Ով կը նետէր սա տնարդ սողունը անոր վերջին պայծառութեանց յատակը, ի՞նչ՝ որ իր հոգեմարքը քերթուած էր երազեր... Զգայութիւններու սա այլաբանութիւնը ճամբան կը բանար բոլոր շրջումներուն: Բժիշկներու հւանոնց հրետանին հանդէպ անոր խոր արհամարհանքը օգտակար՝ որ պէտքի բլլար սքողուած իրմէ ամբողջ կշիռը սա տալնապին, որուն նժարը երեք երկվայրկեանէն երեսուն տարինորու միջեւ կը ճօճէ, անխուսապելի իր դուժարով, գերեզմանի մը եզրին: Քանի՞-քանի՞ անգամներ ան եղած էր դիտող, հանդիսատես (յաւիտենական դերասան՝) անորակելի ալն ապրումներուն, մահուան մահիճի մը մօտիկ, որոնք անշուշտ վերաբերումներ, թիլաղբանքներ ունէին ալ եւ նեատուած զգայութեանց աշխարհէն: Հոգէտան սուրին եւ խթանին տակ, ինչպէս կը պատկերէ ժողովուրդը, մարդիկ եղան երբեմն հարկա-

գրուած ըսելու բաներ, զորոս այնքան հզօր միջոցներով յաջողեցան
 գաղտ պահելն աշխարհէն: Սահակ Պարզեւեան ապրեր էր առանց վա-
 խի՝ ինչպէս առանց քաջութեան, մարդոց զբարոյականէն անդինն,
 սեւեռաբեր ասպետի մը պէս, դովբը հիւսելով Ֆրեսերիք Նիցչէի
 համբաւեալ հասարակն, որմէ միայն կողքն էր կարգացած, ծանր կե-
 րակութեամբ ի բնէ թշնամի բոլորուն: Իր աշխատութեան, անհիւս
 մտադրեր էր Վլոնամ Բերքուածնեքս անունին տակ գրել փոքր տրամ-
 ներ, սեմագոյիստ կտաւէն, բայց իրա՛ւ: Ո՞վ բերու անոր միտքին՝
 էջ մը, որուն վրայ ամիս էր աշխատեր ու լացեր, իր անկարողութեան
 փաստէն աւելի, և ետեւոր նոյնիսկ աշնան մէջ ուրիշ բան գրալու բա-
 ցարձակ անընդունակութեամբ մը: Այդ էջին մէջն էր միշտ նոյն
 տգրուկը: Որ ուրիշ բան չկրցաւ ըլլալ: Իր տրտում, ահաւոր ուրա-
 խութի՛ւնը, գերման ժխտողը Հերքելու, երբ սեպին բոլոր թերխալ
 ձողողութեանց հակընդդէմ, գիմացեր էր փորձութեան, տառապելու
 ազնուութիւնն իսկ արհամարհելով, ինքզինքը նիզակուած գիտնա-
 յով մտղմայ, խուլ, գէջ, բայց աննահանջ ասեղներէն այն խռովքին,
 որ մատաղ մարմինն է, մեր ցուայարանքներուն դիմաց, յետոյ՝ ա-
 նոնց ծոցը, յետոյ՝ մեր գոգաւ հուսեան ատեանին իր գտնոյթը զար-
 նոց, անոգոք ինքնակալի մը նման ու մեզ աղա ու սղբերգութեան վե-
 բածող: Սահակ Պարզեւեան գրայութիւններու անկաշտութիւնները,
 երբէք մաքնն չանցուց ինքզինք խաբել: Մանթ էք իր շախաչիտակամ
 գարծունգութեամբ՝ խանութէ խանութ, աղջիկը թեւին: Մանթ էք
 դարձեալ հասարակներուն, որոնք կը կազմէին դիւր Սոնա Գոհարներն,
 ու՛ գուժարին այն բաղձակարան ենթադրութեանց, Հեքիաթներուն,
 վաւերական, տեսովի՛, լսովի՛ վաւերական յայտարարուած փրո-
 սերութեան, որոնց հասցէ, ընդունարան, տնկարան էր տուած կե-
 սողաբա քնակարանը, իր կտորով (մեր աղջիկները այս բառով կը
 սկսէին իրենց փառքը), այնքան խայտարիչաւ ախորժակներու թե-
 ւազիւր, ամէն տարիքէ ու ամէն պայմանէ, սրտառուչ ու միամիտ
 Արտակ Գասպարեանէն մինչեւ վաթսունէն անց ծխախոտի հայազգի,
 ինչպէս օտար իշխանները, որոնք իրենց թոններէն այլ մանրամաս մար-
 ձուհիներ կը սլակէին իրենց ջունքը յարգարելու, մինչեւ Մարաննե-
 րը, այնքան ճարտար խաղարկութիւններով, իրենց հաշիւները հո-
 յակալ գեղեցկութեամբ մը յաստակերտած, պետական պաշտօնա-
 տարները, պէյերն ու փայտները, հզօր առեւտրականները, — բո-
 լորն այլ նեղոսի հովիտին դէջութիւնները միամտաբար արդարացը-
 նոց, երբ Սահակ Պարզեւեանին համար եղան բաց, ձեռքէ, շնորհէ,
 միջոցէ: ամէն մարդ գիտէր անոր ո՛ր քախտին համար: Մեծատա-
 րանց արձակագիրը կը վախելոյնէր, կ'արժեւորէր սա զարջուս Հետա-
 րբբրութիւնները, Հեռագրած հաշիւները ճարտար՝ որքան ուղղա-
 փառ, փորթամ ռազմափարութեամբ մը, հաւատարիմ՝ իր անճուն
 ապրումներուն ու համբաւին, ու կը քալէր, միշտ աղջիկը թեւին,
 պաշտօնատունէ պաշտօնատուն, գործարանէ գործարան, ճառագայ-
 րթուն՝ ինչպէս յնական, ինքնիրեն, երբեմն այլ մտերմիկ շրջանակի մէջ,
 մեծ թափանցումով մը վերլուծելով անրան էլութիւնը «մեղրի կա-
 րասին» յուրը դարձողարձոյ մեծփոր այդ յիմարներուն: Անո՛ւշաւ
 «Իր այժերը կը տեսնէին Ք. ճառագայթներու նման մարդոց մարմի-
 նին փակ ալքերը», կը պարծենար անհիւս: Ու չէր կասկածեր, որ իր

ալ իսկական պատկերը պիտի իյնոր առջին, այնքան իրաւ, բայց ժահուան ժահիճին մէջ: Ոչ ոք՝ բացի Արասի Գասպարեանէն (աս ալ աճիս վերջը, Սոնային խոստովանութեամբը) պիտի ըլլար սեղեակի աճի թերեւս միակ, զերբայանց ազդակէն, որ հեղինակած էր զսուցէ զբազէսին սա կործանումը: Բաներ կան, որ կը թուին անասելի, հետաւ, անկարելի, բայց կ'ըսուին, կը մերձենան մեզի ու կ'ըլլան միակ կարելին, երբ պատուով անոնց դիւրբը, զէլ բառ մը զործածելով: -- Գործանման սա կէս զիշերէն հոգ, անոր հեքիաթունակ, զանշամանկազո աղջիկը տկարութեան, յիմարութեան տաւաղելի բողէի մը (կան այլ բողէները, երբ մենք տէրը չենք ո՛չ միայն մեր մարմինն, այլ, մա՛նասնդ՝ մեր հոգիին: Սոնա Գուարեան անամբողջ խոսովք մըն էր, եփուն ու նեղսիրտ տրամադրութեամբ, որուն սկիզբը թէնու կու զար անպատեն, բայց որուն արծարծումն, ամբացման մէջ զորտար սեղ անէր զբազէսին յապաղող, ըլլաոնոց ջանը, յաճեցնելով երկուքն ալ հաստարապէս, մէկուն մէջ լուսկրակ, միւսին՝ առանձնանալու, հանգչելու, ինքն իր զբայ զալուսարար կարգա) պատմեր էր անպատի ժամուն անպատմելի, փոխն ի փոխ պարզ ու մաշլ, միամէս՝ որքան ժամանակէս, պատերազմին անմէջապէս յաջորդ երեւոտարութեան հաստարիճ զգայնութեամբ, անկախ՝ որքան անխմաստ իրողութիւնը հանգչելով ու դատելով, առանց սփիստութեան ու առանց ներքութեան, մ'չ լիբո, ոչ ալ աղջիկ, այլ՝ իրեւ մէկը, որ ծնունդն էր իրենց տունին, զբազէսին՝ ինչպէս իր մօրը: Սրուան իբրազարմութիւններէն տրամազին խանջնքով մը թմբած, պատրաստուող աղէտին առաջին ճնշումներուն, հետազդեցութեանց առկ արդէն կէս մը պլտորած անոր միտքը զծաւարութեան էր կրած այդ պատմումը լրջանակելու, ընդգրկելու մէկ անգամէն, այնքան հզօր էր անակնկալը: Սահակ Գարգիւսեանի համար աղջիկը (զերմաններուն Das maedchenը, այսինքն՝ անսոս տարածը) նարովէպի նիւթ էր եղած: Սոնան՝ ծերութեան ցուպ ու զաւապան ու թերեւս ուրիշ ալ սփոփանց: Մէկէն անոր զգայական ամբողջ գրութիւնը անցաւ արհուրազին զելումէ մը, որ նախանման էր ցուին: Ան կրնար մարթիւ այդ աղան: Անիկա երէկի պարմանը չէր՝ սա պատահարը, արկանը (չգործածեց ընդհանրացած արտաղ՝ սիրտարկանը) սոմանթիզմով բացատրելու կամ նիցնիթմով լուսապտակելու, երանգներ պարզելու, ինչպէս զիմաւրելու իր սիրտին հասցում սա զերբայոն կարուածը: Ան հակահարուածը: Կար հաստակածութեան աղէտէն իրաւափելու, երբ այսօր լատ աւելի բան զիտանց սիրտի կաթուածներուն լուրջ, որոնց անաւոր անողորութիւնը ամէն բողէ կը հերքուի, մահիճներուն իսկ զբայ: Անուշա հզօր յազում մը ժահուան հզօր աղակ մըն է: Ան մենք զիտանց, թէ Սոս հակ Գարգիւսեան ինչպէս վարժեցուցած էր իր լիզերը, ու ասով՝ սիրտը, ընդունելու աշխարհին բայր կարուածները: Բայց չենց տարածեր մեր գիտութիւնը անքիլ ըսուած այլապէս տարօրինակ իրողութեան ալ զբայ: Գտանէն երեսուն, մինչեւ իսկ ցառասուն ոչ մէկ ցառ հեղ կարող է նաւանել, եթէ երբեք արդէն չենք մտած, ըսել կ'ուզեմ՝ ցառասունին արդէն լուսինը փակած, մեր ներքէն, զուրտին համար փակ՝ մեր հայրը կանգին հետ: Յիսունէն վերջ ամէնէն ցաղցր վաթիւն իսկ աստուպանց է ալ: Մեր հոգիին նիւթերը (թող ներքուի սա

փոխաբերութիւնը) ճակատագրին տակն են մեր մարմնեղէն նեարդ-
 ներուն: Մերունին տկար է, աւա՛ղ, ամէնէն առաջ յուզումին համար
 (այս գիշերին յաջորդ շաբթու ընթացքին Սոնա Գոհարեան եւ Ար-
 տակ Գասպարեան ժամերով տառապած էին տեսակ մը խղճահարու-
 թեամբ, դրազէտին մահուան մէջ որոշ բաժին մը վերագրելով աւա-
 ղիլի այդ բոպէին...): Սահակ Պարզեւեան դրազէտ մըն էր: Անգի
 կը ձգեմ՝ յղացքը արժեւորել ղէպի բոլոր իր եզրերը, որոնց կարգին՝
 յուզումին ալ սահմանները: Գիտէ՞ք, որ կու լար, երբ ողբերգական
 բաներ կը խօսէր բեմերէն: Անիկա մասնաւոր տկարութեամբ մը կը
 հեշտանար հեքիաթային պատմումներէ, որոնք ընթացիկ էին ոռւտ
 դրականութեան մէջ, այդ երկրին անհունաստանին ծնած, բարքերու
 հօր ու դրա՛նքի նախնականութեամբ ժողովուրդներու առօրեային
 աշխարհ յատկանշական վերբերումներով, որոնց մէջ մատաղ աղջը-
 կան մը մարմինն վրայ հայր մը ու իր տղան իրարու կը ճակատէին:
 Կորքիի հեքիաթնե՛րը: Տոստեւակիի «Քարամազով եղբայրները»:
 Բայց ուրիշ բան են հեքիաթը, վէպերը, ուրիշ՝ կեանքը: Սոնային
 բերնէն ճակատագրին էր, որ կը խօսէր վերջապէս: Ատ էր պատ-
 ճառը, որ հակահարուածը եղաւ անմիջական՝ որքան անդամանելի:
 Թեթեւ մշուշ մը ետք, երբ Սահակ Պարզեւեան տեղաւորեց իր հաս-
 կացողութեան մէջ պատահարը, անոր մարմինը, այսինքն՝ անոր
 դրութիւնը կանգ առաւ վայրկեանաբար, նոյն ատեն իմաստ մը տա-
 լով սա կասուն ուրացումներուն, որոնք անոր ներքին զգայութիւն-
 ներն էին, ուրուացող, բայց չյօրինուող: Անիկա, հոգին ուրացող մը,
 կը ճանչնար վերջապէս անոր անհերքելի ստուգութիւնը, շատ եղբ-
 բական զնով մը: Փակեր էր աչքերը ու սմիտփուեր ինք իր վրայ:
 Յետո՞յ: Դարձեր աշխարհին Սոնային շրթունքովը, բայց պահանջե-
 ՚ր էր առանձնութիւնը»: Կը շարունակէր մտածել ու ապրել: Գիտե՞ց,
 որ այդ նախասիրութիւնը քակուեր էր իր բերանէն՝ անհուն երկա-
 բութիւն մը, ծանրութիւն մը ինչպէս: Շաւին պակասը, գաղարը՝ ու-
 ըրիչ ապահովութիւն: Շունը իջիւր էր իր անձուկէն, մօտենալու չափ
 կանոնաւոր կը շոյթի, թէ եւ քիչիկ մը ծոյլ, թոյլ՝ թոքէն բաժնուե-
 լու մէջ: Նոյնիսկ ուղեղային մշուշումը կը թուէր փարատիլ, տեղի
 տալ գիտակցութեան լիակատար վերագործի ու ասիկա սարսափելի
 էր անոր աչքերուն ներքը, որոնց վրայ ամուր կ'ուզէր թարթիչնե-
 րուն քողը, շնայելու համար սա աղջկան...: Այսպէս էր, որ սպա-
 սեց: Կը դրազէր իր միտքը վճիռովը, նոյն ատեն կը ջանար գի-
 մաւորել պատահարին ամիւտն ու անկարելիին: Կը համբէր գլխուն
 խորը սիրտին զարկերը, բարձին վրայ, լուրջ, լեցուն, համաշափ,
 ինչօք, ուժ պտնելով սա ներդաշնակ կը շոյթի: Իր միտքին հղան քա-
 նի մը թուայիկ ծանօթութիւններ, սիրտի զարկի անկանոնութեանց
 մասին, յանկարծակի զինքը գօտեպնդող, քանի որ անոնց պակասը
 փաստ մըն էր: Եղաւ միամիտ իր սիրտը հեռու կարծելու չափ սա
 տազնապէն: Ու կը շարունակէր, միշտ փակաչք, մտիկ ընել ինքզին-
 քը: Մուլ, մանր, բիւրաւոր հեծքեր, պճպոնումներ, կոծումներ, բա-
 նաստեղծներու բառով՝ շրջիւններ, խոնաւ ու սողոսկուն, այրումի,
 ճենճերումի, մոխրացման շատ յատակ գայութիւններով գոնաւոր,
 որոնք կը հաւաքուէին իր մարմնին բոլոր կեղծաններէն, ու կարա-
 ւան կազմած ճամբայ կը փնտռէին դուրս թափելու: Բայց գիտէր աղ-

Ղիկը իր մօտ, ինչպէս անհուն սառուպանք մը: Յանկարծ լին մը նըստաւ իր լանջքին: Լայն, իրաւ, հող հոտող լին մը: Անոր շունչը կեցաւ անխթարթային սոսկումէ մը: Ուրկէ՞՞ ճարեց շարժում մը, այդ անհուն բեռան ներքեւ: Ըրեր այդ փախուսող սակայն, որ հրաշքի մը պէս կրկին տարտղնեց կուրծքին վրայն այդ հաստամեծաւը: Բացւած էր իւրապէս: Բայց գոցուած՝ իր մարմինն աղբիւրը, ուժին հընձանը: Ուրիշ աւելի անաւոր սարսափ մը, գուր մը պէս, կակիծի մը նրկթական կոծուձովը ծաւալեցաւ իր մէջը, ներսը՝ ինչպէս դուրսը, — իր անպարագիծ սկարուփիւնն էր ատիկա, աչքերն ու ձեռքերը, նոյնիսկ թարթիչները գործածել կարենալու: Ինչզինքը կը զգար զանդուած մը, ուրկէ ըլլային փոխած Ղիկերը, ուր ըլլային ծալած ոսկորները, — դորը խճոր, ցեխի ու սրտի քացխումով մը (ստամոքսային կազմալուծում մը անոր շունչը կ'ընէր տարօրէն աշխած): Քրէշի անոր ուղեղն ալ պիտի անուէր սա ուրուսայնայման, քակուելու, քրքրուելու, թել-թել փրթելու ծաւալուն զգացումներէ: Ան կորսընցուց հակակշիւթը իր զգայութիւններուն, որոնք անոր ուղեղին զանազան կեդրոնները կ'ընէին վաւերական քառու, կեանքին ա'յն ձեւը, որ ուղեղին բջիջներունն է, դիտակցութեան հակակշիւթն անզամ մը ձեռքազատուած: Հոգեբանութեան զիրքերը բառեր ունին այդ վիճակները պատկերող, ուր պատին զարնուող լոյսի կտոր մը դէմք մը կ'ըլլայ: Սահակ Պարզեւեանի ուղեղին ազատ մտաբերուն վրայ կու գային անպատեղի ժամթաւներ, բուրն ալ օր մը աննուած ապրումներու, ապաւորութեանց անձրեւ ու սարսափ, յանկարծական անկումներով, ամէն մէկին մէջ վաւերական՝ ամբողջ՝ հանդիսանքը, պարագայական մանրամասնութիւնները, որոնց հետ զուգորդ սարսափէ կտորները պատկած կը մնային խորը անոր անցեալին ջուրերուն, — անհուն ծովաստան, զոր պիտի տանինք հողին: Ու դէմքեր, սիրւածն ալ, աւրուածն ալ, որոնց իւրաքանչիւրէն անիկա առեր էր իրենց վճռական կնիքը, ա'ն՝ որ ժամանակ մը իբրեւ յուշ, յիշատակ, զգայութիւն թափառելէ ետք մեր հոգեկան դրութեան շուրջը, պիտի վերածուի առոր մէկ մասին, երբեմն կազմելու համար ամբողջական յատակ ալ: Հայր մը ուրիշ մարդ մըն է երիտասարդ ամուսինէն: Սահակ Պարզեւեան լուսաւոր, բռնկած խճոր ժըն էր արարչութեան, իր ա'յն մտերէն, որոնք թաղուած կը քնանային իր տպւորումներուն թանձր գիրտին տակ: Անոնք կը խուժէին վեր, ըլլալու համար, դէթ վերջին անգամ, իրենց ազուորութիւնը, — ամէն պատանի փակ հանդէս մըն է այս կարգի գեղեցկութեանց: ..Յետոյ սկիզբ առաւ, իրարմէ աւելի յատակ գիծերով ու կարկտաներով, կարուսնը անոր ըզմաւորութեանց, տարիներով refoulé, բայց հիմա ա'լ ազատուած իրենց կազապարներէն, հագնելով ո'չ միայն իրենց ճարարապետութեան հէնքերը, այլեւ դժուար նուաճելի մոյշը, իմաստը, որ դրեթէ միշտ կը խուսափի մեր շրջապատէն: Որքան թիչ է թիւք մարդոց, զորս կը կարծենք ճանչցած ըլլալ, այսինքն՝ ծանօթ սասնց անձնաւորութեան ներքին ու ձայնին: Ու որքան շատ թիւք միւսներուն, զորս կ'անպիտանանք հիմնովին: Անեք շատ բան ենք իրարու դէմ, իրարու հետ, ուրիշներու աչքին: Անշուշտ: Բայց թիչ անզամ ուրիշ բան, քան ա'ն՝ զոր այսպէս կը թափենք զուրա, մեր գիտակցութեան նահանջին կամ պարտութեան բողբոջներուն: ..Ու կու գային անոր

կերպերը հասա, սգեղ, զգուելի, զորս ուարիներով զարագեղած էր իր ծոցը, բայց որոնք կը թօթուէին իրենց կեղեւանքը, կը թափէին, ըլլալու համար ակնթարթէ ակնթարթ անպատմելի փափկութիւն, քաղցրութիւն, կաթիլ, միս ու արիւն, շիրմութիւն, հեշտանքին վարդաբոյր մշուշները, — բոլորը կախարդ մատէ մը հաւաքուած անոր մարմինին բիւրուօր խորշերէն, բռնելով այդ ծփուն, շոգեղէն պատառնները գունաւոր ծովերու դէմ, բանալու համար անոնց թաքուն ծուլքերը, վերածելով գանոնք իրենց վաւերական իմաստիմ, ձայնիմ, խորհուրդ խորի՛ն, անհաս, անսկիզբին, դարդարող, հարսնեւորող յիմար բլիւը, որ կը փախչի անէութիւնէն, ինքզինքը յօրինելու մէջ այնքան հսկայ յաւակնութիւն ու կորով կը սպասէ ու զըդջահար, շարժարագին, պատրանաթափ, ամէն ինչ կը ներէ իրեն՝ ինքզինքը քանդելու, վերագանալու համար միապաղաղ հանգիստին, զարձեալ քառորդին ծոցը... . . . Կու գային անսկիզբ ու անվերջ... . . . Սահակ Պարզեւեան յիշեց կարդացած ըլլալ հոգեբանութեան գիրքէ մը յաւելուած մը, նուազման բուպէի մը զգայութիւնները պատմող: Գիտողութիւնը էջերու վրայ երկարող տպաւորութեանց շարք մըն էր, բոլորը ատնուած նուազող, գետին ինկող ու նոյն բուպէին գիտակցութեան բերուող հիւանդի մը ուղեղէն: Սահակ Պարզեւեան զարմացաւ անշուշտ, նեղեց ինքզինքը, գտնելու համար օրէնքը, որ պատանութեան գունդերուն կատարուած սա ընթերցում մը կը բերէր իր մտքի էջրտնին: Գիշերը կը քայէր, ծանր, հանգիստական: Արտեմիս Գոհարեան ծնրադէր՝ աղօթքի: Սոնա Գոհարեան ամբողջ հասակովը անոր բարձերը ամուր պահելու գրողած: Հիւանդին դէմքին տրտում, բեկ համակերպութիւն, բացարձակ անկարողութիւն՝ անխորտակելի կնիքով մը: Յետոյ՝ արդահատելի, աղաչաւոր սողնապանք: Սահակ Պարզեւեան, աչքերը փակ, պիտի չգլտնար, որ սա լքումը, ինքզինքը յոգնեցնելը կը թելագրուէր Սոնային դէմքէն, քիչ մը աւելի հակած դէպի հիւանդին քրտնողոց ճակատը, ուրկէ քիչ մը ջուր կը սրբէր-կ'առնէր անոր մազերէն փնջիկ մը, տակուին թեթեւակի արտարուրող անապատին «չաղք» ու, հաւանաբար աղը իր տղան համբոյրներուն: Որմէ ետք, այդ տղան, իր արարքին սարսափովը մեծցած, գինքը իրեն հո բերող, Խնչ գլուրութեամբ անիկա եղաւ իր տղան, քանի որ զգայութիւններու հակադէմը խուսափած էր իրմէն ու դատումին ուղղիչ ճպտող ջմահած միջամտութիւն մըն էր: Ուղեղը կը շարունակուէր քայքայուիլ, բուպէ առ բուպէ: Ու ինք գիտակից էր այդ հոստումին իրմէն դուրս, դէպի պարսպը: Անոր ուղեղին մէջ անցեալն ու ներկան, հետուն ու ծօղը իրարու հետ ու համար ո՛չ միայն կը շփոթուէին, այլև կ'ըլլային նոյնամանակ, տեւողութեան զգայարանքին հաւտնական խաթարումովը հարուածէն, այնպէս որ՝ սկսող պատկեր մը — կին, համբոյր, վիշտ, վայելք, կիրք — կը զարգանար անդուշակելի ընդլայնումով մը, կ'ըլլար բոլորովին ներհակ ու կը յանդէր անպատահի ուրիշի մը: Այս էր պատճառը թերեւս, որպէսզի մազի փունջ մը, պատահական ու փախստեայ զգուանքով (Սահակ Պարզեւեան նոյն այդ զգուանքին մէջ տեսաւ նորէն այդ աղջկան գլուխը իր ծոցին, այնքան անզգամներու համար իրաւ, խուզիչ, զգիտիչ տեսիլք, արձաթայիմ ու աստուածայիմ, ինչպէս բանաձեւած էր այդ խարտեաչ գան-

գիտութեամբ, այդ աղջիկէն, իր սիրտին այնքան մօտիկ), անոր զստնար, բայց իր սրտուռուշ բովանդակ քաղցրութեամբն ու ոտմանթիք իմաստով, ինչ որ սա եղիկելի ու մշտածարաւ մարդուն խորթացոյց սրամտութիւնն ու մէկ հատիկ, արբազան, անկարելի հպարտութիւնն էր կազմած, — պապակը անոր թարմ, ինք կ'ըսէր փրփօշ միտերուն, տարիներով իր ներսը կենդանի բխում, յարձակում, բայց միշտ ալ կալանաւորուած, զարմացնելով կամքէ հիմնովին զուրկ ծնած այդ գինովը կիներու միտէն: «Անհաս», «անհուպ», «անշամանդաղ», զբաղան նրբենի վերադիրհեր շէին անոր նոյնիսկ տօրեայ նախախրութեանց մէջ ըսելի, այլ թերեւս մարմիններն էին այդ երազին, որուն սասանը ինկեր էր անոր ներսը սա աղջկան մասներէն, առաջին իսկ Հանդիպումին (ո՛վ ողբերգութիւնը մարդոց կերբերուն ու երազներուն. մենք այսպէս ճակատագրուած ենք ապրելու մեր զգայութիւններուն սլաքները մեր ներսը, ամէն բովէ մեզ բղկածն ու աղջկան մը ետեւէն մեր ցանկութիւնները արածելու մայրերու ուղիով) ու անոր ծօրը ծոցը շղարշող, առաջատուող սրբազան յուզում՝ բանուած, երիզուած կ'ըսեն դիւբերը, անոր ջիղերուն բոլոր ճամբաներուն, Հանդոյցներուն: Առանց սա այլայլումին, որ գինն էր առաջարկ սա հիւանդութեան, Սահակ Պարզեւեան թերեւս յաջողէր զըսուելի մարմինին սա խուլ Հեծեծանքները, ըզմաւորութիւնները ու պարթիւնէրը իր մէկ հատիկ հայարտութեան, մէկ հատիկ յարզանքին: Ինչո՞ք զուր տեղը չէ, որ Հուլիսի քաղաք ըստած պահ մը ըլլայ սահմանուած մեր օրերուն, ինչպէս զուր տեղը չէ, որ մենք տարիներ ու տարիներ շղթայակապ կ'ապրեցնենք մեր ներսը մեր ամէնէն իբրև մասը: Այս մղումներուն մէջն էր անշուշտ, որ անիկա, բոլոր լարեւորուն թուլացման խուլ զգայութեան մը իբր անդրադարձ, փորձեց բանալ իր թեւերը, ամբողջական մատուռի մը վրայ ինչպէս, առնելու Համար անոնց աղիղին Սոնա Գունարեանը, անխտ ու անկախ առաւուած մը իբրեւ, իբրեւ հրաշքի աղեղ մը, թարմութիւն ու կուսութիւն, ինչպէս իր սիրտէն անհունապէս ըզմացուած զնքուշ մարմնատութիւն, գէթ վերջին անգամ գունելու ցանկութեամբ այն մէկ հատիկ զգացումը, որ աւելի է, գէթ իբր մտապատկեր, քան կենդանուն յանջը, երբ զգարելով կը զարնէր՝ ու իր ամբողջութիւնը լաւ կած», մուրացկանի մը նման, կը դասնար ետ, ինքզինքը նետելու, դիպելու, թմրումի դնելու իր զարշանքին մօրուտքին, կատաղի ու անշաք, յաջորդ օրը, ցուայը ձիւքը, կրկին իյնալու Համար արդանդաներու պողոտաները...: Անոր գիտակցութեան վերջին հրթիռներն էին, որ կը նետուէին խորոյցին վրայէն, մահիճը ընելով տափփորինակ պատարագ, ողբակէզ: Հրդեհ անոր գանկին տակ վերջին ժայթքումներէն մէկը՝ որ ծաւալեցու դէպի իր բարձրակները, գաննք բանալու Համար հրաշքի աղեղին: Բայց լքացուցան այդ բազուկները, անհետրին բեկում մը անդրադարձնելով անոր Հոգիին սիւնին: Անոր մատնէրը վախցան քակուելէ (դուք գիտէք, թէ ինչու Հիւսած էր գաննք եւ ուր), փրթած իր մարմնի գէն շէնքը կանգուն պահելու անկարող: Ու սա լքումը ողորում մըն էր, գրեթէ վերջնական: Կղպեց, ծեփեց իր թարթիչները իրարու: Նշեկարարական լրջութն մէջ անոնք իրարու փաթթուած անկենդան վարդի մը թերթերը եղան Սոնային աչքին: Յետոյ՝ սա Բաշուրիւ, ծրծ-


վիլը շատ յստակ զգալի եղան անոր դէմքին: Ըսես մէկը, արագ ու զորունի, որբէր ու տանէր անկէ մկանային ամէն թրթիռ, շարժուածի ծուէն, մեռելէն դատող անխօս, բայց արտայայտուն կտաւը մարդկային երեսներուն, որոնք մա՛նաւանդ աչքին զորուտ ոլորտին տակ ներքին աշխարհը կը ճարտարապետեն այնքան յանախ մեր դէմքին դաշտին: Յոգնուիւնը, նուազումը չէր ատիկա, որտի հիւանդութեանց վերջին բուզէները այնքան խոսվայտյոյ բեմադրութեամբ մը վերածող, տանջոնազին, դաւարուտ, դիւմաներով աքցանուած մը կաննեցու հանդէս մը, երբ տեսնենք մեր առջեւ, անջատ ու խեղճ, մարդկայինին ամբողջ, անհուն անուշութիւնը այդպէս ճիւղալին, անբժանելի քաշքուտի մը ճմռքումի մը թափող: Ու չէր ասիկա նոյն ատեն մահուան սանկ նենդ ու կապտաւուն լուսթիւնը, որ մեռած մասնիչակէ մը դալիկազին արատներ կը դնէ մեր շրթներուն, եղունգներուն ու մորթին մազաղաթին վրայ մանրանկար, ամսագուն ժանեակները կը հիւսէ դիտկին, անզգած ու վատ խաղաղութիւն մը, սուզում մը, անհետացում մը թիւղորոյ: Մեռած: Ծակտէն քրտինքը կ'առատանար, կը հաստընար, թիւղու կը վերածուէր ու կը թափէր դէպի կուրծքը, ուրկէ ճերմկած մազերու թաւուտին խորը կ'ընկղմէր: ...Ե՛րբ եւ ինչպէս անոր բերանը պիտի անցնէր խօսքի: Ո՛չ Սոնան, ոչ ալ Արտակ Գասպարեանը պիտի զգային ատիկա, այսինքն՝ դէմքին կապտաւուն ու անզգած մեռելութենէն ետոս տրամաթիք սկիզբը: Այդ բառերը դաշն էին, ամուր տալուած, պարզ, իրաւ, մա՛նաւանդ ամբողջ, կազմելու տատինան խորունկ հակապատկեր, եթէ ոչ հերքում՝ հիւանդագին ընդհանուր լքումին, յուսակորոյս երկարումին: Անոնց միակ ուշադրաւ կողմը ծաւալէ, փոքրութիւնը, շունչին տկարացմամբը հանդերձուած: Իմաստէ ոչ մէկ պակասութիւն: Ձէին պատմեր ոչ երկինքը, որուն յանախանքը հոգեկարգներու մէջ այնքան կը նեղէ ողջերը: Ձէին պատմեր դժոխքն ալ, որմէ կը վախնանք թերեւս զացողէն աւելի մեր հաշտոյն: Ու չէին պատմեր մա՛նաւանդ հոգեվարքը, այսինքն՝ սարսափի, ապուշ հրճուանքի քնարերգուած դերումը, զոր այնքան կը մեծցնենք, երբ ատոր կարէքը ունինք կամ կ'ուրանանք այնքան հեշտագին անզգամութեամբ, երբ մեր կիրքերուն բողկուկները կ'արձակենք մեզմէ ներս, նեղ գունելով աշխարհը մեր արտոճակներուն յագուրդին: Գրադէտէն ոչ մէկ հետք, ոչ մէկ ճարտարանք այս բառերուն գնացքին, դեկավարման ու իմաստին մէջ, որոնք անջատ-անջատ, հեռուէ հեռու փրթող, շուտով եղան սակայն միակտուր ճարտարապետութիւն — մարմինն ու խորհուրդը Սոնա Գոհարեանին, այդ հատուածայնութեան մէջ լրիւ ու միապաղաղ, պարզ ու ամբողջ, ինչպէս նոր հարսը առագաստի մուտքին: Տարին՛բ. երկու-երեք վանկի մէջ: Մարդերու սիրտին մէկ ու նոյն պապակը կիներու միտէն, որ հոս աւելի է, քան հեշտութեան գեղձերու հանդէսը ու հոգի ալ կրնայ թարգմանուիլ: Բացարկի յստակութեամբ, գրեթէ զգալի՝ գեղջեալ նախադասութեան մը նեղ հասակն ի վար: Իզմիրի ոսկե արշալոյսէն մինչեւ Հելուանի անպատին կայծակնահերձ, կարմիր վերջալոյսը, կործանած ու կորսուած դրախտը, անդառնալի խաւարումի մը մէջ խորասոյզ: Բառերը Սոնա Գոհարեանն էին՝ իր փթթումին, ուսեմացումին, ողորումին անպատում շնորհներովը, հրաւրովը, տեղի, պա-

հի, շատ բացառիկ, անհերքելի վկայութիւններովը, բոլորն ալ օր մը ասորումովն վճռական բարեքովը պաշտպանուած: Արտեմիս Գուհարեան ձգեր էր աղօթքը, դուրսը թողելու շափ ծածկած մահճակալին տակ խղճող մտքին խորը: Մոնա Գուհարեան լալու շատ ծօտիկ: Արտակ Գասպարեան, օտարի մը անիմաստ շիրթութեամբը: Ինչո՞ւ բացառ աչքերը: Բայց ի՞նչ վախ է, որ թափեցաւ ալ նուազուն անոր բերքէն: Գիտակի՞ց էր իր բառերուն, թէ կը փախչէր իր միտքը հերկող պատկերներէն: Ելեկարական լոյսը շատ էր անոր տկարացած շրթերուն: Գոցոց, կրկին, պիթիկ՝ շքեթները, հակառակ անոր, որ կը նեղուէր օդի պահասէն, հաւանաբար ներքին անձուկին մէջը մատնող բառերուն: Ասկէ անդին սկիզբ կ'առնէր երկրորդ քառորդը: Քիչ-քիչ անոր սեղեղին վրայ զգալի՝ անձրեւը լամպանդաղին, «երկինքին շաղերուն», որ կը տեղուէր, կը փաթթէր անոր շրթերը, դանոնք ընելով տակաւ դուրս, տեղնկալուչ, անհնազանդ: Ի՞նչ իրաւ էր իր բեկումը, երբ զգաց, որ ալ ձեռքը հիմնովին կ'առանաք զինքը: Աչքերը փակելու պարտքը՝ ուրիշ սարսափ: Բայց պատրաստ էր բերանը բանալ, ուրկէ խուժող օդը դուրս կ'իջնար բառի փշրանքներով, ձայն օլլալու շափ անամրող: Վերջնական խաւարումին շատ ծօտիկ, անիկա կը տառապէր իմաստեղութուն ալ նախանջն, որոնք կը մեկնէին անոր ուղեղէն, բայց կը մը նային կէս ձամբան, ընթացք շառնող հրթիռներու նման: Երակներու եւ սրտի (որ երբեմն մեծ երակ մըն է միայն) հիւանդութեանց ընկերացող դասական դիտարկումը հասած էր իր բարձրակէտին: Գրագէտին կրակատար բառերէն կը յորինուէր ճարտարապետութիւնը իր շրջումն ալ յայտնի: Ալ ամուր, ամբողջ, անկործանելի գահայէ մըն էր իր մահճակալը, առաստաղին փակած, իր հանդերձանքովը, զինքը շրջապատողներուն մարմինովը, բոլորն ալ առաստաղին վրայ պահելով իրենց անկարելի հաւասարակշռութիւնը: Ու ինքը, առաստաղը, որ իջեր էր բռնելու տեղը տախտակամածին, ելեկարական լոյսին դանդակովը ու կ'այրէր, առանց տարտամի: Սահակ Պարզեւեան այս տեղափոխումն ալ դատեց: Դեռ ուրուստիկ էր մտածումը կը դործէր սա ծփանուտ խաղաղութեանց ալ վրայ: Անգամ մըն ալ ամբացուց սրունքները, որոնք կային, կը հնազանդէին, շնորհներով ալ թելին, որ դիակ մըն էր ուսին փակցուած: Վերջապէս՝ միշտ պաշտպանութիւն, պիտի վար, պարսպին մէջ հոսելէ արդիւնք: Ու... սաւը, կրկին, երրորդ ու չորրորդ պատիկ ուժգնութեամբ, աւելի ահաւոր, քան թէ առաջուան լեռնակոյտ զգալութիւնը իր լանջքին վրայ: Ու կուրծքը մամուլի երկու կողակներու մէջ տափակցած, այնքան պիթիկ ու ամուր, որ կլորցան շրթները ըսես, հոգին դուրս փողրակելու: Ու ինչպէս թէլ առաջ, նորէն անոր ոտկորները անցան ազմուկի: Խուլ կծրուութ մը, փրթող ներաներու սրտիկուն պարը, ցաւին ահաւոր աքցանին տակ, ինչպէս կը տրտի մեզ երբեմն զգալ տառանարոյթին արթուն, երբ քակուող անային տունը կը քանդէ վայրագ դործիքը: Սահակ Պարզեւեան մեղքամոծ էր ցաւին նիպակին ներքեւ: Բժիշկը, որ հասեր էր հիւանդանոցէն, անհանդիստ, դժկամ, կծեց շրթները պատկերին դիմաց: Բան մը ըրած օլլալու համար առաւ քաղկերակը, որ ստոստում մըն էր, տեղահամալի, յիմար ու ինզո՛ւ: Իր վճիռն էր սրտին ճեղքուիլը: Ու մէկը

չանցուց մաքէն հարցնել այդ իմաստունին, թէ ինչպէս կը տեսնէր այդ ճեղքը լաթերուն, միսերուն, ոսկորներուն փաթաթներէն: Դեռ, դարման՝ անօգուտ: Ու կը պոռար մեն արձակագիրը ցաւին հզօր քերթուածը, առանց բռտեր կազմելու ուժին: Յետոյ՝ պրկուամները, իրարու ետեւէ, քանի մը անգամ, մորթուած հաւու մը ցնցումները տարօրէն յիշեցնող: Յետոյ՝ հեղեղէ մը ազատող երկվարին թօթուլուքը, որ անոր դէմքին մազադաթեայ էջերն իսկ փոթաւորեց ու քրտինջին կաթիլները արագամազ ըսաւ: Յուրտ, սառ այդ քրտինջը: Բուսան անոր ջուռքերէն քիչ վեր գաղիական Տ դիրը յիշեցնող բարակ ալ դիմեր: Յետոյ՝ պարը, խելազար, անողոք, լացի պէս յուզիչ՝ բոլոր դնդերներուն, ոսկորներուն, վերմակին ու սենեակին: Բազումթիւն էր անիկա, այդ զգայութեանց ծոցը, խաւարելու վրայ՝ իր դիտակցութեան վերջին պատկերը, որով կարծեց զգաւ, թէ սիրտը փրթած էր սեղէն, կտոր-կտոր բաժնուած քիչ մը իր սփէն մասերուն: Վասնզի անգամները, մարմինին բոլոր կողմերը մէկ ու նոյն բանն էր, որ կը պոռար: Զախ ձեռքը (ափին մէջ Արտակ Գասպարեանին) որ կը թրթոր, պաշտատարին անկարողութեամբ մը խելօք մնալու: Ու տեսան, որ կը զոզար, մեծատարած ու ամբողջ, մահահալը, զարմացնելու շափ ուժով: Ո՞վ կը ճարէր սա կուղպ, շէջ մարմինին սա ալիքները: Հողի՞ն: Մէկէն իրաւ զգացին իրենք զիրենք բոլորն ալ: Հոգեվարքը բառարանի բառ մը չէր ապահովաբար: Իժիշկը սահեցաւ, կամացուկ, դուրս: Զունէր ընելիք, մանաւանդ ընելիք: Այդպէս պարելով երբեմն մարդիկ պիտի անցնին յաւիտեանին մէջ: Ու տեսան, որ անոր շունչը կը թուէր քամոխի, քամոցէ անցածի պէս, ահուաներէն, փրփուրով ու արիւնով քիչ մը խառն, ձիւթ-ձիւթ, պղպղակ-պղպղակ, մածուցիկ, խճլտուն, ճշուն, որպէս թէ սղոցները զործի են հազազին ճամբաներուն: Ու հեղեղը արեան, որ կոր օւղխով բխում մը եղաւ, փռուելով վերմակին: Ու խաղաղութիւն: Զբսին մտել, վասնզի օղածանդակուտ պատանքը կար քրտինջին: Զուր կտրեցաւ անոր դէմքին ամբողջ մարդկայնութիւնը: Բոպէ մը միայն մեզ կը զատէ մահէն: Բայց որմէ ետք մեր դէմքը պիտի ըլլայ մեռելին կտաւը: Սառն, ամբողջական ջուրի պատանքի մը մէջ, առանց ալուկները կարենալ բանալու, առանց մաքբարովի, «անբարբառ ու անզգայ»՝ ինչպէս կը պատմեն դիրքերը, Սահակ Պարզեւեան մասա իր վերջին քառորդին մէջ: Ծունչին վերջնական դադարը մինչեւ մահինը շրջապատող անոր սիրելիները լապբեցան: Կեցաւ, պատին, ժամացոյցը: Ու կեցաւ, պարտէզէն դուրս, արշալոյսը: Երբ առաջին լոյսի խողերը զալկացան մութ կամարին դիւերուն, Սահակ Պարզեւեան իջած, հանգած հրարուխ մըն էր: Պարծառ ու խաղաղ: Բայց մանաւանդ երջանիկ: Յաւին բոլոր հեծքերը հալած՝ շողիացած էին անոր ա՛լ «ազատ» երեսներէն: Մահը չի պատմուիր, ըսի անգամ մը: Ու կը կենամ:

ՅԱՅՈՒՔ ՕՇԱԿԱՆ

(Մար. 26 եւ մնացեալը յաջորդով)



Լ. Մ Կ Ր Տ Ջ Ե Ա Ն

ՀՈԳԵՄՏԱԻՈՐ ԿԵԱՆՔԻ ԵԼԵԻԶՆԵՐԸ ՀԱՐԱԽՍԼԱԻՆՅՈՒՄ



Այն բոլոր երկրներում, ինչպէս յայտնի է, սրտեղ երբեւէ հաստատուել կամ հաստատուած է կոմունիստական մենատիրութիւն, հասարակութեան ո՛չ միայն նիւթա-կենցաղային պայմաններն են անմիջապէս շիշտակիորէն աննախանձելի դառնում, այլև ու առաւելապէս հոգեմտաւոր կեանքն է նուազագոյն մակարդակի իջնում, յաճախ հասնելով համարեա՛ւ ամառութեան զոնիքին: Այդ երեւոյթի նախադրեալները պարփակուած են ո՛չ միայն բուն եւ գրեթէ բոլոր զէպքերում աղէտաբեր մենատիրութեան մէջ, իրբեւ այդպիսին, այլև՝ այդ տեսակի մենատիրութեան իւրայատուկ բնոյթի, յաւակնութիւնների, գաղափարախօսական կոչուող միտումների եւ թանձրացեալ տեղով ու ժամանակով պայմանաւորուած կառուցողական յաւելեալ արտայայտութիւնների մէջ:

Այդպէս է կացութիւնը Խորհրդային երկրում եւ նրան ռազմա-քաղաքական տեսակէտից ենթակայ կամ ոչ ենթակայ, մտտիկ կամ հեռաւոր նոյնազիծ երկրներում, այս կամ այն պարագայական տարբերութեամբ հանդերձ: Ընդամին, հոգեմտաւոր կեանք առուելիս՝ նկատի է առնելու նրա ամբողջութիւնը իր բոլոր սլորտներով, որոնք թէև անխտիր տուտում են, բայց ո՛չ նոյն չափով: Այսպէս, եթէ ընթացիկ արուեստն ու գրականութիւնը, կամայարար կասեցուելով հանդերձ, բոլորովին զուրկ չեն ապրելու եւ ծաւալուելու յարակից պատեհութիւններէ, ապա բուն իմացական ու հասարակադիտական ոլորտները (փիլիսոփայութիւն, բնկերաբանութիւն, պատմագիտութիւն, եւ այլն) անողոք սահմանափակումների մշտական դաշտեր են հանդիսանում:

Դրանում կարելի է հեշտութեամբ համոզուել յիշեալ կարգի երկրներից ըըխած պարբերականների ու այլեւայլ հըրատարակութիւնների հետ շփուելով: Այդ իրողութիւնը մէկ կողմից անվիճելի է, իսկ միւս կողմից էլ կարող է սխալ եղբակացութեան մղել: Այսինքն՝ կարող է կարծուել, որ եթէ մարդկային հողու եւ բանականութեան գործունէութեան ուշագրաւ պտուղներ չեն դրոշմում տըպագիր փաստաթղթերում, ոպա դա նըրպանակում է, թէ գրանք չկան առհասարակ կամ այլեւս չեն կարող լինել, քանի որ համատարած կարգով արդէն ճգուել ու ամլացուել են պողաբերող տրամագրելի սարմերը: Մինչդեռ իրականում այդպէս չէ՝ կրկնակի նկատուումով:

Նախ՝ դա ներքին հաւատի ու համոզման հարց է, ըստ որի՝ մարդկային ոչ մի իշխանութիւն, իր բոլոր «ամենագործ» միջոցներով հանգերձ, երբեք չի՝ կարող լիովին ու վերջնականապէս վերացնել մարդկային էակների բնատուր ունակութիւնները: Եւ ապա՝ Հենց բուն հասարակական կեանքն ինքն է բաղմաթիւ օրինակներով ցոյց տուել, որ շատ անգամ բոլորովին ամայի կարծուած միջավայրերում անպատեխորէն, առջին իսկ նպաստաւոր առիթով, հոգեմտաւոր իսկական զարթոնք ու ծաղկում է տեղի ունեցել: Նման օրինակներ կարելի է վկայակոչել նաեւ թէ՛ խորհրդային եւ թէ՛ արեւելահարապահան երկրների նորագոյն (ժամանակակից) պատմութիւնից: Բայց այս անգամ սահմանափակում եմ սոսկ հարաւսլաւական իրականութեամբ եւ չեչուր գնում առաւելապէս հասարակագիտական ու փիլիսոփայական բնագաւառի վրայ:

Ամէնքին յայտնի է, որ մա՛նուանդ ՅՅ տարուց ի վեր Հարաւսլաւիան յատուկ տեղ է բռնում իրերի բերմամբ դաւանակից երկրների շարքում, այսինքն՝ որոշ առումով աւելի ինքնուրոյն է, աւելի բաց ու նաեւ «հանդուրժամիտ»: Նոյնիսկ տիրող կուսակցութիւնը ուղղակի կոմունիստական չի կոչում, այլ «Կոմունիստներն միութիւն»: Կազմակերպական հան-

րայայտ կենտրոնապաշտ միտումը այս կամ այն եղանակով հակակշռուում է դաւանակցային ապակենտրոնացման հետ կապւած տարբերով: Եւ այլն: Բայց եւ այնպէս, այդ երկրում ե՛ւս պաշտօնական մեանաշնորհ է վայելում կոմունիստական կոչուող գաղափարախօսութիւնը, դրանից բխող աղէտալի հետեւանքներով: Առաջին հերթին տուժում է բուն հասարակագիտութիւնը, իր բաղկացուցիչ ճիւղերով: Ինքնին հասկանալի է՝ նաեւ փիլիսոփայութիւնը:

Այդպէս լինելով հանդերձ, դաւանակից երկրների շարքում Հենց Հարաւսլաւիան եղաւ այն միջավայրը, որտեղ նոյնիսկ փիլիսոփաները խմբովին հանդէս գալու եւ գործելու քայլեր կատարեցին որոշ ժամանակ ու, վարչական ճնշմամբ շոցնիքի ենթարկուելուց յետոյ էլ, չհրաժարուեցին այդ մտայնութիւնից ու ձրգատումից մինչեւ հիմա: Կոչումով ու ըզբաղմունքով փիլիսոփաներ կան նաեւ, ի հարկէ, արեւելահարապահան միւս երկրներում, մա՛նուանդ լեհաստանում ու Չեխոսլովակիայում: Բաւական է յիշել Հենց թէկուզ միայն տարիներ առաջ լեհաստանից դուրս ելած եւ այժմ լոնդոնարնակ ականաւոր փիլիսոփայ Լեշեկ Կուլակովսկուն: Բայց այդ երկրներում նրանք մինչեւ հիմա ժամանակ առ ժամանակ աչքի են ընկել առաւելապէս անհատաբար: Մինչդեռ Հարաւսլաւիայում փիլիսոփայական-հաստարակադիտական միտքը արտայայտութիւն գտաւ որոշակի շրջանակի, խմբի, շարժման, գրեթէ կազմակերպական հունով:

Ես նկատի ունեմ նշանաւոր «Պրաքսիս» փիլիսոփայական մտաւոր շարժումը իր համանուն պարբերականով: Այդ շարժումը հրապարակ եկաւ 1986 թուին: Ծարժման մասնակիցները տիրող իշխանութեան ու գաղափարախօսութեան բացայայտ հակառակորդներ չէին, այլ իրենց հասարակութիւնից բխած մարդիկ, նոյնիսկ կուսակցականներ: Բայց նրանք միաժամանակ ունէին քննական ու բարեխօսող շահան արամագրութիւններ, թարմ

եան եւ Հասեղծագործական ժառանգործի սկզբունքները։ Ուզում էին իրենց պարբերականը դարձնել «յեղափոխութեան մտքի փիլիսոփայութիւն», զոյութիւն ունեցող ամէն ինչի անվերապահ ընկալատութիւն, իրապէս ժառանգային աշխարհի շատագոյնութիւն։ Առաջ էր քաշուած «ժողովրդավարական ընկերվարութեան» մասնաշաղկապի մշակման հարցը։ «Պրաքսիս» հանդէսը ինքնաբերաբար միջազգային համառու ձևով բերեց, քանի որ նիւթեր էր հրատարակում նաեւ արեւմտահարապական տարածուած լեզուներով, օտար հեղինակների աշխատակցութեամբ։

Աւելին. «Պրաքսիս» խմբի նախաձեռնութեամբ, ամառային արձակուրդների ժամանակ ամէն տարի գիտական Հաւաքոյթներ էին կազմակերպում Կորչուպ կղզում, Արեւելքից ու Արեւմուտքից Հասած մտաւորականների եւ ուսանողների մասնակցութեամբ։ Եւ ահա իշխանութիւնները դործի անցան ու աստիճանաբար սահմանափակեցին աշխուժացած փիլիսոփաների գործունէութիւնը։ Նախ դիմեցին գրաքննական տարրեր ստեղծութեան կրճատմանի որ ու յետոյ էլ, ի վերջոյ, 1975ին փակեցին «Պրաքսիս» հանդէսը, արգելեցին Կորչուպի ինքնատիպ Հաւաքոյթները, իսկ բազմաթիւ փիլիսոփաների գրկեցին Համալսարաններում դասուսանողելու կամ ալլապէս դործելու իրաւունքից։ Այսպէսով, «Պրաքսիս»ը տեւեց տասը տարի (1965-1975)։

1980ի վերջին՝ «Պրաքսիս» շրջանակին պատկանած որոշ փիլիսոփաներ իշխանութիւններից թոյլտուութիւն խնդրեցին արգելուած հանդէսի փոխարէն նորը հիմնելու՝ «Եւրոնոս» («Հրատարակչական ընկերվարութեան» տեսական ու գործնական հարցերը ըննութեան առնչուելու համար, բայց մերժուած ստացան։ Հակառակ դրան, պատժուած փիլիսոփաները վերստին աստիճանաբար տեղ դտան իրենց Համալսարաններում։ Այսպէս, մասնակիորէն «Վարկափոխութիւն» Բելլիգրի Համալսարանի 7 նախկին դասա-

խօսներ (Չաղորկա Գոլուբովիչ, Միհայլո Մարկովիչ, Իրադուիւր Միլոնովիչ, Ներոյա Պոպով, Սեւոզար Ստոյանովիչ, Լիւբոմիր Տադիչ, Միլադին Ժիվոտիչ), Համալսարանին կից 1981ին ստեղծելով «Փիլիսոփայութեան եւ ընկերային տեսութեան կենտրոն» եւ իրենց գործունէութիւնը նոր ձևով շարունակելով միասնաբար։ «Վարկափոխութեան» թոյլտուութեց ոչ քաղաքական ընթացիկը ուսումնասիրութիւններ դրել ու Հրատարակել, թէեւ նրանց նախատրամբնադաւառը հենց ճիշդ քաղաքական փիլիսոփայութիւնն էր։

«Եւրոնոս» հանդէսի հրատարակութիւնը մերժուելուց յետոյ, կէս տարի անց, 1981ի Ապրիլին նախաձեռնուեց նոր՝ «Պրաքսիս-իմսերնացիոնալ»։ Բայց եթէ առաջին «Պրաքսիս»ը լոյս էր տեսնում Չաղբիբում, «Սորուսթիայի փիլիսոփայական Բնկերութեան» Հովանաւորութեամբ, նորը վաստակուեց Հետաւոր բրիտանական Օքսֆորդին։ Բացի այդ, եթէ չաղբիբան հանդէսի խմբագրութիւնը կազմուած էր 7 հոգուց (Բ. Բոսնեակ, Ի. Գրիլիչ, Մ. Կանդրակ, Ի. Կուլաչիչ, Գ. Պետրովիչ, Ռ. Սուպկի, Պ. Վրանից-կի), օքսֆորդեան հանդէսը հրատարակուած է ամերիկացի փիլիսոփայութեան պրոֆեսոր Ռիչարդ Ջ. Բերեստայնի ու բելլիգրացի «Պրաքսիս-վետերան Մ. Մարկովիչի պատասխանատուութեամբ եւ շրջից 40 հոգիանոց միջազգային խմբագրական խորհրդի անունից, որի մէջ մտնող Հարաւարացիներն են՝ Գոլուբովիչը, Ստոյանովիչը, Տադիչը (Բելլիգրացից), Վելիգո Ռուսը (Լիւբլիանայից)։ Հարաւարական «Պրաքսիս-փիլիսոփայութեան կենտրոն է դառնում, այսպիսով, Բելլիգրացի, Չաղբիբի փոխարէն։

Նոր հանդէսում ըստ էութեան նկատել են տունում հնի հիմնական սկզբունքները, 80ական թուերի պայմաններում։ Ի հարկէ, հանդէսը բոլորովին արձակ ու անափ դաշտ չէ, այլ՝ սոսկ ճարտարական-մարդասիրական կողմնորոշուած մի որոշակի ցանկապատուած փորձադաշտ։ Բայց այդ ինքնին սահմանա-

փակ դերով նույնիսկ նա մշտական կատարածներ է յարուցում իշխանաւորների ծօռ եւ խոչընդոտների հանդիպում: Այսպէս թէ այնպէս, Հին ու նոր «Պրաքսիաների պատմութիւնը, փորձը, յարուցած արձագանգները թոյլ են տալիս մըտածելու, որ Հարաւայւական իրականութեան մէջ, շնայած վերին դադարաբարձական կամ իրրեւ աղբիւսին ներկայացուող պարտադրանքներին, բուն հոգեմտաւոր կեանքը կանգ չի առնում, այլ արատայալում է իր ելիւէջներով, հերթական խմորումներ յաջորդականութեամբ եւ Հասարակական ներդրութեամբ:

«Պրաքսիաների հանրային դասանքը իրենց Հասարակութեան կեանքի ժողովրդավարականացումն է՝ տեղական յատուկ պայմանների հաշուառումով: Դա երեւում է նրանց այլեւայլ ելույթներին, հարցադրոյցներին եւայլնին: Այդ հոսանքի դադարները առաւել ցայտուն արտայայտութիւն են գտնում 50 տարեկան Աւետարա Ստյանովիչի բերնով, այս կամ այն լրագրական հարցադրոյցի առիթով: Այսպէս, 1984ի դարնանը արեւմտագերմանական Գէօֆինդերի Համալսարանում դասախօսութիւններ կարգալու հրաւեր ստանալով՝ նա մի ընդարձակ հարցադրոյց ունեցաւ Համբուրգի «Դի ցայտ» շաբաթաթերթի աշխատակցուհու հետ, որը տպուեց Ապրիլի 18ին:

Ստյանովիչը այդ հարցադրոյցում նախ պատմում է իր դադարակիցների գործունէութեան այժմեան պայմաններին, ներքին ու արտաքին գիտական կապերին, հրատարակումների բնոյթի եւ նըրանց յարուցած հանրային արձագանգների մասին: Ապա նշում է, որ «շնուն ժողովրդավարական ընկերավարութեան» զանգուածային շարժումը, լեհական «Համերաշխութեան» նման, Հարաւայւախոյում առ՛չ հնարաւոր, ոչ էլ անհրաժեշտ է», քանի որ այդ երկրի «կոմկուսակցութեան գերը այլ է, քան լեհական բանուորական կուսակցութեան գերը», ինչպէս եւ Հարաւայւախան Լեհաստանի նման «ազգային-կրօնական համասեռութիւն»

չունի: Ասում է նաեւ, որ թէեւ ինքը երկար ժամանակից ի վեր քննադատական դիրք է բռնել Հարաւայւական կոմկուսակցութեան հանդէպ, միաժամանակ լաւ դիտել, որ այդ կուսակցութիւնը բնակչութեան աչքում դեռեւս համարում է «ազգային անկախութեան երաշխիք»: Գտնում է, որ արեւելաեւրոպական գիտական սոցիալիզմին երկրներում «մարքսիզմը բնակչութեան աչքում սեանկացել է, որովհետեւ դա տիրող դասակարգի, քաղաքական վերնախաւի լեզուն է», որին էլ հենց կուշտ է բնակչութիւնը եւ չի հաւատում, թէ քաղաքական-ընկերային որեւէ նշանակալի բարեփոխում կարելի է կապել մարքսիզմի հետ: Այլ է վիճակը Հարաւայւախոյում, որտեղ մարքսիզմի անուսով կարելի է տակաւին որեւէ բան անել:

Մտացնելով որոշ դրոյթներ՝ բնկերարան-փրկիտոփան ասում է. «Ես միշտ էլ անել եմ, որ վերջին հաշուով չկայ առողջ, զարգացած ժողովրդավարական ընկերվարութիւն, առանց քաղաքական բազմաապրութեան: Բայց եթէ միայն այդ հաշուի առեւմ դա կարող է սխալ հասկացուել: Եւ դա կը լինի քաղաքական բարոյական մի անպատասխանատու խոյ: Քանզի Հարաւայւախոյում խօսքը չի վերաբերում ժողովրդավարութեան որեւէ վերացական կազապրի, այլ՝ ազատականացման ու ժողովրդավարականացման մի աստիճանական ընթացքի: Եւ որպէսզի բնակչութեան կողմից միշտ հասկացուեմ, թէ իմ գաղափարները թէեւ բնադատական, բայց ճանի իրատեսական են, ասում եմ.— բազմակուսակցական կարգը լուծում չէ՝ Հարաւայւախոյի համար այս պահին, այն էլ երբէ պատճառով:

1) Իրական քաղաքականութեան առումով դա անկարելի է, որովհետեւ կամուրջատական կուսակցութիւնը չի թոյլատրի:

2) Դա իրատեսական լուծում չի լինի, որովհետեւ մե՛նք ազգային-կրօնական շատ բարդ երկիր ենք, առանց ազատական-ժողովրդավարական մեծ ամոզալի պատմութեամբ:

3) Հարատևելու համար աշխարհագրական-ազգայնական գիւղը պահանջներ է, որ միշտ էլ պետք է հաշուի մըստի մեր մեքենան գործընթացն արտասահմանում որևէ միջամտության կարելիությունները: Քաղաքական անասանական բազմաառարկությունը կարող է հասարակական մասնաճիւղն ուժեղացնել հարավայնական օրինական պատկերացումները: Մենք պետք է գործենք մեր վարչակարգի ժողովրդավարականացման, իսկամենից առաջ կուսակցությանն ու արհմիութիւնների արմատական ժողովրդավարականացման ուղղությամբ:

Լրագրողուհու այն հարցին, թէ ենթացողը, որ այդ ծրագրերն իսկապէս իրագործուեն, այն ժամանակ արդեօք փոփոխման ինքը կ'ուզենա՞յ զազաքականացնել գործուն գեր խաղալ նոր պայմաններում, — պատասխանն այս է.

«Ինչ վերաբերում է անձամբ ինձ, իբրև պրաֆեսիոնալ-փիլիսոփայի, դա ես չեմ կարող պատկերացնել այդպէս: Իմ դերը, իմ ինֆանտիլիզացիաներ միշտ կը լինի նոր գաղափարներ գարգացնել, նոր առաջարկութիւններ մտցնել հասարակությանն քաղաքական գործունէութեան մէջ: Իսկ թէ դրանք կ'ընդունուեն կամ ոչ՝ դա ուրիշ բան է: Այլ խօսքով ասած, ես ինձ երբեք չեմ առաջադրի որևէ քաղաքական պաշտօնի համար, չիտեմ որևէ քաղաքական իշխանութեան մասին: Այդ յանդիմանութիւնը թէև միշտ էլ արուել է մեր հասցեի, մեր դէմ յարձակումներ գործուելու, բայց դա ամէն տեսակետից հակասում է մեր դերի գիտակցութեանը հասարակութեան մէջ»:

Լրագրողուհու այն դիտողութեանը, թէ դա կարող է հասկացուել այնպէս, որ «Պրաֆեսիոնալ իմ քննադատները պատրաստ չեն գործնական պատասխանատուութիւն ստանձնել իրենց գաղափարները համար, Ստոյանովիչը արձագանգում է այսպէս.

«Բնականաբար, դա կոտորած է նրանից, թէ ինչ է հասկացում քաղաքական

ութեան տակ: Ես մշակում եմ բազմաթիւ արտայայտած քաղաքական գաղափարներ եւ դրա համար կրում բարոյական պատասխանատուութիւն: Ես միշտ պատրաստ եմ դրա շուրջ բանավիճելու: Եւ այդ իմաստով ես բնաւ քաղաքականութիւնից զուրկ չեմ գտնուում: Դուք գիտե՞ք, որ ինչ որ արտայայտում էք իմեւ, դա ե՛րբ գայութեան վրէժ է: Եթէ ես քաղաքական մասնակցութեան այդ ուղին բնորոշ լինէի, ապա տակուիմ բան տարի առաջ թեկնածութիւն կ'առաջարկէի, էրբ դեռ կուսակցութեան մէջ էի եւ այդ հնարաւորութիւններն ունէի: Բայց ես չեմ կամեցել այդ նմանապարեմով գնալ, քանզի ես իմ դերն այնպէս եմ որոշել, ինչպէս որ եիմա տարւում եւ աշխատում եմ: Եւ «Պրաֆեսիոնալ» մտաւորականներն էլ անելի շուտ ունեն խորհրդանշական, բարոյական-քաղաքական դեր, առանց ընդգրկուելու որևէ հասարակութեան մէջ»:

«Պրաֆեսիոնալ իմ քննադատները փոփոխութեանը դրեթէ քսան տարուայ հրատարակչին գործունէութիւնը, իր անխուստփելի ելեւէջներով, այն բանի ցայտուն վկայութիւնն է, որ հոգեմտուող կեանքը իր գոյութեան պահանջներն ունի նաեւ այն կամ այն աստիճանի բուսաբանական երկրներում, յանուն ազատ ու անկախ մասնագրութեան իրաւունքների ապահովման: «Պրաֆեսիոնալ» որք էրականութեան ծնունդ է եւ արտայայտութիւն, որն իրերի բերմամբ միջազգային արձագանգներ ունեցաւ, ո՛չ միայն չնահանջեց իր սկզբունքային դիրքերից, այլև նորանոր եղանակներ ժողովեց ինքնաբարոյայտման համար: Բայց Հարաւորայայտում ազատ խօսքի օգտին պարբերաբար ելոյթներ են նկատուում ո՛չ միայն «Պրաֆեսիոնալ» անմիջական հետևորդները, այլև ուրիշ մասնաբաժնիները: Երբ անհատաբար, ինչպէս էլ որ ընդ ձայնը», ընդ աջին կամ որևէ այլ կերպ անուանուելու լինեն նրանք:

Այսպէս, 1982-ի վերջին լոյս տեսուեցր Բուսկո Միլոսավիեւիչի «Նրկիր մութ լարակի հասարակութիւնը» գիրքը, որի մէջ հեղինակը, ինչպէս ասում է, բաց

ի բաց բանավիճում է Մարքոսի ու «քոլոր կոմունիստական պետությունների» հետ, տառջ քաշում տեսակետներ, որոնք, ի դեպ, չեն համընկնում ո՛չ արեւելեան, ոչ էլ արեւմտեան ընկալիչալ դրոյթներին: 1983ին 1000 օրինակով լուս տեսաւ ու մի քանի օրուայ մէջ անմիջապէս սպասուեց Վոյնիլու Կոստունիչայի եւ Կոստա Չաւոսիու «Կոստալիցական քաղաքացարարութիւնն քէ կուտակցակամ միաբնասութիւն» գիրքը, որի մէջ վերլուծուած են 1944-1949 թուականներէ հարաւարաւան կրադարձութիւնները, թէ ինչպէս սկզբնական բազմասարրութիւնն աստիճանաբար ու կամայարար վերածուեց կոմունիստական մեհատիրութեան: Հեղինակներէ համոզումով, իրողութիւններէ վրայ յենուող պատմական ճշմարտութիւնը երբեք չպէտք է հարցականի տակ դրուի, որքան էլ որ այդ ճշմարտութիւնն այսօր մէկնումէկի համար տհաճ լինի: «Ճշմարտութիւնն այն գեղարմէն է, — ասում են նրանք, — որի վրայ կանգնած ինք, եւ այն երկիրը, արք կամար է կապում մեր վրայ»: Ի հարկէ, նման մեծ ու փոքր հրատարակութիւններն անմիջապէս պաշտօնատար անձանց յարձակումներէ թիրախ են դառնում, բայց եւ այնպէս, ժամանակ առ ժամանակ այդպիսի գրքեր տպւում են եւ հանրային իրողութիւն դառնում, ազգելով մարդկային մտքերի շարժման վրայ:

Հոպեմտաւոր խժորումները դրսեւորուում են նաեւ, ինքնին հասկանալի է, դեռարուեստական դրականութեան ճանապարհով: Ընդունին պէտք է հաշուի առնել, որ մանուանդ կոմունիստական տեսակի բունատիրական երկրներում դեռարուեստական երկերը հասարակութեան — պարզ է՝ նաեւ իշխանութիւններէ — ուշադրութիւնն են գրաւում ոչ այնքան իրենց զուտ դեղարուեստական ասանձնայատկութիւններէ, որքան որ հանրային կամ ազգային սուր եւ յատուկ հնչողութիւն ունեցող նիւթեր արժարձակու: Ինչպէս, 1982ին լոյս տեսաւ Անտոնիէ Իսակովիչի «Պան 2» («Տրեմ 2») վեպը, որը վերաբերում է

1948-52 թուերի «Գոլի օտոկ» («Մերկ կղզի») կղզու համակենարոնացման ճամբարին, որն ստեղծու էր Տիտոն զատախնականներին կամ այդպէս կարծուողներին համար (ըստ պաշտօնական տուեաններէ՝ 8403 մարդ, իսկ ըստ բանաւոր լուրերի՝ 250 հազար): Վէպի ձեռագիրը հրատարակութեան է յանձնուել 1978ին, ապա, ընդունուելու եւ մերժուելու յաջորդական փուլերից անցնելով եւ ընդամէնը 23 դրական նայնական գրախօսականներէ արժանանալով, տպուել 1982ին: Գիրքը հրատարակուելն ներկայացուեց Բելգրադի «Երիտասարդութեան տան» 1000 հոգի պարունակող արահում, զուտ զգրական մակարդակով: Եւ շատ զգուշօրէն, առանց յիշելու նրա քաղաքական պայթուցիկ բովանդակութիւնը:

«Մերկ կղզու» նիւթով դրադուել են նաեւ ուրիշ արձակագիրներ ու թատերագիրներ: Օրինակ, սլովեն Գուսան Իովանովիչի «Կարամուզով» երկախօսութիւնը: Առհասարակ հարաւարաւան պայմաններն այնպիսիք են, որ կարեւոր դեր են խաղում առանձին հանրապետութիւնների փոխադարձ յարաբերութիւնները, հակառակութիւններն ու մրցակցութիւնները: Ի հարկէ, Հարաւարաւանի քնակիչները, ինչպէս յայտնի է — այլապէս զանդուածները չհաշուած — բոլորն էլ «հարաւային սլաւոններ» են, բայց իրարից ուելի կամ պակաս չափով տարբերում են լեզուական, կրօնական, քաղաքակրթական, տաւանդութեան եւ այլ առումներով: Այնպէս որ, որեւէ հարցի նկատմամբ ամէն տեղ անպայման ընդհանուր մօտեցում չկայ: Յաճախ է պատահում, որ մի տեղ թոյլատրուածը (կարծեօ չի հեճուակ) թոյլատրողի) մի ուրիշ տեղ արգելուած է: Այդպէս է նաեւ ճանցալը յաղթահարելու» վէճերով առատ ասպարէզում, — պատմագրութեան, դրականութեան ու արուեստի եւ նման բնագաւառներում:

Ճարրերութիւններն ու այդ առթիւ ծագող դժուարութիւնները յատկապէս նկատելի են թատերգութիւններէ ներկայացման կապակցութեամբ, քանի որ թատրոնը իր իսկ ընդթով լայն զանգ-

ածններին աւելի մօտ է գտնուում եւ բնակչութեան մէջ այլեւայլ գաղափարներ ու տրամադրութիւններ տարածելու առաւել յարմար միջոց հանդիսանում: Ուստի եւ՝ պետական հսկողութեան աւելի է ենթակայ: Այսպէս, 1984ի Յունիսին Բելգրադում ներկայացուց Դոբրինցա Պոլիտի վէպի բեմականացումը՝ «Դրիմայի նախատմարտը», Առաջին Համաշխարհային պատերազմի իրադարձութիւնների վերաբերեալ: Նրանում յատուկ ներշնչումով ներդրում է անբազան բանակի իրախութիւնը անհաւասար կուում, հոգեւորականութեան դրսեան դերը, ուստի եւ՝ նպաստում սերբական հայրենասիրութեան ու ազգայնականութեան մշտաբարձր ոգու կրթութեամբ: Եւ թատերարահը ուղղակի հաւաքական ցոյցի վարի վերածուց: Մինչդեռ նոյն թատերախաղը չի կարող այսպէս ընդունուել միաբոլոր հանրապետութիւններում: Կամ նոյն Բելգրադում նոյն ժամանակ տեղի ունեցաւ «Երգիծական կարգէի» երկնայթ, «1953ի վրիպած տարիներ» տեւում էր Միլոշի Ջիլասի երբեմնի վեճարանական յօդուածներից առատորէն զարուած ասոյթներով համեմուած: Հանդիսականները ջերմօրէն ընկալեցին երկուն եւ միաժամանակ ողջունեցին իրենց շարքում նստած հանդիսատես Ջիլասին: Բայց հաստատ չէ, թէ այդ ծրագրի հետ ինչպէս կը վարուէին ուրիշ վայրերում:

Եթէ որոշ ներկայացումներ կարճ կամ երկար ժամանակով թոյլատրուում են, ուրիշներ էլ արգելուում են: Այսպէս, երկու-երեք ամսում արգելուեցին երեք թատերախաղեր: Իզադ Պիմիչի «Քաղաքականութիւնը» (Բեռլինի իրաւաբանութիւնը), Ալեքսանդր Պոպովիչի «Ծածանի ձկնկիթ դնելու ժամանակը» (Սերբիայում), Վուկ Դրաշկովիչի «Իստուարը» (Բելգրադում): Աւելի առաջ մի թատերգութիւն («Գոյութեան շաղկապ») արգելուեց Նովի-Սադում, Վոյվոդինա մեծ մասամբ հունգարարեան կնքնափար մարդի մայրաքաղաքում, սակայն դա յետոյ ներկայացուց Սերբիայում, Մակեդոնիայում, Խորուսթիայում

ու Սլովենիայում: Դատելով հրապարակւող տուեալներից, փոխադարձ անհամաձայնութիւնների տեղիք է տալիս մեծ մասամբ չպարտիզանական պատերազմի ժամանակաշրջանը, քանի որ այն տարբեր բնոյթ կրող յիշողութիւններ է յարուցում տարբեր հասարակութիւնների ու խաւերի մօտ:

Հարուստիայում նկատելի է, որ տարեցտարի անում է այսպէս ասած «քաղաքական» թատերգութիւնների թիւը: Ինտրոչ է, որ հերթական թատերգութիւններ են յօրինուում առանձնապէս արդէն լոյս տեսած երկերի հիման վրայ, որոնց անցել են վճռական գրաքննութիւնից: Բացի այդ, դերասանները յատուկ եռանդով են ստանձնում նման աշխատանքներ, որոնք միշտ չէ որ անվտանգ են իրենց սուպարդի համար: Կայ եւ մէկ ուրիշ հանգամանք. թատերգութիւնները շատ դէպքերում բեմ են հանում կարճատեւ փորձերից յետոյ, հետեւապէս ոչ պատշաճ որակով: Ետապելու պատճառն ու մտահոգութիւնն այն է, որ վերելից ներկայացումը յանկարծ շափանուի, այսինքն՝ կասկած ծագելու գէպըստ իշխանութիւնները չհասցնեն անմիջապէս հարուածել: Եւ հասարակութիւնն ու քննադատութիւնը, ինչպէս երեւում է, դա լուրեւայն հասկանում եւ ներողամիտ են: Այնպէս որ, մշտապէս լուռ հակամարտութիւն կայ թատերախմբերի եւ վերին աստիճանների միջեւ, ինչպէս եւ հենց այդ աստիճանների ներքին՝ չափաւոր կամ մոլորականութիւնների միջեւ: Դրանով են պայմանաւորուած եւ այլեւայլ տրտաքուտ անբացատրելի չպատահականութիւնները», չափ ու կշիռների տարբերութիւնները:

Այսպիսով, Հարուստիայում եւս հասարակութեան հոգեմտաւոր կեանքը ընթանում եւ դրսեւորում է իրարամերժ օւժերի մրցման պայմաններում: Եւ նրա պայծառութիւնը կամ գորշութիւնը առկայ ուժերի յարաբերակցութեան արտոյայտութիւն է հանդիսանում: Ուժերի յարաբերակցութիւնն ասելով պէտք է հասկանալ ո՛չ միայն պետական իշխանու-

թեան ու շարքային քնակութեան ընդհանուր փոխարարներութեան որպիսութիւնը, մոայուն կամ փոփոխական, այլեւ՝ ներհասարակական, ներփերնախառային եւ այլ կարգի տարերային խմորումները, մրցակցային կամ հասուցողական տրամադրութիւնները: Այսինքն՝ այն բուրբ գործօնները, որոնք, իւրաքանչիւրն իր հերթին, զհարգաւորում են՝ հասարակութեան գոյութեան ճանապարհը:

Թէեւ Հարաւարական, ինչպէս որ արդէն նշուեց աւելի առաջ, որոշ արտաքին տուեալներ հիման վրայ՝ չափաւոր կոմունիստական երկրի համար է վայելում, ուրիշներ համեմատութեամբ, այնտեղ եւս հոգեմտաւոր կեանքը անկաշկանդ է՝ եւ դա, պարզ է, բացասաբար է սղղում ազատարարձ ու ազատութեան արբերի գործունէութեան վրայ, այս կամ այն չափով կանցնում նրանց ընթացքն ու դրական առաջընթացին ընտանծնելու բնատուր եռանդը: Իշխանութեան ներկայացուցիչները, առիթը ներկայանալու դէպքում, ոչինչ չեն խնայում ազատախոհներին սանձելու, մեկուսացնելով չէզոքացնելու եւ գինաթափելու ասպարէզում, երբեմն դիմելով ակնյայտօրէն արտաոց միջոցներին ու մեթոդներին:

Դրա ցայտուն օրինակն էր 1984 Ապրիլի 20ի երեկոյեան ռստիկանական ներխուժումը Բելլաբադի մի մասնաւոր քնակարան եւ այնտեղ գտնուող 28 մտաւոր

բականներին ձերբակալութիւնը, որոնք, տարիներէց ի վեր գործող ու ընդամին պաշտօնապէս հանգուրժուող իր տեսակի «Ազատ Համալսարանի» շրջանակում, հաւաքուել էին դասախօսութիւն լսելու՝ ներհարաւարական ազգային կենտոս հարցի վերաբերեալ: Պերճախօս էին եւ այդ երեկոյին յաջորդած իրադարձութիւնները, Սարայեւոյի համալսարանի 29 տարեկան դոցենտ Վոյիսլաւ Մեռլիյի դատաւարութիւնն ու ութ տարուայ ազատագրման դրականական դատաւճիռը, միւս գուգահեռ բանտարկութիւններն ու սպանակիցները, հասարակութեան, մանաւանդ մտաւորականութեան մէջ ծաւալուած յուզումները, դժգոհութիւններն ու բողոքները, Պրուսթիայի կուսակցական ջոշերէց մէկի նախաձեռնութեամբ կազմուած հոկտեբրական 309 էջանոց մեղադրական փաստաթուղթը, մօտ 150 հեղինակներն ու երկեր դատաւիւտող («Հակայնդափոխական» մեղքերի համար) ցանկը, եւ այլն: Ուրեմն, կայ կոմունիստական երկրներին յատուկ անվերապահ համահարթման միտումը՝ իշխանութեան կողմից: Եւ կայ այդ համահարթմանը դիմադրող ուժերի արթուն գիտակցութիւնը, կաշկանդումներէց դերձ մնալու ձգտումն ու մարդկային համակեցութեան ուրիշ՝ իսկապէս տանելի համակարգի հասնելու ուղղութեամբ դրսեւորուող տեւական գործունէութիւնը:

ԵՍ, ԼՈՒԻՋԻԱՆԱՅԻ ԺԱՆՆ ՔԱՍԹԻԼԸ

Այսօր, Ծրանայի ամենն լուրջ ու ճոխ գրական հանդեսներն ժկեզ կը նկատուի «Մակազիմ Լիբերթը»-ը, որուն խմբագրութիւնը կը վարէ Ժան-Փաշ Գրոլիէ:

Ընթացողին ուշադրութեան կը յանձնեջ նշանաւոր հանդէսն անցնող տարուան ժկէ թիւէն առնուած Գրոլիէի վարի գրութիւնը, որ կը շարժէ ձեր հարցերուն յար եւ նման հարցեր...

Կ'ըսեն, թէ մեռնող իւրաքանչիւր ծերունիի հետ մատենադարան մըն է, որ կ'այրի: Ժանն Քասթիլի պարագային, իւրաքանչիւր օր, որ կ'ապրի ան, իւրաքանչիւր գիրք, որ կը գրէ՝ աշխարհ մը կը վերապրի, կ'ապրի: Եւ կարելոր չէ, թէ որ աշխարհը, — կախարդական, խաժ, արկածախնդիր, կարծր կամ փափուկ նոյն ատեն, կատաղի եւ բանաստեղծական: Պայուներու Լուիզիանան, Լաֆայէթի անուջ անունով մկրտուած քաղաքները, Փոն Պրէյնը, Ալաֆայայի ճահիճները, ա'յն աշխարհը, ուր լրաբերը կը կոչուի «Օփըլուպաս», ճի'ջ այնպէս՝ ինչպէս հնդկական իրականութեան մէջ կար «Ափաշի աստղը» անուն թերթը: Որովհետեւ Ժանն Քասթիլ մեպի կը պատմէ պատմական դրուագ մը՝ իր ողբերգութիւններով, բաժանումներով, իր մենակեաց արկածախնդիրներով եւ լուսնի լոյսի իր նուաղումներով դրուագ մը, — Աքատիի մեծ արկածախնդրութիւնը:

Աքատին, իր վաղեմի առումով, Հիւսիսային Ամերիկայի այն լայնածառու մասն է, որ կը տարածուի Նոր Պրիւնսուիթի եւ Նոր Ակովտիոյ շրջաններէն անդին, եւ որուն մէջ մազը կապուած է Քէպէթի, իսկ միւսը՝ Ամերիկայի այժմու Մէյն նահանգին: 17րդ դարու սկիպը, Փուաթուի, Շարանթի, Օտի, Օսիի եւ Մէնթոնի գիւղացիները գաղթականներ կը հաստատեն այս պարսպ հողամասին վրայ, որ գրաւուած էր հնդիկ քանի մը ձկնորսներէ եւ որսորդներէ: Բայց Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ մղուած պատերազմները վայն կը վերածեն մանրուզ դրամի մը, որ ձեռքէ ձեռք կ'անցնի, մինչեւ որ, 1713ին, Իւրէլիսթի դաշնագրով կը յանձնուի անգլիացիներուն: Բայց աքատիաները կը մերժեն անգլիական խնամատարութիւնը եւ, մասնաւորաբար, ֆրանսացիներուն դէմ կռուելու կացութեան մը մատնուելու հարկադրանքը. ատոր իբրեւ հետեանք՝ 1755ին կառավարիչ Լօրանս — նպո'վք իրեն — կ'որոշէ տարագրել աքատիացիները: Այդ տարագրութիւնն է, որ աքատիացիները կը կոչեն Մեծ Խանգարումը եւ որ, անկախ նախածրագրուած բնաջնջումէ մը — բայց քանի՞ աքատիացիներ մեռան այդ պատճառով —, համարժէք է 1915ին թուրքերու կողմէ գործադրուած հայերու տարագրութեան: Իրենց ճամբորդութեան համար առանց որեւէ բան նախատեսելու, անգլիացիները, ինչպէս կ'ըսեն, կիւլանի թիապարտներուն պէս կը փոխադրեն աքատիացի այս բեկորները, որոնց կարաւաններէն ոմանք կ'երթան դէպի Պոսթըն, ուր գիւղացիները կամայականօրէն կը հալածեն զիրենք, ոմանք՝ Ճորճիա նահանգը, ու կը բախին կառավարիչին մերժումին, ուրիշներ՝ Լիբերիլետ, Քարոլին, ուրկէ դարձեալ այլուր կը ճամբուին: Անոնցմէ ոմանք կը մտածեն Լուիզիանայի մասին, երեսակայելով հոն գտնել ֆրանսական հող մը, երբ այդ շրջանը արդէն կը գտնուի սպանական իշխանութեան տակ: Այս վերջինները, ի վերջոյ, կը խմբուին պետութեան հարաւային սահմաններուն վրայ, ուր եւ կը հիմնեն Նոր Աքատին, Աքատիանան: Հաս իրենց կը միանան անոնք, որ արդէն Ֆրանսա էին եւ այրող կարօտով կը մտածէին Նոր աշխարհի մասին:

Այս պարտիզների պատմությունն ծնունդ պիտի առնէր նոր աշխարհի մը, որովհետեւ սպանացիները գոկաբաց կ'ընդունին թափառաշրջիկ զաղթականները, հողեր կու տան անոնց, արջառնէր, կը բաշտելեն անոնց կազմակերպութիւնը, կ'ընդունին իրենց լեզուն: Այս քանի մը զաղթականներն, այսօր, Լուիզիանայի մէջ, սերած է մէկ միլիոն բնակչութիւն, որուն առնուապս երեք քառորդը դեռեւս կը հասկնայ իր նախնիներուն լեզուն:

Ժանն Քասթիլի պատմած ծագման այս երկար պատմութեան ընթերցումէն կը զգացուի, որ ան իր բոլոր նեարդներով կապուած է իր երկրին արմատներուն: Բայց ինչ որ այլուր, նուազ բռնաբար շրջանակի մը մէջ, դասականօրէն աւելի եւրոպական պատմութեան մը ծիրէն ներս կրնար տեսակ մը ազգայնամոլութիւն գրգռել, հոս կը լուծուի սիրոյ եւ գուրգուրանքի մէջ, կը զգացուի երջանիկ կախարհանք մը ջուրին հանդէպ, հողին, երկինքին եւ ամպերուն, ուրականներուն եւ փայտակումներուն, հոն գոյացած ու համբերատարութեամբ կառուցուած ամէն բանի հանդէպ, աշխարհի մը, ուր մարդիկ պիտի սիրէին ապրիլ: Ժանն Քասթիլ պէտք չունի հաւատախցնելու, որ ինք երբեք պիտի չուզէր այլուր ապրիլ. ասիկա բացայայտ է:

Այսօր, Հարաւային Աշտին իր ինքնութիւնը կորսնցնելու վտանգին տակ է, որովհետեւ անիկա սկսած է կորսնցնել իր լեզուն:

Ժանն Քասթիլ, որ մօտ կէս դար ուսուցչուի եղած է հոն, իր աշակերտներուն մէջ կը տեսնէ ֆրանսերէնի ճանաչման ու գործածութեան հանդէպ աստիճանական նուազում մը: Համաշխարհային երկրորդ պատերազմը, որ կըրնար լեզուական վերածնունդին համար ըլլալ բարենպաստ առիթ մը — արքատական շատ մը պիտուներ իբրեւ թարգման գործածուեցան Միացեալ Նահանգներու բանակին մէջ, — եղաւ, ընդհակառակն, ջնջումի ժամանակաշրջան մը, երբ անգլերէնը գրաւեց առաջին տեղը: Հոս է, որ Ժանն Քասթիլ կը քանայ փրկել, կը փրկէ ինչ որ կրնայ, — ֆուլթորը, պարերը, հեքիաթները, առասպելները: Ան կը հիմնէ ընկերութիւն ընկերութեան վրայ, որպէսզի Աշտինայի մէջ ֆրանսերէնը վերստանայ իր կարեւորութիւնը: Եւ ողբերգական բան մը կայ այս կամքին մէջ եւ կայ հիանալի բան մը, նոյնիսկ եթէ ըսուի, որ իրողութիւնները թերեւս անգառնալի են: Այդ իրողութիւնները պիտի ըլլային աւելի՛ անդարմանելի, եթէ գոյութիւն չունենար Ժանն Քասթիլը: Ի՞նչ կարեւորութիւն կը ներկայացնէ այն հանգամանքը, պիտի ըսուի, որ աշատիացիները անգլերէն կը խօսին թէ ֆրանսերէն: Միայն մէկ կարեւորութիւն, բայց նկատառելի կարեւորութիւն մը: Լեզուին հետ, բոլոր քաղաքակրթութիւնները գիտեն ասիկա, ամբողջ աշխարհի մը կ'անհետանայ: Եւ լաւ չէ, որ աշխարհները անհետանան միատեսակութեան մէջ:

Բայց պէտք չէ «Ես, Լուիզիանայի Ժանն Քասթիլը» գործին մէջ տեսնել միմիայն անցեալին վրայ բարձրացած ցաւի խոպոտ երգ մը: Անիկա է՛ նաեւ, եւ, մա՛նաւանդ՝ տեսակ մը ճշմարիտ հեքիաթ, զոր Ժանն Քասթիլ կը պատմէ մեզի եւ կը դաչի մեր մանկութեան, զոր գորովագին կը պահենք տակաւին: Մէկը այն գիրքերէն, որ ազգագրական, աշխարհագրական, պատմական փայլփլումներով, խոհանոցային արհեստներով, տուներու ու մանկութեան յիշատակներով եւ մեծ մօր պատմած հեքիաթներով կ'ապրեցնէ ու կը վերապրեցնէ մեզի համար կարեւոր իրականութիւն մը: Անգիտոյ պարագային, իր նպատակին մէջ կը յաջողէր «Ապարտութեան ձին» անուն վէպը: Ես կը հաւատամ, որ «Ես, Լուիզիանայի Ժանն Քասթիլը» գրականութեան նոյն արժանէն կու գայ: Եւ ասիկա պզտիկ դրուատիք մը չէ:

ԺԱՆՔԱՎ ԳՐՈՇԻԷ



« Ա Ս Պ Ի Ն Ե Ա Կ »

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ)

Բանաստեղծութիւններու իր երկրորդ հաւաքածոյին՝ «Ոսպնակ»^(*) մէջ, ետասարգ բանաստեղծ Յարութիւն Պէրպէրեան կը շարունակէ ու կը զարգացնէ զեղարուեստական մտածողութեան այն տարրերը, որոնք ներկայ էին իր առաջին գործին՝ «Կարիգ»^(**) մէջ: Այս երկրորդ հատորը կը խմբէ վերջին աւելի քան տասը տարիներուն գրուած 47 տարբեր ծաւալի բանաստեղծութիւններ, որոնց մէկ մասը «վերամշակուած» տարբերակներն են մամուլի մէջ լոյս տեսած գրութիւններու:

Յ. Պէրպէրեանի բանաստեղծութիւնը ընդհանրապէս կը դարձանայ պատկերներու եւ տեսարաններու համադրումի եւ այդ պատկերներու եւ տեսարաններու վրայ — առանձնաբար կամ հաւաքաբար — հայեցողութեան ճամբով, իր այս ընթացքին մէջ ցուցաբերելով ընդհանուր առմամբ նկարչական տարրերու առատութիւն եւ անոնց նպատակաւոր ու դիպուկ օգտագործում: Այս գծով ուշադրու են նոյնիսկ հեղինակին օգտագոր-

ծած խորագիրները, որոնց շարքին առատորէն կը գտնենք նկարչական եւ տեսարանային տարազումներ, ինչպէս՝ «Հին լուսնակար», «Ամայք», «Նաւահանգիստի ծայրամասի աւազանը», «Պատուարը երկնաբերի մը», «Լուսնի լոյս», «Քոլած», «Եստակից անձրևի տակ», «Թռչունները պատտախմ վրայ», «Արեւադարձային դաշտանկար», «Քարաքումբեր», «Պատկերներ», «Ուղի», «Պատուարներ», «Անպատուային դաշտանկարներ» եւ «Մայրուղի»:

Բնական է, այդ պատկերներն ու տեսարանները չեն մնար ինքնանպատակ, այլ կը ծառայեն մարդկային ապրումի մը, կացութեան մը կամ կեցուածքի մը գրեւորման՝ իբրև արտայայտման ձև:

Աւագներն ամառային լճուած են: Կը կանգնիս չոր կրաղիւսին, ուրկի՛ աթոռներ տեղափոխուած են մալ սենեակներում՝ սպասումով այլ եղանակներու:

Արեւերով լիացած մարմինները կիսամերկ՝ նման գաղթող թռչուններու հեռացած են:

(*) «Ոսպնակ», 1984, Պէրպէր, Համազգայինի վաճառքի Սեբեան Տպարան, 144 էջ:

(**) «Կարիգ», 1979, Պէրպէր, Համազգայինի վաճառքի Սեբեան Տպարան, 48 էջ:

Օ, հոս լաւ է.
 եղէզներում մօտ կը նստիս
 եւ փոթորկած ծովն կը դիտես:
 Լոզաւագանը
 պարսպ է ետիդ.
 Կէտք չունիս գայն տեսնիլու.
 պարգապէս կը զգաս
 արտօտ ջուրը անձրեւի,
 դանդաղ նեխող, կազմալուծուող
 տերեւները հոն ինկած:

Խնայանքը ծալուած
 թող սպասեն
 մարմիններում կիսամերկ —
 այնտեղ աղը ծովային
 ու քրտինքը կը չորանան:
 ժանգ ու մամուռ
 կայ ձողերուն երկաթէ:

Հաս լճուած է, հոս լճուած է
 եւ դուն հոս ես:

Աւագանը
 թռչունի պէս մանաղաղ
 ծովեզերքը ինկած է:

(էջ 75, 76, *անվերնագիր այս
 քերթուածը մէջբերուած է
 ամբողջութեամբ*):

Հոս եւ այլուր կը դռններ վայելուչ
 անցում մը՝ նկարագրականէն հայեցողա-
 կանին, որ երբեմն, ինչպէս մէջբերուած
 քերթուածին մէջ, կը պարփակէ ողբեր-
 զական տարրեր: Սակայն, այդ ողբեր-
 դուքիւնն ու տապալակները ընդհանրա-
 պէս կը մնան զուսպ ու ժուժկալ վրձնա-
 հարուածներու ցանցով մը նուաճուած ու
 պայթուցիկ անշարժացումով սևեռուած,
 կարծես թելադրելու համար մարդկային
 կացութեան անշարժութիւնը եւ յառա-
 ջընիկաց շարժումի բացակայութիւնը:
 «Բանաստեղծական կերպար»ի բնա-
 ւորութեան ու կեցուածքին մէջ տիրապե-
 տող դիժը անհաշտ դիրքն է, զոր կը ճշգէ-
 իր շրջապատի «Չերմանոցային առօրեա-
 յին» դէմ, ուր կեղծ ու մաքսանենգօրէն

ներմուծուած ապրումներէն մահը կը
 ծաղկի հարիւր ձեւերով եւ կերպարը կը
 շահայ իր հարցերը պարզապէս աւելի
 անկեղծօրէն դիմադրուել:

Հոն ուր օրերս կ'անցնին՝
 անձկութիւններ նուազ չեն,
 կարելի չէ
 նաեւ օգը հորոգուած
 կամ աւելի թարմ կոչել:
 Հաս՝ պարգապէս հարցերս
 շատ աւելի անկեղծօրէն
 դիմագրաւել կը քանամ:
 Կեսնքի տարրեր ձեւ մըն է
 եւ կը փորձեմ գայն ապրիլ:

(էջ 22, «Բագաբայիսն հիւան-
 դանոցի թիւ 508 սենեակը»):

*«Բանաստեղծական կերպար»ը կամ
 բանաստեղծը իր շրջապատին հետ այս
 անհաշտ կեցուածքը կը պահէ հետևող-
 դականօրէն եւ, զայն զարգացնելով՝
 կ'որձանապէս իր ընդվզումը շրջապատին
 դէմ եւ վերջինէն խղումի յատակ տրամա-
 դբութիւն մը.*

Լաւ է իբրեւ
 հերթօրէկոս
 աղու՛տադրաշմ ֆակտիդ կրել
 եւ աքարովի,
 քան թէ փռչի շնչել անվերջ

այստեղ մնալ
 եւ համրանալ:

(էջ 82, «Սովորական խաղ մը»):

Այս կացութիւնը կը յառաջացնէ ընդ-
 հանուր լքում մը, ուր բանաստեղծական
 կերպարն ու անոր շրջապատը երկուստեք
 կը լքեն դիրար եւ կերպարը իր հողին կը
 դգայ «մթաւքեան մէջ», «Բիրթուած»,
 լճուած իւզանկարի պէս: Սակայն ան
 միշտ կը մնայ կառչած իր սեփական ու
 իւրայատուկ անշարժն եւ ձգտումնե-
 րուն, մթութիւնը փարատող «առաւօտ»

մերու այն լռյսին քեքեւ, այն ժիւս էս-
կին ժպտուն .

Քու ինքիդ միշտ ալ պիտի փնտաէ
առատոններու այն լռյսը քեքեւ,
մարմինդ միշտ ալ պիտի պահանջէ
այն միւսը ժպտուն, կշռայրով վայրի,
որ քեքարունէն այս անմահանակ
դուրս քերէ քեքի . . .

(էջ 25, անվերնագիր) :

Ժպտուն էսկը, որ բանաստեղծը աջ-
սորներէ դուրս բերող արահետ է, զայն
պարզապէս կը կամբջէ այն «աշխարհին
հետ հարարակցանք, որ կորտուած կը բը-
ւէր» :

Իսկ լռյսը կը ժաղուի բանաստեղծին
պատկերած ամայքի «նեղ լուսանցքէն»,
կը դեգերի ամէնուր, կ'անուանէ ամէն
ինչ ու կը կորսուի :

Յորքին մէջ, Պէրպէրեան կը փորձէ
սեւեռել ժարդկային դէժք մը պահելու
սիդիֆեան պայքորը ժամանակակից մար-
դուն, որ ամայքի եւ աւազուտքի մըայ
կը նշնի փորագրել ու անաղարս պահել
իր ժարդկային դիմագրիծերը, մինչ հովն
ու հողմը շեշտակի կը փորձեն ջնջել ու
հարթել բոլոր դիմագրիծերն ու հետքերը .

Պիտի փորձես
խոչափազոյ
լիցուած աւազը մաքրել,
փրկել բերանդ այս շոր
կլիմայէն աւազի,
մտնալ գիծերը աղի՝
ժամանակէն ջրային
եւ . . . խօսի՛լ կրկին :

(էջ 120, «Անպատուային
դաշտանկարներ») :

Ուրեմն, բովանդակութեան մակար-
դակէն մըայ իրրեւ առաջնահերթ հարց՝
մեզի կը ներկայանայ «բանաստեղծական
կերպարձին դժուարութիւնն ու տաղան-
պը՝ իր շրջապատին հետ ներդաշնակուե-
լու եւ շագուելու :

Մարդկային այս տաղանապալի կտ-
ցութեան բանաստեղծական արտայայ-
տութեան համար, բանաստեղծը կ'օգտա-
գործէ կարատուած պատկերներ եւ ա-
նոնց համարութեամբ «կ'երթայ այդ
պատկերներու պատառիկներէն անդին»
ու կը ձգտի «հոգեբանական փորձառու-
թիւնը եւ շրջապատի հետ յարաբերու-
թիւնը հասկնալու», ինչպէս կ'ըսէ ինք
հասարի սկզբնաւորութեան դեռեղուած
«Քանի մը արագ նախք բանաստեղծու-
թեան լուսանցքին» խորագրեալ իր յառա-
ջագրան մէջ (էջ 7) :

«Ուսպնեակն մէջ, Պէրպէրեանի ջեր-
թողութիւնը ո՛չ իմացապաշտ է եւ ոչ ալ
քնարերգական (եթէ նկատի ունենանք
այս զոյգ տարազներու դասական դար-
ձած ըմբռնումները) : Հեղինակին գլխա-
ւոր մտահոգութիւնն ու ճիշդ եղած է բա-
ցատրել, թէ ժարդկային կեանքը ի՞նչ ի-
մասաներով ու գլխաւորութիւններով գոյու-
թիւն ունի եւ ո՞ր ուղղութեամբ կը շար-
ժի, թէ արդեօք յատուկ ուղղութիւն մը
ստեղծութիւն ունի՞, եւ բանաստեղծութիւ-
նը ի՞նչ դեր կը խաղայ այս բոլորին ե-
մացումին մէջ : Թէև իրականութիւնը կը
մնայ անհասկնալի, սակայն բանաստեղծը
կը յաջողի իր մտածումն ու տաղանապա-
քը վերածել արուեստի, առանց կպչուն
ենթակայութեան գոցադրութեան, ա-
ռանց իմաստասիրական չափաբերելու տ-
սոյթներու կամ արտասոց ու բռնազրոս
պատկերներու դիմելու, ինչպէս կ'ընեն
Սփիւռքի մեր կարգ մը երիտասարդ բա-
նաստեղծները, բանաստեղծական ապ-
րումի բացակայութիւնը յիշեալ երեք
բռնաշաղկիներով ծածկելու համար :

Պէրպէրեան կը մշտէ «բանաստեղ-
ծութիւն մը, որ տեղի լուսիւններով ու
թիլադրականութեամբ կը գարգանայ,
անցումի կամուրջները կը ջնջէ», ինչպէս
կ'ըսէ ինք իր յառաջագրան մէջ, որով-
հետեւ բանաստեղծութիւնը նաեւ իր ջը-
սածով կը կազմուի, կ'ընկալուի, այսին-
քըն՝ կը պարունակէ իր բանորուն, տո-
ղերուն ու պատկերներուն միջեւ ստեղծ-
ւած ձգտութեան ալիքներ ու դաշտեր,
ուր կարելի է որոսլ կամ բռնել բանաստ-

տեղծութեան համար էական առընտրութիւններ, թելադրանքներ եւ իմաստներ, ուր կարելի է գտնել անսպառ ծաւալանք մը բանաստեղծութեան խորքերու եւ հոբելաններու:

Իր գրութիւններուն խառնիւն ու թելադրականութիւն ազանովելու յիշեալ յարատեւ ճիգով՝ երիտասարդ բանաստեղծը իր հոգեկան եւ իմացական աշխարհը կը յաղորդէ վերածնել բանաստեղծական պատկերի, որ ընդհանրապէս զուսպ ու ժուժկալ գիծերով ու դոյներով կազմուելով՝ կրնայ ընթերցողին արեւատի զգայնացնել, պրկել ու թրթռացնել: Այս ուղղութեամբ, ուրիշներու կարգին, յատկանշական է «Հաղորդութիւն» քերթուածը:

Կիսո՛ր որուն, երկար դէմքը տառապած,
էլ Կրէճայի պատաստներէն փրկուած է
եւ մարմինը հոգիւմածամն առագաստ է:

Ան կը քալէ ծովուն վրայ:
Իր այճերը ալիքներ են տըրուրեան:
Մատները՝ ձեր ճակատներուն ձգած է:

Երբ հեռանայ, կը փնտռէ
ուռնահետքերը այրած,
արթնցած էք
եւ ամէն ինչ անտանելի կը թուի:

Կիսն կը պանէ
դիմաստունները էլ Կրէճայի...

(էջ 49)

«Կարիզ»ի եւ «Տապանակ»ի Հեղինակը ինքզինք չի կաշկանդէր բանաստեղծական դասական, այս պարագային՝ տաղաչափական օրէնքներով եւ յաճախ կ'օգտագործէ տարբեր չափերու միահիւսութեամբ կազմուած «չարժական» չափը, «փոքրիկով անլի լայն շնչառութիւն տալ... բանաստեղծութեան», ինչպէս կ'ըսէինք (էջ 6):

Եւ, փաստօրէն, հատորի ամբողջ տարածքին, Պէրպլէրեանի օգտագործած

«չարժական» եւ ազատ չափերը հարազատութիւն եւ ժամանակակից հնչողութիւն հաղորդած են Հեղինակին բանաստեղծական խօսքին՝ իրենց չարժերով բնականօրէն զբաւորելով բանաստեղծական կերպարի ապրումներու բաբախումները եւ հոգեկան ելեւէջները: Պէրպլէրեան, չափերու եւ յանգերու օգտագործման մէջ իր ազատութիւնը առաւելագոյն չափով օգտագործելով՝ դիմած է նաեւ արձակով երկնուած բանաստեղծութեան ձևին, եւ հատորին մէջ զետեղած՝ «Քանթարի» անունով 12 էջոց «արձակ բանաստեղծութիւնը»:

Հատորին լեզուն հարուստ է բանաստեղծական պատկերաւոր լեզուի դիմաւոր երկու հնարքներով՝ metaphorով եւ ironyով: Հոն զետեղուած կարգ մը բանաստեղծութիւններ պարզապէս meta-phorներու անընդհատ հոսք մը կը կազմեն, ինչպէս է պարագան՝ «Կիսը՝ նման ծառի» խորագրով հետեւեալ բանաստեղծութեան.

Դուն ծառ մըն ես:

Քու վարդագոյն մերկութեան վրայ
— որ մշուշներէ կազմուած
կրաշէ է հոսուն —
տերեւներով դալար
նստեր անած են
ու երկու, մեծ
հազարափերթ՝ ծաղիկներ կան,
որոնցմէ

վաղուայ լոյսը կ'արթննայ:

Կը քանաս դուռը
եւ կը քալես
ճամբաներէ
խնդրուած՝
մեքեաներէ,
սրուակներէ գուռաւոր,
ճակատներէ վիրաւոր
եւ բառերէ անխաւս:

Համբուն ցօղեր կը կարիւն
բու մատներէն ծիածան
եւ անոնցմէ
հսկայ բոյսեր կը ծլին,

որոնք տակաւ, բազմամայով կը ծածկեն ինքնաշարժներն գունամար եւ դիակները տնթագ...

Յիշողութեան պէս բոսոր խորունկ ձայներ կանգնած են, ու ճամճոյթի արտերուն մտախուզներ լուռ կ'իջնեն:

Դուք ծառ մըն ես, որ կ'անի իմ մարմնին մէջ թափանցիկ: Աչքերուս տեղ կախարդական թռչուններ կան, որոնք վայրի պտուղներու պոչներէն արքնալով, կը թւածեն հովերուն մէջ հիւսիսի:

(էջ 45, 46)

Նոյնն է պարագան Հուաքածոյին մէջ տեղ գտած գրութիւններուն մեծամասնութեան, որոնք իբրբու հետ առնչակէց metaphorներու անմիջի գետի մը ապաւորութիւնը կը յառաջացնեն:

Իսկ օգտագործուած օրոյներուն շարքին յատկանշական է «Բանքարի» արձակ բանաստեղծութեան եզրափակիչ պարբերութիւնը.

«Կրճաք աչս բռնորը քանդել, պարտկոյնները վերցնել, ծառերը արմատախիլ ընել եւ 20 կամ 30 յարկանի շէնքեր քարձրացնել, իսկ տեղ-տեղ... քանդիչ մեքենաները անդուլ կ'աշխատին: Փռք ու սեղմ տուներ, ցած ձեղուններ, փոքր գրասենյակներ, տնտեսութեան ցերմաստիճանին մայրոց անձնուստ մայրածիւններ, հաշուարած համայններ, հաշուարած կենսակերպ...: Կրճաք սերերու կարիք չկայ: Բարձր, գեղարդէշ ծառերու կարիք չկայ, ընդարձակ, լուսամար պտուղներուն կարիք չկայ, ամառային սանձարձակ գիշերներու կարիք չկայ, եռամիս կառ-էքրու վրայ բանջարեղէն ու թարմ պտուղներ ծախող մարդոց կարիք չկայ, աղամաքսիզի փշուտ ծառերու կարիք չը-

կայ, պտաղիւններու կարիք չկայ, առանձնութեան կարիք չկայ, լուսութեան կարիք չկայ, խորհրդածութիւններու կարիք չկայ, բանաստեղծութեան կարիք չկայ: Վերջ»:

(էջ 110)

Յ. Պէրպէրեանի մշակած բանաստեղծութիւնը կը յատկանշուի նորութեամբ, թարմութեամբ եւ արդիականութեամբ: Այս բարձրին արդիւնքը կ'ըլլայ որոշ չափի բարդութիւն մը, որ ընդհանուր նշկարագիւրն է ժամանակակից արդի բանաստեղծութեան: Ինտելեկտուալ, այդ բարդութիւնը կամ բարդութիւնները կըրոնան ըլլալ բազմաթիւ մակարդակներու վրայ: Կարգ մը ժամանակակից գրութիւններու մէջ անոնք կը դրսևորուին լեզուաճանկան, շարադասական եւ տաղաչափական մակարդակներու վրայ: Անոնց կազմին կամ փոխարէն՝ բարդութիւնները կըրնան գոյութիւն ունենալ պատկերակերտութեան կամ թեմաներու կամ թոնի մակարդակներուն վրայ, եւ բարձրագոյն արժէքով գործերը բարդ են այս աւելի բարձր կառոյցներով: Ընդդէմ ծելի է, որ «Ուսկնակ»-ին մէջ հեղինակին մտահոգութիւնը եւ ուշադրութիւնը կեդրոնացած են վերջիններուն վրայ, եւ Պէրպէրեան, metaphorի եւ օրոյնի նպատակասլաց գործածութեամբ՝ յառաջացուցած է ընդհանրապէս անհատ-հատաքու-կանութիւն հակադրութեան տաղանային վերաբերող իր թեմաներուն տաղանային եւ ողբերգական բնոյթը եւ սովորական դարձած պատճառի վտանգը առարկայական մտեցումի գոպուածութեամբ հակադրուող թոն մը: Այս պարագան արդէն նշուած է հեղինակին կողմէ, զբոյնիւն յառաջաբանին մէջ, ուր ան կը հաստատէ իր ճիշդ՝ բանաստեղծութիւնը մշակելու՝ «նիւթին» հետ որոշ առարկայական հետադարձութեամբ մը՝ այնքան որ կարելի է»:

Օրինակ, «Մեկնում» խորագրով բանաստեղծութեան սկիզբը, բաժանումի մը հակայական դառնութիւնը երիտասարդ

բանաստեղծը կրնայ արտայայտել հանդարտ գնացքով, հետեւեալ քառատողով.

Ծնունդի օր մըն էր,
երբ դուն մեկնեցար,
ինչ որ հեզմակամ կամ հակասակամ
կը թուէր այնքան:

(էջ 43)

Բանաստեղծութեան այս հանդարտ գնացքն ու թոնը, որ կը շարունակուի յիշեալ գրութեան եւ ընդհանրապէս բոլոր գրութիւններուն ամբողջ ընթացքին, ոչինչ կը զեղչէ բանաստեղծութեան էութեան, այլ, ընդհակառակն, կը վերածուի բանաստեղծութեան սեւեռած բարդ ու սոււերտ երեւոյթներուն յտակութիւն ու լոյս շնորհող արժանիքի, որ միտմտակ ժամանակակից հնչեղութիւն կը հաղորդէ գրութեան:

Հոս այլեւս վաշր մըն է, ուր առանձին կամ անձնադրոշմ

հետքեր չկան:
Տե՛գ մը հողի պէտ,
որտեղ կրնայ թուփը ըլլալ,
արեւն ըլլալ,
մոր սերմն ըլլալ,
պատահաբար այստեղ հասած
տնայիշատակ հովերում հետ:

(էջ 39, «Մատուց քանի»):

Այս ընդհանուր լքուածութիւնը, քայքայումը եւ մարդկային յարաբերութիւններու մեծ բացակայութեամբ յուսկանուող այս ընդհանուր ամայքը սեւեռելու նպատակով՝ բանաստեղծութիւնը այստեղ բնականօրէն կը վերածուի գաղափարակի մը, որ կը կենայ, կը կենդանանայ որոշ երեւոյթներու դիմաց, կ'անցնի այդ երեւոյթներէն անդին՝ կարելի յստակացումի ճիգով, ապակեայ հեռաւորութեամբ մը» (ԵՔԱՅԻ մը արագ հոսքեր...», էջ 7):

ԿՈՐԻԻՆ ՇԱՀԻՆԵԱՆ

ՆՈՊԷԼԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ԵՒՐՈՍԼԱԻ ՍԵՅՖԵՐԹ

Այս տարի, Նոպելեան գրական մրցանակը ան-
գամ մը եւս կը շնորհուի բանաստեղծի մը, չի՞
նարտալու Սեյֆերթի, որ իր երկրէն դուրս գրե-
թէ ամբողջութեամբ անմահօթ կը մնայ:

Յամեայ Սեյֆերթ իր պարզեւարուցը կ'ի-
մանար հիւանդանոցի մահիկէն մէջ, որ Շուէտի
շեռքանը կու գաս Ակազեմիայի սրտումը հա-
ղորդելու եւ ըսելու, որ կը պարզեւարուի իր
քրտանսեղծութեան համար, օտուած՝ քարոն-
քետր, գրայտօրութեամբ եւ կարուստ ստեղ-
ծագործութեամբ, որ ազատագրող պատկեր մը
կու տայ մարդ Լակի անթնկնիկի ոգիին ու հիւ-
նուքեամ մտայնք:

Շարտալու Սեյֆերթ ծնած է 1901ին, աղջա-
րնանիկի մը յարկին տակ: Իր առաջին հասարակ
ճիւղով մը տրցուիներու մէջ, յոյս կ'ընծայէ
գրան արեւիկանին: Այդ արեւիկան՝ ան զարգա-
րագուտ համայնակար է, սակայն քանակական թը-
նականներուն կատարած երկու ուղեւորութիւննե-
րը դէպի Քորնելիոյ Միւսթիւն, քաւարայ կ'ը-
լան, որ դաստիարակութիւն ըլլայ ին անոր կար-
գուարքին: Իսկ երբ երկուտարը բանաստեղծը
1929ին կնքուածը կը հարկ Ստուիինի զննարու-
թեան նկատմամբ, ուրիշ վիշ գրագիրու հե-
կ'արտաշուի համայնակար կուսակցութեան շար-
ձերէն:

Միւս կողմէ՝ իր ամբարդութիւնները փա-
րիչ, որ խորագրու կ'ազդուի կիցով Ափրիկէի,
Անտրի Պըթիկի եւ զերիտալուայ բանաստեղծնե-
րու գործերէն, ասրերի հորիզոններ կը բանան
իր դիմաց:

Գտնական եւ երեսնական թուականներուն,
Շարտալու Սեյֆերթ արդէն առջնատար բանաս-
տեղծի համբաւ սննի իր հայրենիքէն մէջ: Մաս
կը կողմէ Քորնելիոյ բանաստեղծներու խմբու-
պին եւ իսկապէս յիշագրական բանաստեղծու-
թիւն կ'արտադրէ: Իսկ չըլանին՝ իրրեւ առաջ-
նից կ'ընտրէ հրատարակարութիւնը, որ կը շա-
րունակէ հացիական գրական արեւմտեան եւ կը
զրէ հայրենասիրական ոգիով բանաստեղծութիւն-
ներ, որոնք յոյս կը տեսնեն զդիմարութեան
մամուլին մէջ ու լայն ժողովրդականութիւն մը
կ'ազդուովն իրեն:

1948ին, երբ համայնակար կուսակցութիւնը
կը ստանան Անիտուզիալիոյ զնիւր, Սեյֆերթ եր-
կար տարիներ հետո կը պատուի հարաւային կեան-
քէն: Ասկայն 1956ին, Համայնակար կուսակցու-
թեան 20րդ համագումարէն ետք, Անիտուզիա-
լիոյ մէջ առաջին դասազարտողը կ'ըլլայ ստա-
լինեան արտադրներն ու ազատութեան կաշիւա-
ղումը, Լուսարեւակները իր վրայ կը սկսին կեդ-
digitised by A.R.A.R.®




ունանայ 1966ին:
Փրակայի գարունը, չի՞ ժողովուրդին նոր
'յոյսերն ու անկախութիւնները, ապա՝ անբա-
նայ խորհրդային հրատարակար Նոպելեան մէջ վե-
րիվարուելու կ'առաջնորդէ ժողովուրդին մէջ:
1970ին՝ ինք համագուն է Չարլիտու Միւսթիւն,
որ շուտով ապրիկի կը նկատուի ու կը շուտուի,
սակայն Սեյֆերթ կը շարունակէ կազմակերպել մա-
տարկաններու բազմազգի մը, որ ծանօթ է ճեպ-
տարարութիւն Դե անանով:

Յաջող աստեղծակներ՝ լուսթիւն մը կը
պարտադրուի իր տեսնին շարք: Իր բանաստեղ-
ծութիւնները եւ յուշերը կարելի կ'ըլլայ գտնել
միայն ամիզարտի, այսինքն՝ գաղտնի, մեղմու-
գրուած հրատարակութիւններու մէջ: Երեւ-
տարի առաջ միայն, Սեյֆերթի ծննդեան 90-
եակին անիթով, իշխանութիւնները թու կու տան
իր բանաստեղծական վաստակին հրատարակու-
ման կազմակերպել, որոնք շատ լայն ժողովրդականու-
թիւն կը գտնեն եւ անիթուպէս կը սպասին:

Ներկայիս Փարիզ քնակող չի՞նք ազատական
վիպասուն Միւսթիւններու իր մասին կ'ընթ-
վարելի չէ գիմէ այլախոս կոչել, սակայն, ես
տանն, ան մտղ մըն է, որ երբեք չէ համակեր-
պած: Իսկ հաւուարտ Գլուսթիւնը, որ չի՞նք
րոպիտու Միւսթիւն համագուն եղած է Փրակայի
պարնան շրջանին, եւ ներկայիս հայտու աքտորի
մէջ կը գտնուի, ճեպով գրակամ յարուածք
մէջ կ'ընէ, որ չի՞նք ժողովուրդին համար, որ եր-
կար չըլաններ կորսնցուցան է իր անկախութիւ-
նը, բանաստեղծները կը նկատուին ազգային գե-
կազմարութիւնը փոխարինողները:

Իսկ ժողովուրդին եւ մատարականներու
իսկ վկայութեամբ՝ Յամեայ Շարտալու Սեյֆերթ
նուսակողը կը նկատուի չի՞նք գրողներուն...



«ԱՄԱՉԳԱՅԻՆ»

«Բ. ԿԱՆԱՉԵԱՆ» ԵՐԱՓՈՇՏԱՆՈՅԸ

Լիբանանի ՀՀամադրային Երկուսյին Վարչութեան և Երաժշտական յանձնախումբին շանդերուն շնորհիւ՝ այս աշուն կետեղի կրօնեցաւ Վարչոյց Գանաչեանց Երաժշտանոցը, որ իր լուրջ հաւարեց խումբ ճշ արհաւուր Երաժշտագէտներ, որոնք մեծաւ ժառամբ Լիբանանի պետական Երաժշտանոցի ուսուցիչներ են:

«Բ. Կանաչեան» Երաժշտանոցը, որ ստեմամբար հաստատուեցաւ Ազգ. Հնուպարեանց վարժարանի մէջ, ներկայիս կը հաշուէ աւելի քան 50 աշակերտներ:

Երաժշտագէտներ Պաղոս Ճեյաբեան, Ռեմոնա Ճեյաբեան, Մոնա Քրիստինեան և Պելլա Էմէրեան կ'ուսուցանեն դաշնակի գլուխը, Յակոբ Կամբեան սասանձած է շոթակի դասուանդուումը, Վաչէ Պարսուճեան՝ ձայնամարդութիւնը, իսկ պիւնիզայի և Սովի՛ր՝ արիւնքի դասուանդուումը: Կան նաև կիթառի և մեծնազանակի յատուկ դասարաններ: Երաժշտանոցի ստորհնութիւնը որոշած է դասարան ճշ յատկացնել որեւէ դորնիքի ուսուցման, եթէ չորս աշակերտ ներկայանան:

Գառնը կը արտին սնահատկան թէ հասարական դրութեամբ, սակայն նախապատուութիւնը միտ ալ արուած է խմբային աշխատանքին: Դասուանդութեան պաշտօնական լեզուն հայերէնն է:

Երաժշտանոցը ունի ութամեայ երադիր, ճիշդ Լիբանանի պետական Երաժշտանոցին պէս և միևնոյն մակարդակը: Անկէպ պիտի ունենայ փոքրերու և մեծերու իր նուազախումբերը, որոնց նաև կրնան ժառ կազմել երգչիւղ և նուազչիւղ յարմարութիւն ունեցող աններ:

ՀԱՅ ԳԻՐԳԻ

ԵՐԱՊԵՐՈՒԿ ՅՈՒՏԱՀԱՆՆԵՍԸ

Երաթ, 20 Հոկտեմբեր 1924ի յամիլըրէին առջի ունեցաւ բացումը Հայ Գիրգի Եօթներորդ Յուշահանդէսին, Անթիլիասի մայրավանքին լըրնափակին մէջ, նախարահուութեամբ՝ Գարեգին Բ. Կաթողիկոսին և Կերկայութեամբ՝ բազմաթիւ մտաւարականներու, զբաղէաներու, մաքի մակերեւու, քաղաքական անձնաւորութիւններու և հա-




զարաւոր ազգայիններու: Մինչև 21 Հոկտեմբեր շարունակուող այս ցուցահանդէս-վաճառքին մասնակցեցան Համազգային, Երբակ, Տօնիկեան, Անան, Այթա-Փրեա և Կաթողիկոսարանի Հրատարակչատունները, ինչպէս նաև՝ անհատ գրողներ: Յուշադրութեան գրուած էին վերջին տարին հրատարակուած աւելի քան 500 հատոր գիրք:

Երկրոյեան հանգիստուր մամերգութենէն ետք, կատարուեցաւ ցուցահանդէսին պաշտօնական բացումը: Մայրավանքի վեհարանի մուտքի ստորհաններուն վրայ, Գարեգին Բ. Կաթողիկոսին շարք խմբուած էին միւրանները:

Վարուժան Մ. վրդ. Հերկիլեանի բացման խօսքին ետք, զպրիմաքին անները խմբորդելն «Ով մեծախանի դու լիզու» և «Որք զարդարեցին» շարականները: Ապա, արուան պատգամը փոխանցեց Գարեգին Բ. Կաթողիկոս: Կերկաներուն բարի գալուստ մաղթելէ ետք, վեհափառը հանդամարէն կատարեց Հայ Գիրգի արժեւորումը՝ հայ ժողովուրդի դոյապայտարին մէջ, և այս տարուան ցուցահանդէսին իրեն նշանաբան ճշչոյց «Հայ Գիրգը՝ հանգոյց Յաւերժութեամ և ժամանակի»:

Վեհափառին սյառգամէն ետք, Կերկայ ժողովուրդը սկսաւ ծանօթանալ ցուցադրութեան զբրուած հայերէն գիրքերուն և ըստ հետաքրքրութեան զննել անոնցմէ:

Իսկ Գիրակի 21 Հոկտեմբերին, Ս. Պատարազի մտաուցումէն ետք, Հայ Գիրգի Եօթներորդ Յուշահանդէսին շարունակման կողմին, Կաթողիկոսարանի ճիւղակէնկեանց արահին մէջ, տեղի ունեցաւ հաւաքական զրոյց մը: Խոսք առին Ջարճեմկաւ Ազնուարեան, տղթ. Բարդէն Փափուզեան և Գրիգոր Եակինեան: Եզրափակել խօսքը կատարեց Գարեգին Բ. Կաթողիկոս:



**ԼԻԲԱՆԱՆ ՈՌԵԿՈՉԵՑ
ՆԱՏԻԱ ԹՈՒԷՑՆԻԻ ՅԻՇԱՏԱԿԸ**

Պէտքով Սուրբ Քանդարանի վարչութեան նախահնուութեամբ, Հանրապետութեան նախագահ չէի Ամին Ժրմայիշի քորճը Հովանաւորութեամբ եւ պետական, քաղաքական, անտեսական, մշակութային ու գրական Հանրածառն ղէժքերտ «Ճանակցութեամբ» Ուրբաթ, 20 Հոկտեմբեր 1984ին, Լիբանան մեծ լուրով պեկուցեց իր վաղածուիկ բանաստեղծուհիին՝ Նատիա Թուէյնիի մահուան առաջին տարիները:

Հանրապետութեան նախագահը ներկայացնող նախկին նախագահ Քամիլ Շամունի եւ խորհրդարանի նախագահ Հիւսէյն Հիւսէյնի ներկայացուցել մեծը Յայնի Պապիկեանի մանակցութիւնը յատուկ գույլ մը, առաւ այս հանդէսին, որ վերածուցեալ սիրոյ, հաւատքի եւ նուիրումի պատարագի մը՝ գույսը Հայրենիքին, ամբողջական Լիբանանին, անդձարձը խաղաղութեան եւ սիրոյ ու բանաստեղծութեան զարաւոր ասանդակներու վերահաստատման ի խնդիր:

Թանգարանի վարչութեան անունով առջիկ. Լուսինայա Մելիքի արտասանած բարի գալուստի խօսքին հաջ, առաջին խօսողը եղաւ նախկին նախագահ Շարլ Հելու, որ Նատիա Թուէյնի աչիրէն էր, բանաստեղծուհիին, Հայրենասէր մայրը եւ ամբողջական լիբանանցին արարելով ներկայացնել հաջ, նոր մասնունները զարգացող Քրաններէն լեզուով՝ վեր սանելով իր Հայրենիք:

Քին եւ անոր զարաւոր քաղաքակրթութեան Հիւսէյնի լեզուով ծառայած բանաստեղծուհիին աչգային ու մարդկային ողջ հուժկունք:

Նրկորդը էլոյթ ունեցողը եղաւ այս առիթով Փարիզէն յաղագրէս եւ քանի մը ժամ առաջ Լիբանան ժամանած Քրանացի բանաստեղծ եւ հրատարակիչ Փիեռ Սեկերգի ակնկէզը, որ առաջին առիթով ցաւ յայտնեց, թէ անհանգստութեան պատճառով իր ամուսինը ստիպուած է մնալ Փարիզ եւ իր խօսքը փոխանցելու պարտականութիւնը վառուած է իրեն, Տիկին Քուէյնի Սեկերգ ընդգծեց, թէ ձկրաններէն մինչեւ Փոլ էլիւար, մինչեւ Փիեռ Խմանուէլ եւ Նատիա Թուէյնի հրատարակած իր ամուսինն Համար յատուկ արժէք կը ներկայացնէին լիբանանցի այս բանաստեղծուհիին անտիպները, որովհետեւ անոնք միշտ ալ Հանելի անակնկալներու եւ Քորճ խօսքի առիթները ընծայած են իրենց:

Ապա, նախկին վարչապետ Քաջէլասին Սուլ խօսեցաւ Ն. Թուէյնիի մանկութեան, պատանութեան, երիտասարդութեան եւ հասունութեան լրջաններուն մասին, որճէ հաջ մանրացու բոլոր դժուարութիւնները յաղթահարած ճօր եւ հայրենասէր բանաստեղծուհիին զոյճ տիպարներուն վերջալ:

Մեր մը եւ ջրով մը զգացական զեղումներով ընտրուող տիկին Չուէյնի Սուլանի քրտագը եւ լոյթին հաջ, թե՛ բարձրացու Քրանացի հոյակաւոր դերասանուհի եւ ամուսնացող տիկին ժրմայիշին Փամ, որ ամուսնացեց նմայնի վաղամեծիկ բանաստեղծուհիին ջերթողութիւնէն:

Նախալերջին խօսողը եղաւ արքա անուսի բանաստեղծ Նիկոլ Քապուանի, որուն երոյթը յազմիցս ընդմիջուցաւ յուն ծափահարութիւններով: Բանաստեղծական պատկերաւոր եւ պերճալուք ունի մը, Քապուանի կատարեց զովքը բանաստեղծուհի եւ կին Նատիա Թուէյնիի:

Ապա, թե՛ բարձրացու լիբանանցի բանաստեղծ Ունի էլ-Համ, որ խորթափունջ վերլուծութեանով եւ կենսագրական սուեայներու միջոցաւ ներկայացուց Համապատկերը Նատիա Թուէյնիի անեղծագործական ակնի քան քանամեայ կհանքին: Մահուան եւ կհանքի գոյապայտարէն մեկնելով՝ յանաստեղծ Ունի էլ-Համ վեր առաւ հոյովոյթը այն առաւպանքին, որ բանաստեղծուհիին հայտնեց Հանգրտանէ Հանգրտան՝ Ֆիդէլիտեան առաւպանքին մինչեւ ջալքարուող հայրենիքին առաւպանքը:

Երկու ժամ տեւած այս Հանգրտութեան վաղուքը կատարելով, հոյակաւոր հրապարակագիր եւ քաղաքական ղէժք Ղասսան Թուէյնի շորհալայութիւն յայտնեց բոլոր մանակիցներուն եւ ներկաներուն, որոնք կհան ակնի խորացնելու իր վաղամեծիկ կնով եւ Թուէյնի ընտանիքին սէրն ու հաւատքը՝ սիրոյ, զեղակութեան, ապաստութեան եւ Համայն մարդկութեան վերաւոր Հայրենիքին՝ վերականգնող Լիբանանի կրտամբը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏՏՏԱՆՔ

- DISSONANZE IMAGES POUR UNE CULTURE ARMENIENNE
Ռուսումնասիրություններ, Միլանո, 1984, հրատարակություն, I/COM.
INTERATIONALի:
- DOCUMENTI DI ARCHITETTURA ARMENA, № 12 — ANI
Պատկերագրող ալբոմ, Միլանո, Ares հրատարակչատուն:
- NATIONALISM AND SOCIALISM IN THE ARMENIAN
REVOLUTIONARY MOVEMENT
Անահիտ Տեր Մինասեան, Քեմպրիճ-Մասաչուսեթց, 1984, հրատարակություն՝ «Զօրեան» հաստատութեան:
- ՄԱՐԳԱՐԷՆ — բանաստեղծություն —
ձայրան հալիլ ձայրան, անգլերէնէ թարգմանեց՝ Վահէ-Վահեան, Պէյ-
րուք, 1984, տպագրություն «Թեֆնոփրես»ի:
- ԱՆԱԻԱՐՏ ՍԻՐԱՆՈՒՎԿ — պատմութեան —
Լիւսի Սիւլահեան, Երեւան, 1984, «Ազգայնական գրող» հրատարակչու-
թիւն:
- ԿԵԱՆՔԸ ԵՐԳԵԼՈՎ — նորավէպեր —
Արմէն Նայիրի, Մանրէալ, 1984, հրատարակչութիւն՝ «Dick Art Design»ի:
- «ՄԵՐԻՆ ԱՄԵՐԻԿԱՆ» — պատմութեան —
Արշակ Գազանեան, Պէյրուք, 1984, «Կ. Տօնիկեան Է. ռոզիէ» հրատարակչատուն:
- Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ - ՀԱՅՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԻ՝ ԾԱՆԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ԱՄՔՈՎՋ ՀԱՅՈՒԹԵԱՆ — ռուսումնասիրություն —
Թորոս Թորանեան, Պէյրուք, 1984, տպագրություն «Թեֆնոփրես»ի:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ա Ր Ա Գ Ի Լ

(Ալպոմ)

- Պէյրուք, 1984, Համագրայիճի «Վ. Ալթեան» տպ., 80 էջ:

Խմբագիր՝ Գ. Մեմլեան

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ 12 Լ. Ռ.
Տարեկան բաժնեցիմ 125 Լ. Ռ.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 15 Ս. Ռ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեցիմ 40 Ամերիկեան տղար

بَاكِينَة
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 المدير المسؤول
 السيد ارين كارنيك قرانيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN


Բ Ա Գ Ի Ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

— Խմբագիր —
 ԳՕՂՈՍ ՍՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամներ
 ՅԱՐՈՒԹԻՆ ԳԵՐԳԵՐԵԱՆ
 ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու
 ՎԱՇԷ ԲՐՈՒՏԵԱՆ

B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN
 Tel. 296898



تشرين الثاني ١٩٨٤